

9545

ՍԵՐՈՒ ՄԱՆՈՒՅՅԱՆ

0 14

Յ Ե Ր Ե Ժ Ի ՆՏԵՐՆԱՅԻՈՂԱԼ

3K41

Մ-28

ԽՍՀՄ-ԺՈՂ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1927

3K11
15-28

Հովհաննիսյան

DEC 2009
25 SEP 2006

ՍԵՐՈ ՄԱՆՈՒՑՅԱՆ - Կ

21/10 24 1.

Յ Ե Ր Ե Բ
Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ց Ի Ո Ն Ա Լ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԻՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1927

143
303
303

2 .06.2013

Handwritten notes in Armenian and Russian, including "ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՍ" and "1920/21".

7 4 7 7 8

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50

4840-91

Главлит № 82.440. Тираж 2.500 экз.
Типография Госиздата „Красный Пролетарий“. Москва, Пименовская, 16.

8 Ա Ն Կ

Յերկու խումբ	5
Արդյունաբերական կապիտալի ծագումը Յեփրո- պայում յեւ պրոլետարիատի դասակարգային կոխը 50—70-ական թվականներին	9
Առաջին Ինտերնացիոնալ	26
Յերկրորդ Ինտերնացիոնալ	46
Յերրորդ Ինտերնացիոնալ	72

Handwritten notes in Armenian and Russian, including "ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՍ" and "1920/21".

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Յերեք Խնտերնացիոնալ»-ը կազմելիս ինկատի յենք ունեցել ընթերցողների լայն խավերի մտավոր տարբեր պատրաստականությունն ու պահանջները և մեր աշխատությանը տվել ենք համապատասխան կառուցվածք: Հայկական քաղաքականության բնագավառում բացակայում են այնպիսի ձեռնարկներ, վորոնք կարող լինեյին ամփոփ գաղափար տալ յերեք ինտերնացիոնալների հատուկ եպոխաների սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման ընթացքի մասին. այս դեպքում լոկ ինտերնացիոնալների պատմությունը տալով, ամբողջացրած չեյինք լինիլ մեր ասելիքները:

Անհրաժեշտ ենք գտել ամենից առաջ կանգ առնել արդյունաբերական կապիտալի ծագման և դրան վորպես անմիջական ծնունդ՝ պրոլետարիատի կազմակերպման և նրա դասակարգային կռվի պատմության վրա. յերկու պատմական յերևույթներին (մեկը մյուսին լրացնող) հատկացրել ենք առանձին գլուխ, վոր ընդգրկում է կապիտալի նախնական կուտակումը, ագրարային և արդյունաբերական հեղաշրջումները, Ֆրանսիայի և Գերմանիայի արդյունաբերության զարգացման ուշացման պատճառները, հիմնական դասակարգերը և նրանց կռիվը, բանվորական մասսայական շարժումները (ընդգրկում են 50—70-ական թվականները): Բացի այդ նպատակահարմար ենք գտել

համապատասխան տեղերում ամեն մի ինտերնացիոնալի եպոխայի գլխավոր դեպքերը տալու: Որինակ. Առաջին Ինտերնացիոնալի եպոխայում հիշել ենք՝ ուսուպիական սոցիալիզմ, գիտական սոցիալիզմ, բանվորական կազմակերպությունները, Յեվրոպայի տնտեսական կյանքի դրությունը և արդյունաբերական ու առևտրական կապիտալի զարգացումը, բանվորական շարժումները և սոցիալիստական կուսակցությունները, վորից հետո տրվում է Առաջին Ինտերնացիոնալի պատմական մասը: Յերրորդ գլխում, ուր խոսվում է Յերկրորդ Ինտերնացիոնալի մասին, կանգ ենք առնում իմպերիալիզմի բնույթագրի՝ վորպես կապիտալի մի նոր ետապի և այդ շրջանի սոցիալիստական կուսակցությունների սոցիալական կազմի պատկերի վրա, վորից հետագայում առաջ յեկավ ուղորայունիզմը: Կոմինտերնի պատմության հետ կապ ունեցող խնդիրների վրա կանգ ենք առնում բավարար չափով: Այս վերջին գլուխը մենք հասցրել ենք մինչև V համագումարը: Ինկատի ունենալով, վոր մոտ ապագայում տեղի կունենա Կոմինտերնի VI համագումարը և հաշվեհարդարի կենթարկվի 7 նստաշրջաններում կատարված աշխատանքներն ու իր հեղինակավոր խոսքը կասի նաև ուրիշ միջադեպնական բնույթ կրող հարցերի մասին, ուստի նպատակ ունենք այդ բավական անհրաժեշտ նյութերը լույս ընծայել առանձին, իր ժամանակին:

Յեթե ինկատի ունենանք, վոր գրքիս ընթերցող հասարակությունը պետք է լինի մեր բանֆականերում, տեխնիկոններում, բարձր տիպի դպրոցներում և համալսարաններում սովորող ուսանողությունը, միանգամայն կարգարացվի ներկա նյութի այս ձևի դասավորումը: Ուսանողությունից զատ, ունենք նաև բանվորական լայն խավերից առաջացած՝ քաղդպրոցներում սովորող և քաղգրականությամբ հետաքրքրվող մի հոծ մասսա, վորի մտա-

վոր պահանջները չենք կարող ինկատի չառնել: Ահա թե ինչու աշխատել ենք քննական-վերլուծական կողմը գիշել պատմական ձևին՝ հավատացած լինելով, վոր նման «գիտական» մոտեցումը մեզ մեր նպատակներից կշեղեր: Այսպիսով «Յերեք Ինտերնացիոնալը» պետք է ծառայի ուսանողության համար վորպես անհրաժեշտ աղբյուր և ուղեցույց, ուսուցիչների համար վորպես ձեռնարկ, իսկ կուսակցական, կոմյերիտմիության և բանվորական լայն մասսաների համար՝ ինքնազարգացման անհրաժեշտ գիրք:

Ղեկավարվել ենք բարձր տիպի դպրոցների հասարակագիտության ծրագրներով: Ինկատի յենք ունեցել նաև մի շարք հասարակագետ ուսուցիչների դիտողություններն ու ցուցմունքները:

Ինչ խոսք, վոր վորպես նոր գործ, անշուշտ, գիրքս կուսենա իր թերությունները, և հավատացած ենք, վոր նկատված թերությունների վերացումը կկատարվի ընթերցող մասսաների աջակցությամբ և նրանց ցուցմունքներով:

29 հուլիսի 1927 թ.

Յեալթա:

Ս. Մ.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԾԱԳՈՒՄԸ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ
ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒՎԸ 50—70-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

«Մարդկային հասարակության պատմությունը դասակարգերի կռիվի պատմությունն է»:
Կ. Մարքս և Ֆ. Ենգելս.—«Կոմունիստական Մանիֆեստ»:

Ժամանակակից կապիտալիստական հասարակությունը առաջ է յեկել արդյունաբերական հեղաշրջման հետևանքով. այդ հեղաշրջումը զանազան յերկրներում տեղի ունեցավ զանազան ժամանակներում: 18-րդ դարի յերկրորդ կեսին առաջին անգամ Անգլիայում հնարվեց մեքենան, վորից հետո սկսեց առաջանալ գործարանների և ֆաբրիկաների կառուցումը:

Արդյունաբերության զարգացման հետ զուգընթաց, խորտակված ֆեոդալական հասարակարգի փլատակների վրա այնուհետև բարձրանում են յերկու նոր դասակարգեր—բուրժուազիան և պրոլետարիատը. դասակարգային այդ կատաղի հակառակորդների միջև մինչև այսօր էլ կռիվը տակավին շարունակվում է:

Անգլիային և վերապահված մարդկային տնտեսական կյանքի զարգացման ուժեղ խթանը հանդիսացալու: Մի կողմից, շնորհիվ Ամերիկայի հետ ունեցած առևտրական սերտ կապերի, Անգլիան մի տեսակ մատակարարի է միջազգային միջնորդի դեր եր խաղում՝ բավարարելով ամերիկական արտաքին առևտրի շուկային,

մյուս կողմից՝ իր գաղութներին դրաված հսկայական հարստություններից դիզված կապիտալը պահանջ է զգում տնտեսական ճակատում նորանոր նվաճումների:

Առևտրական կապիտալի աճումն ստիպեց յեւլ փնտռել դեպի Արեւելք: 1492 թ. դառնում են Ամերիկան և 1498 թ. բացում ծովային ճանապարհը դեպի Հնդկաստան: Այդ շրջանից է վեր առևտուրը դառնում և միջազգային, և 17-րդ դարից սկսած՝ նրա վրա գերիշխանությունը անցնում և Անգլիային: Գաղութային յերկրներում առևտրի մուտք գործելու արդյունքն այն յեղով, վոր թալանի յենթարկվեցին մի շարք յերկրներ: առաջացավ «նախնական» կապիտալի կուտակման պրոցեսը. կուտակված կապիտալը պահանջ էր դնում նորանոր նվաճումների: Այսպիսով, 18-րդ դարի յերկրորդ կիսին, արդյունաբերական կապիտալի զարգացման համար Անգլիայում կային բոլոր պայմանները. միջազգային շուկա, կապիտալ և բանվորական աղատ ձեռքեր:

Այդ վորոշումները յերկար չեն տևում. 18-րդ դարի վերջերին տեղի յե ունենում շոգու (վորպես շարժիչ ուժի) գյուտը, և մինչ այդ գոյություն ունեցող տնտեսական կյանքը հանում և մանր տնայնագործական (կուստար) ձևերից և դնում դյուերին ու արագ զարգացման ուղիների վրա: Բայց բուրժուազիան, պատմության հրապարակ յեղնելու իր արշալույսին հազիվ թե կարողանար հաղթահարել ազնվականությանը, յեթե չլինեիր բանվոր դասակարգը, վորի ձեռքով շատ անգամ և նա կրակից շափանակ կորզել:

«Մարդկային հասարակության պատմությունը—դասակարգային կռիւների պատմություն է», մեր մեծ ուսուցիչ Կարլ Մարքսի այս հանճարեղ բնորոշումը ավելի ցայտուն դարձնելու համար արժե, վոր մեզ զբաղեցնող մի շատ հետաքրքիր պատմական շրջանի վրա կանգ առնենք:

Յերկու հարյուր տարի առաջ Անգլիան յերկրագործական յերկիր եր իր բնորոշ ֆեոդալական հասարակական կառուցվածքով: Այնտեղ զարգացած և յեղել տնային արդյունաբերությունը, փակ տնտեսությունը. այս շրջանում գյուղացին ձմեռը, յերբ ազատ եր լինում հողային աշխատանքներից, իր ունեցած հում նյութերը ամենանախնական միջոցներով եր մշակում, իսկ քաղաքի տնայնագործ արհեստավորները, տարվա ազատ օրերին միաժամանակ հողագործությամբ եյին պարապում—կալվածատերերից կապալով վերցրած մի-մի կտոր հողի վրա:

Պարզ է, վոր քաղաքի արդյունաբերության և գյուղատնտես-

ության փոխադրաբերությունների միջև խիստ շերտավորում դեռ տեղի չեր ունեցել և քաղաքի արհեստավորը դեռ կապված եր գյուղական իրականության հետ, իսկ գյուղացին, պետք չգալով քաղաքի արդյունաբերության, ինքն իր միջոցներով եր բավարարում իր պետքերը: Հասկանալի յե, վոր թե արհեստավորին և թե գյուղացուն յերկու դեպքումն էլ շահագործում եյին ազնվականությունը և նրա սպասավոր կապալառուն, վորոնց ձեռքումն եր հողային հարստությունը: Շնորհիվ տնտեսական միջոցների հավասարակշռության, թե քաղաքի բանվորը և թե գյուղացին սուր ճգնաժամերի չեյին հանդիպում և տուանց բարգաւթյունների փակում եյին իրենց տնտեսության բյուջեն առանբացերի:

Արտադրության միջոցների զարգացման հետևանքով գյուղական տնտեսության մեջ արտադրվող հում նյութերի պահանջը մեծանում և այն չափով, վոր չափով վոր զարգանում և մեքենագործությունը: Շնորհիվ այն հանգամանքի, վոր նախկին տնայնագործները ընդմիշտ անցնում են գործարանային կյանքի և անկարող են լինում յետ նայել դեպի գյուղը, նրանց պատկանող հողերը ամբողջովին անցնում են ազնվականության, իսկ մանր հողատերը յենթարկվում և պրոլետարիզացիայի:

Իսկույն պատկերը փոխվում է, յերբ պրիմիտիվ ջուհակը փոխարինվում է մեքենայավոր ջուհակով: Մեքենայավոր ջուհակը (մի մարդ) աշխատեցնում է այնքան ճախարակ, վորքան ճախարակ գործադրելու համար, նախնական ջուհակի վրա աշխատելու դեպքում, 40 մարդու ուժ եր պահանջվում: Դյուերին արդյունաբերության ձևն առաջ է բերում վարպետների և քյարգահների ինստիտուտը, յերբ հարյուրավոր վարձու քյարգահներ աշխատում են մի տիրոջ իրավասության տակ գտնվող մեքենաների վրա: Այս քյարգահները և վարպետները ներկա գործարանային պրոլետարիատի նախատիպն են: Մեքենաների զարգացման հետ զարգացել են նաև պրոլետարիատի շարքերը—թե բանակով և թե վորակով:

Արդյունաբերության կյանքում խոշոր նվաճում տեղի ունեցավ շոգու գյուտից հետո: Շոգու գյուտը մարդկային հառաջադիմության ամենախոշոր գործոններից մեկն եր և նրան եր վերապահված հիմնովին հեղաշրջելու մինչ այդ գոյություն ունեցող տնտեսական կյանքի բոլոր արժեքները:

1781 թ. Ուատտը հնարում է առաջին շոգեմեքենան: Այս անգամ մեքենան փոխարինեց յերկու հարյուր և ավելի մարդու

գործադրած ուժին: Արտադրութեան զարգացումը պահանջեց բարելավել ճանապարհների հաղորդակցութիւնը, և 18-րդ դարի յերկրորդ կիսին կառուցում են խճուղու ճանապարհներ ու ջրանցքներ: Շուտով դուռտի հետեանքն եր նաև յերկաթուղիների կառուցումը, շոգենավային հաղորդակցութեան կանոնադրումը, վորոնք արդյունաբերութեան զարգացման ամենախոշոր խթանը հանդիսացան: Արտադրական ուժերի աճումը նպաստեց ազգային յեկամուտի ավելացման: Հարստութեան այդ ահեղի աճումը կատարվեց մասսաների աղքատացման և քայքայման հաշվին:

Քաղաքային արդյունաբերութիւնը իր մրցումով վոնչացրեց գյուղական տնային արդյունաբերութիւնը և վերջնական անկման հասցրեց: Արհեստավորական տնայնագործ դասին բուրժուազիան ստիպում է հրաժարվել իր պրիմիտիվ դադահից և մտնել գործարան, վորպես բանվոր, վորպես վարձու աշխատավոր:

Հոսանքը գյուղից դեպի քաղաքի արդյունաբերական կենտրոնները շատացնում է աշխատող ձեռքերի քանակը և իջեցնում աշխատավարձը: Վերջինս այնքան չնչին եր, վոր որվա կարիքի պակասը լրացնում էին աղքատախնամ ընկերութիւններից ոժանդակութիւն ստանալով: Ոգնութիւն ստանում էին 4 միլիոն բնակչութեան մեկ քառորդ մասը:

Մանվածքային և մանուֆակտուրային գործարաններում վորակյալ բանվորներ չէին պահանջվում, ընդունվում էին կանայք և յերեխաներ, վորոնք անհամեմատ քիչ էին վարձատրվում:

Անգլիական բանվորութեան այդ դժոխային շրջանի մասին Ֆ. Ենգելսը նկարագրում է, վոր «Ահագին քանակութեամբ անտուն բնակչութիւն եր հավաքվել քաղաքի ամենայնտընկած և կեղտոտ թաղերը: Խախտվել էին տրադիցիոն կապերը, ընտանեկան կենցաղը, բարքերի ապականութիւնը բանվորների կյանքում չտեսնված չափերի յեր հասնում»: Բանվորների ընտանիքները ապրում էին խոնավ, մութ նկուղներում, ուր տարափոխիկ հիվանդութիւններն իրենց հունձն էին անում. յերեխաները անժամանակ մեռնում էին, իսկ կանայք բռնում պոռնկութեան ճամբան:

Բանվորների ծայր աստիճան հոգահատ դրութիւնը ամենուրեք առաջ է բերում մասսայակապ հուզմունք. չարիքի արմատը համարում են նոր հնարած մեքենաները և սկսում են ջարդել, այրել գործարաններն ու ֆաբրիկաները: Մեքենաները ջարդելով, բանվորները ցանկանում էին վերականգնել անցյալի

տնտեսութեան շրջանը, յերբ նրանք նման թշվառութիւններ չէին տեսնում:

Անշուշտ դա մի հետադեմ շարժում եր, վոր առաջ եր յեկել մասսաների համար ստեղծված սոցիալ-տնտեսական դրութիւնից և դասակարգային անգիտակցութիւնից:

1812 թ. առաջին անգամ տեղի յե ունենում կտավագործների (թվով 40 հազար հոգի) գործադուլը, վոր պատմութեան մեջ վորակվում է «սովի գործադուլ», վորովհետև այդ գործադուլով իրենց ընտանիքներին նետել էին քաղցի գիրկը: Այս գործադուլը արդեն ուղղված եր մեքենատերերի դեմ:

Բանվորների աշխատանքի դժոխային պայմանները թելադրում են նրանց մտածել՝ ունենալու համապատասխան կազմակերպութիւն: Բանվորները բնագդաբար զգում էին, վոր միայն ինքնոգնութեան միջոցով կարող կլինեն իրենց թշվառ դրութիւնը բարվոքել: Բանվորական կազմակերպութիւնների բնույթը սակայն տարբեր եր. դեռ գոյութիւն չունեի դասակարգային շեշտված տնտեսական և քաղաքական դեմք: Որքանորեք զարգանում են համբարային (ցեխ) միութիւնները, այդ միութիւնները, մի կողմից, ոգնութեան են հասնում իրենց անդամներին դժբախտութեան դեպքում, մյուս կողմից՝ հետապնդում են գործադուլային խնդիրներ: Տնտեսական կյանքի զարգացման ուժեղ թափը և նրա հետ կապ ունեցող քաղաքական կյանքի անցուդարձերը բանվորից պահանջում էին գիտակից վերաբերմունք դեպի իրենց քաղաքական վիճակի տնորինումը:

Այդ իսկ նպատակով բացվել էին ակումբներ, ուր հաճախակի ըննութեան էին առնվում որվա քաղաքական խնդիրները: Այդ վոգով հասունացած բանվորական շարժումը տեղի յե տալիս ըմբոստութիւնների, մասսայական գործադուլների, — պահանջելով տիրող կիսաֆեոդալական կառավարութիւնից որենսդրական ճանապարհով բավարարելու իր տնտեսական պահանջները:

Բանվորական կազմակերպութիւնների հավատն այնքան մեծ եր, վոր կարծում էին թե տիրող դասակարգը «մարդասիրական» զգացմունքից զրդված կբավարարի իրենց պահանջները և հավասար մակարդակի վրա կդնի իրենց ու գործարանատերերին: Բայց վորքան մեծ յեղավ հիասթափութիւնը, յերբ ամենախիստ ռեպրեսիաների յենթարկվելուց հետո փակվեցին բանվորական միութիւնները, ակումբները և այն բոլորը, ինչ վոր

բանվորական բնույթ եր կրում, և լայն իրավունքներ տրվեցին բուրժուազիային:

Բանվորական կազմակերպություններն անցնում են ընդհատակյա գործնեյություն:

Բուրժուազիայի ու նրա պաշտպան ազնվականության կողմից բանվորներին հասցրած այս հարվածը զգաստացուցիչ նշանակություն ունեցավ վերջիններին համար. բանվորներն իրենց հետագա գործնեյության մի զգալի մասը թեքեցին դեպի քաղաքական պայքարը:

Պարլամենտի մի քանի անդամներ համոզում են կառավարության, վոր գաղտնի բանվորական կազմակերպությունները ավելի ֆինասակար են, ուստի և անհրաժեշտ է գտնվում բանվորական միություններին ազատություն տալը: Այս նպատակով հանգամանքը բանվորական միությունների զարգանալուն մեծ թափ է տալիս. արդյունքն այն է լինում, վոր առաջանում և առաջին անգամ Տրեդ-Ունիոնիստների ընդհանուր կազմակերպությունը: Վերջապես 1830 թ. կազմվում և ընդհանուր բանվորական միությունը—«Աշխատանքի պաշտպանության ազգային ասոցիացիա»:

Անգլիան ամենահին պարլամենտական յերկիրն է, ուր դեռ գերիշխում էին ազնվականները մի խումբ նորածին բուրժուազիայի հետ միասին: Ընտրական որենքներն այնպես էին մշակված, վոր այն ժամանակվա Անգլիայում գոյություն ունեցող յերեք միլիոն ընտրական հասակ ունեցողներից իրավունք ունեյին ձայն տալու միայն 15 հազար հոգի, վորովհետև որենքով նախատեսված կապիտալի չափին բավարարում էին միայն այդքան մարդիկ: Ինչ խոսք, վոր բացի մի բուռն հարուստներից, յերկրի ղեկավարությունից միանգամայն հեռու էին մնում բանվորները, գյուղացիները, արհեստավորները, ինտելիգենցիան և մանր ու միջին բուրժուազիան: Ահա այս հսկա ուժն էր, վոր դարձյալ, մի տասնյակ տարվա համառ քաղաքական պայքարից հետո, 1832 թ. մասնակի ընտրական իրավունք և ստանում:

Պարլամենտական այդ բարենորոգությունը հնարավորություն տվեց բուրժուազիային մասնակցել պետական իշխանության մեջ. սակայն սրա միջոցով հետագայում կատարված բարենորոգումներից (վարչական, տնտեսական և դատական բնագավառներում) մանր բուրժուազիան և բանվորությունը մոչինչ չստացան: Դեռ ավելին, հրատարակվեց նոր որենք, վորով վերացվում էր

չբավորների մասին մինչ այդ գոյություն ունեցող որենքը. այժմ սգնություն կարոտ չբավորները զրկվում էին նպաստից: Ընտրական որենքներն այս անգամ ել այնպես էին մշակված, վոր 24 միլիոն ազգաբնակչությունից ձայն կարող էին տալ միայն 930 հազար հոգի:

1932 թ. բարենորոգումից ես, այսպիսով, պրոլետարիատը հուսախաբվում է:

Ստեղծված դրությունը ստիպում է բանվորական կազմակերպություններին լուրջ ուշադրություն դարձնել նախ և առաջ քաղաքական ազատագրության անհրաժեշտ խնդրին: Տնտեսական կյանքի բարելավումը պայմանավորվում է քաղաքական իրավունքներով, ուրիշ խոսքով, բանվորությունը քաղաքական կյանքում, վորպես դասակարգ, ձգտում է իր պատվավոր տեղն ունենալ:

Բանվորական կազմակերպությունների այս ձևի հեղափոխական մտայնությունը տեսնում է մինչև 1848 թ. և նշանավոր է Չարտիզմ անունով: Լեգալ հնարավորությունները արդեն ստեղծել էին ուժեղ բանվորական կազմակերպություն, վորը առաջին անգամ հրապարակ է գալիս վորպես ձևակերպված քաղաքական ուժ՝ ունենալով իր դասակարգի քաղաքական և տնտեսական պահանջների (խարտիա), ձգտումների հարադատ արտահայտությունը:

Չարտիստների կազմակերպությունը բանվոր դասակարգի հարադատ ձգտումները կազմակերպող առաջին պրոլետարական կազմակերպությունն էր. «Ամեն անգամ, յերբ պրոլետարիատը դասակարգային գիտակցության եր գալիս և այդ գիտակցությունը նրան մղում էր դեպի քաղաքական ձևակերպումը—դա չարտիստների ժառանգությունն էր. ամեն անգամ, յերբ նա շարժվում էր—ընթանում էր չարտիստների ցույց տված ուղիներով»^{*)}: Ամեն մի չարտիստի տոմսի վրա տպված է յեղել. «Ով չի մասնակցում արտագրական աշխատանքին, նա պակասեցնում է ժողովրդական հարստությունը»:

Չարտիստների այսչափ գիտակցությունը նրանց պրոլետարական աշխարհայացքի ձևություն ու մաքրության գրավական էր:

Չարտիստների ղեկավարությամբ կազմվում է մի «Համաժողովրդական խարտիա», վորը բովանդակում է հետևյալ վեց կետից բաղկացած քաղաքական պահանջները. դեմոկրատացնել պետական իշխանությունը, կիրառել կյանքի մեջ ընդհանուր,

*) Բոտտեյն: Очерки по истории рабочего движения в Англии.

հավասար և գաղտնի ընտրական իրավունքը, յերկիրը բաժանել հավասար ընտրական շրջանների, պատգամավորների տաճեկան ընտրություն (փոխանակ 7 տարին մի անգամ), պատգամավորներին վարձատրություն տալ:

Ինչպես տեսնում ենք, չարտիստները գուտ քաղաքական հարցեր են առաջադրել, գտնելով, վոր միայն այդ միջոցով է, վոր հետագայում հնարավոր կլինի կատարելու տնտեսական նվաճումներ: Բայց նոր հասունացող բուրժուազիան այնքան ել մանկամիտ չէր, վոր իր զիրքերը հեշտությանմբ հանձնիր հակառակորդին:

Ինչպես է, սակայն, ընթանում չարտիստական շարժումը և ինչպես է նրան դիմավորում բուրժուազիան:

1836 թ. արդյունաբերական ճգնաժամը և դրա հետ կապված գործադուլությունը մասսաների մեջ առաջ են բերում ծայրահեղ չքավորություն և դժգոհություն: Պրոֆմիությունները՝ իրենց գործադուլով անդամներին ոգնություն ցույց տալով՝ սնանկության ելին հասել: Մասսաների դժգոհությունը արտահայտվում էր մի ուժեղացած ագիտացիայով, վոր մղվում էր ընդդեմ չքավորների մասին յեղած որենքի և վորը մեծ հաջողություն ունեցավ՝ ցնցելով ամբողջ յերկիրը: Միտինգներին հավաքվում էին յերբեմն յերկու հարյուր հազար հոգի:

1839 թ. փետրվարին հիմք է դրվում չարտիստական կոնվենտի (պատգամավորների համագումար), վորտեղ թեև սկզբունքային տարաձայնություններ են լինում, բայց վորոշվում է վեց կետից բաղկացած պետիցիա ներկայացնել պարլամենտին մեկ և մեկ քառորդ միլիոն ստորագրությամբ: Պարլամենտի մերժումին կոնվենտը պատասխանում է ընդհանուր գործադուլով, բայց անհաջող: Կառավարության ձեռք առած խիստ միջոցների և արդյունաբերության ժամանակավոր վերելքի պատճառով, շարժումը թուլանում է:

Չարտիստական շարժման յերկրորդ շրջանն սկսվում է 1841 թվից, պարլամենտական ընտրություններից անմիջապես հետո: Արդյունաբերական նոր ճգնաժամը, դրա հետ կապված գործադուլությունը, աշխատավարձի 15—45 տոկոս իջեցումը առաջացնում են նոր շարժում: Չարտիստները այժմ քաղաքական պահանջին ավելացնում են և տնտեսական պահանջներ.— չքավորների մասին որենքի փոփոխում, տասը ժամյա բանվորական որ և հարկերի թեթևացում: Ցերկրորդ պետիցիան յերեք և կես մի-

լիոն ստորագրություններով ներկայացվում է 1842 թ.: Բանվորները վորոշում են գործադուլ հայտարարել, պայքարելով հոգուտ խարտիայի: Դրանց միանում են և պրոֆմիությունները: Բայց կառավարական զորքերի միջամտության, բանվորական առաջնորդների վրա գործ դրած բռնությունների և արդյունաբերության վերելքի շնորհիվ—շարժումը կանգ է առնում:

Այդպիսով, չարտիստների շարժումը դադար է առնում 1842 թ. մինչև 1847 թ.: Այս թվականներում առաջացած խրդյունաբերական ճգնաժամը և 1848 թ. Ֆրանսիայում տեղի ունեցած հեղափոխությունը թեև տալիս շարժմանը Չարտիստները յերրորդ անգամն են հանդես գալիս ու նորից ներկայացնում պարլամենտին, այս անգամ հինգ և կես միլիոն ստորագրությամբ խարտիա: Չարտիստները հաջողություն չունենալով, այս անգամ պարտվում են ընդմիջու:

Չարտիստները իրենց քաղաքական պահանջները առաջադրելով՝ ջանացել են արագացնել սոցիալիստական շարժման տեմպը: «Չարտիզմն ըստ իր էյուլթյան սոցիալական բնույթ ունեցող մի յերեւոյթ է. ուղիկալ բուրժուազիայի կուսակցություն համար բավական է մի քանի սահմանադրական պահանջներ բավարարել, վոր հասնի իր նպատակին. իսկ պրոլետարիատի համար այդ վեց պահանջները միայն միջոց են, իսկ նպատակը սոցիալական հեղափոխությունն է»*):

Չարտիզմը, վորպես անդրանիկ և ամենառազմիկ քաղաքական հոսանք, անգլիական քանվորական շարժման պատմության մեջ մի գեղեցիկ եջ է բացել: Չարտիզմից հետո անգլիական բանվորական կազմակերպությունները, պրոֆմիության թեքերի տակ խաղաղ պայքար են վարել հեռու մնալով քաղաքական կյանքից:

Մինչև 19-րդ դարի սկիզբը Ֆրանսիան իր հեղափոխական շարժումներով Անգլիայի հակապատկերն էր ներկայացնում: Այն ժամանակ, յերբ անգլիական բուրժուազիան արդյունաբերական հեղաշրջման հետևանքով տնտեսական գերիշխանության գործությանմբ ազնվականությունից դուրս էր կորչում բարենորոգումներ և մոտեց գործում քաղաքական իշխանության մեջ համեմատաբար խաղաղ ճանապարհով՝ ընդհակառակը Ֆրանսիական բուրժուազիային վիճակված էր մենամարտի դուրս գալ ֆեոդալական «հին կարգերի» դեմ բռնի ուժով քաղաքական իշխանու-

*) Բ. Էնգելս.—Положение рабочего класса в Англии.

թյան գլուխ անցնելու համար։ Այդ հանգամանքը խոշոր ազդեցություն է թողնում նաև յերկու յերկրների բանվորական շարժման վրա։ Այն ժամանակ, յերբ Անգլիայում, մինչ չարտիստական շարժումը, բանվորական միությունները տնտեսական հողի վրա խաղաղ պայքար էին մղում, ֆրանսիական բանվորությունը մի շարք խոշոր ապստամբություններով ջանում էր քաղաքականապես ազատագրվելու։

Այս յերևույթը իր սոցիալական պատճառներն ունեւր։ Ֆրանսիայի ազնվական և հոգեորական արտոնյալ դասերից կազմված միապետական կարգերը հին վոգով էին առաջնորդվում։ Թագավորը՝ իրեն հայտարարելով առաջին ազնվականը պետության մեջ, համառ կերպով պաշտպանում էր բոլոր տեսակի ֆեոդալական արտոնությունները։

Վարչական գործերը յերկրում գտնվում էին նահանգապետների ձեռքին, վորոնց իշխանությունը տեղերում սանձարձակ միահեծանություն էր հասնում։ Կաշառակերությունը և գործերի ձգձգումները սովորական յերևույթներ էին։ Դատարանները ծախուռ էին։ Ազգաբնակչության վրա դրված հարկերը անհավասար էին։ արտոնյալ դասերը ազատ էին հարկերից, իսկ գյուղացիությունը և մանր բուրժուազիան տնջում էին նրանց տակ։ Թագավորի և նրա յուրայինների շռայլ ու անհաշիվ ծախսերը քայքայում էին պետական ֆինանսները։ Արտադրության մեջ գոյություն ունեցող հին հարաբերությունները խանգարում էին յերկրի արտադրական ուժերի զարգացման։ Արդյունաբերության զարգացումը առաջ չէր գնում, շնորհիվ նրա մեջ գոյություն ունեցող համբարների (ցեխ), մենաշնորհների արտոնությունների։ Գյուղատնտեսության զարգացմանը խանգարում էին ֆեոդալական մնացորդները, իսկ առևտրին—մաքսային ներքին քաղաքականությունը և մենաշնորհները։

Կաշկանդված այս բոլորով, Ֆրանսիայի նորահաս բուրժուազիան առանձին նախանձով էր նայում Անգլիայի անհամեմատ առաջադեմ կառավարության վրա և բուռն ցասումով էր արտահայտվում իր յերկրի իշխողների դեմ։ Ֆրանսիական բուրժուազիային մնում էր՝ հին վերնաշենքը քանդել և բուրժուական կարգեր ստեղծել։

Մաղաղ բարենորոգումների պայմաններ չկային։

Սակայն բուրժուազիան իր ուժերով անկարող էր իր մղած կռվում հաղթանակող դուրս գալ։ Նա պետք է դիմեր հեղափոխա-

կան ուրիշ շարժիչ ուժերի՝ գյուղացիության ու բանվորների աջակցության, վորոնց անտանելի դրությունը նրանց մղում էր դեպի հեղափոխություն՝ ազատագրվելու համար։

Բայց բուրժուազիայի «բաղցրաբարո» ժախը անզուսպ վրիժառության էր վերածվում, յերբ բանվորները հանդես էին գալիս իրենց սեփական պահանջներով։ Այստեղ նա սրի մյուս կողմը ուղղում էր դեպի իր յերեկվա «դաշնակիցները»։

Այդ մասին Ֆ. Ենգելսը՝ Կ. Մարքսի «Բաղաքացիական կռիվը Ֆրանսիայում» աշխատության համար գրած առաջաբանում ասում է. «1789 թվից սկսած Ֆրանսիայի տնտեսական և քաղաքական զարգացումը այն ուղղությամբ և տարվում, վոր վերջին հիսուն տարվա ընթացքում Պարիզում բորբոքված յուրաքանչյուր հեղափոխություն անհրաժեշտաբար պրոլետարական ապստամբության ընույթ է ընդունել։ Հաղթանակելով իր արյան գնով, այնուհետև պրոլետարիատը անխուսափելիորեն հանդես է գալիս իր սեփական պահանջներով։ Այդ պահանջները, Պարիզի բանվորների զարգացման աստիճանին համապատասխան, սովորաբար անորոշ և տարտամ էին, բայց այդ բոլոր պահանջները վերջիվերջո հանգչում էին բանվորների և կապիտալիստների միջև յեղած դասակարգային հակադրության վոչնչացման մտքին։ Թե ինչպես պետք է այդ տեղի ունենա, այդ նրանք չգիտեին, բայց պահանջը, թեկուզ անորոշ ձևով, գոյություն ունեցող հասարակակարգի համար իր մեջ արդեն վտանգ էր պարունակում։ Այդ պահանջը ներկայացնող բանվորները զինված էին և կառավարող բուրժուազիայի հանդեպ։ Առաջնակարգ մտահոգությունը—բանվորներին զինաթափ անելն էր։ Այդ պատճառով էլ բանվորների կողմից կատարված ամեն մի հեղափոխության հաղթանակին հետևել է նոր պայքար, վորը բանվորների պարտության մեջ վերջացել»։

Յերկրի իրական տեղը դառնալով, բուրժուազիան ստեղծեց իր դասակարգային գերիշխանության մարմինները։ Մի շարք լիբերալ որենքներով վերացնում է հին կարգերը, վորոնք արդյունաբերական կապիտալիզմի զարգացմանը խանգարող էին։ հանդիսանում։ Չի մոռանում նաև հրատարակել մի որենք, վորը վերացնում է բանվորական միությունները, գործադուլները և սահմանում խիստ պատիժներ այդ որենքները խախտողների համար։ Բանվորների դրությունը սակայն վոչնչով չփոխվեց։ Մոշոր ձեռնարկներում բանվորները շարունակում էին աշխատել

15-ժամ, իսկ փոքրերում՝ 17—18 ժամ: Աշխատանքի պաշտպանութեան որոշմանը գոյություն ունեւորւում էր զործադրվում կանանց և յերեխաների աշխատանքը: Աշխատավարձը շատ ցածր էր: Հետագայում արդյունաբերական ճգնաժամներին բանվորները տառապում էին գործազրկությունից, արդյունաբերության մեջ մեքենաների մուտքը՝ տնայնագործ արհեստավորների աշխատանքը անարժեք դարձնելով, փողոց դուրս շարժւեց նրանց մասսաներով, պակաս չէր դեպի քաղաքները հոսող անգործ գյուղացիների թիվը: Այս շրջանի գործազրկության մասին Լուի Բլանը պատմում է. «Գործազուրկ բանվորները, քաղաքի հրապարակներում խռնված, մերկ, քաղցած անիծում էին մեքենաները, վորոնք իրենց ձեռքից խլել են աշխատանքը»: Ֆրանսիայի բանվորներն ևս, կարծելով թե իրենց թշվառության պատճառը մեքենաների մուտքն է արդյունաբերության մեջ, սկսում են նույն յետադեմ շարժումը, ինչ վոր տեսանք Անգլիայում: Պետք է շեշտել, վոր Ֆրանսիան արդյունաբերական հեղաշրջումն ապրեց (մեքենաների մուտքը)՝ նապալիոնի կառավարության որոշ և հետագայում միայն (1815—1830 թ.) ավարտեց իր դերը՝ լայն անպարեզ տալով կապիտալիզմի առաջխաղացմանը:

Չնայած տիրող դժվարին պայմաններին, տնայնագործ արհեստավորների մոտ աշխատող քարգահները շրջանում այդ ժամանակ գոյություն ունեւորւում էին ընդունության ընկերություններ, վորոնք համաբարային նեղ ընույթ էին կրում: Սրանք ժամանակի ընթացքում սինդիկատների վերածվեցին: Գոյություն ունեւորւում էին այսպես կոչված «Ընդդիմադրական դրամարկղներ», վորոնք և ղեկավարում էին գործադուլները: Չնայած գործադուլները հետապնդվում էին, սակայն շատ անգամ հաջողվում էր նրանց անցկացնել:

1830 թ. հեղափոխությունից հետո բուրժուազիայի և պրոլետարիատի միջև սկսվում է դասակարգային խոհական պայքարի շրջան:

Չնայած այս հեղափոխությունը պրոլետարիատը իր ուսերի վրա տարավ և իր արյան գնով վերջնականապես տապալեց կալվածատերերի ու խոշոր հողատերերի իշխանությունը, սակայն նա չունեւոր իր կազմակերպությունը և դասակարգային ինքնագիտակցություն: Վորպեսզի իր հողթանակները հասցնեւ մինչ հանրապետական կարգերի և ընդհանուր ընտրական իրավունքների հաստատումը: Գահի վրա բարձրանում է տիպիք բուրժուա Լուի

Փիլիպը, վորը թագավորում է 1830—1848 թ.: Բանվորների առաջին մասսայական շարժումը բռնկվեց Լիոնում 1831 թվին:

Այստեղ 40 հազար քարգահներ և 10 հազար վարպետներ անողոր կերպով շահագործվում էին 800 կապիտալիստների կողմից: աշխատում էին որական 18 ժամ, ստանալով մեկ ֆրանկ (37 կ.) աշխատավարձ: Քյարգահների և վարպետների գործադուլը գործարանատերերի դեմ փոխվում է ապստամբության: Նրանք հսկայական խմբերով, մարտական նշանաբանների տակ դուրս են գալիս հրապարակ, կառավարական զորքերի մի մասը անցնում է ցուցարարների կողմը և գործադուլը փոխվում է ապստամբության: սակայն կառավարական զորքերը, ոժանդակ ուժեր ստանալով, կարողանում են ճնշել ապստամբներին: 1834 թվին Լիոնում տեղի յե ունենում յերկրորդ ապստամբությունը, վորը նույնպես խեղդվում է:

Ֆրանսիական բանվորների ազատագրական շարժման այս առաջին փորձերը համոզում էին նրանց, վոր ուժը միություն մեջ է. առաջ են դալիս մի շարք վոչ ձևակերպված բանվորական կազմակերպություններ, բանվորներն սկսում են մասնակցել զաղսնի ընկերություններին, վորոնց ղեկավարում էր արմատական ինտելիգենցիան. այդ ընկերությունները նպատակ էին դրել ապստամբության միջոցով Պարիզում իշխանությունը վերցնել, հանրապետական կարգեր մտցնել՝ ընդհանուր ընտրողական իրավունքով և սոցիալական բարենորոգումներով:

Բուրժուական խավերից դուրս յեկած մի քանի գաղափարախոսներ իրենց նվիրում են ֆրանսիական բանվորների շահերի պաշտպանության և իրենց տարբեր սոցիալիստական մոտեցումներով պայքարել բուրժուազիայի դեմ: Այդ մտավոր ուժերը (Բաբեուփ, Սեն-Սիմոն, Ֆուրյե, Բլանկի, Պրուդոն, Լուի Բլան), վորպես բանվորական շարժման վերածննդի շրջանի գաղափարախոսներ, բանվորների ուժերի գորահավաքման և նրանց դասակարգային խնդիրների լուսաբանման ասպարիզում խոշոր դեր են կատարել: Այդ մտավոր շարժման շնորհիվ սկզբնավորվում է բանվորական մամուլը, հեղափոխական գրականությունը, և վերջապես հիմք է դրվում պրոֆմիություններին:

50-կան թվականներին կապիտալիզմի զարգացումը, քանի զնում սրում էր հակամարտությունը իշխանության դուրս կանգնած ֆինանսական բուրժուազիայի և բուրժուական դասակարգի մյուս բոլոր խավերի միջև:

Պրոլետարական խավերի դժգոհութիւնը սաստկանում էր տիրող հասարակական կարգերի դեմ:

Պարլամենտի լիբերալ ընդդիմադիրները պայքար են սկսում հոգուտ ընտրական բարենորոգումների, կազմակերպում են բանկիրներին՝ նրանց միջոցով կառավարութեան վրա ճնշում գործ դնելու համար: Յերբ կառավարութիւնը արգելում է այդ, բանկիրները, բանվորական մասսաները դուրս են գալիս փողոց: Փողոցային ցույց-բողոքը տարեւրային կերպով վեր է ածվում հեղափոխական ապստամբութեան (1848 թ. փետրվարի 22—24): Հեղափոխութիւնը զահնկեց և անում սեպտեմբերի 1-ին Փիլիպթապազմորին, բայց, Ազգային ժողովը, վորը՝ ոգտագործելով բանվորների ուժերը՝ բուրժուական կառավարութիւն էր հռչակել հեղափոխութեան հաղթանակի հետեյալ ուրը, բանվորների դեմ կատաղի հալածանք է սկսում: Այս անգամ ևս բանվորներն ընդունում են մարտահրավերը և անցնում Պարիզի փողոցների բարիկադների յետեւ: Ապստամբ մասսաները չունեյին վոչ ղեկավարներ և վոչ էլ կազմակերպութիւն, բայց կովում էյին կատաղի կերպով: Այդ կովին մասնակցում էյին նույնիսկ բանվորների կանայք և յերեխաները:

Բանվոր դասակարգի հոգու խորքում ամբարված դառն վրիժառութիւնը դուրս էր ժայթքել. նրանք բաջաբար դիմադրում էյին կառավարական գերագանց ուժերին: Բանվորները պահանջում էյին՝ «հաց կամ արճիճ», իսկ մի շարք բանվորական կոչեր պահանջում էյին՝ «ղեմոկրատական և սոցիալիստական հանրապետութիւն»:

«Բանվորների վրա կրակում են զորքերը. բանվորներն հինգ սպանվածների դիակներ դնելով սայլերի վրա, ջահերով լուսավորված, «վրիժառութիւն, կոտորում են ժողովուրդին» կոչելով պատեցնում են փողոցներում և ապստամբութեան կոչ անում: Իսկույն փողոցներում բարիկադներ են պատրաստվում, զորքի շարժումները դժվարացնելու նպատակով բոլոր ծառերը կտրտվում են, փողոցներում կոտորած ապակիներ են ցանվում և այլն: Կայսրի անդրին, դուրս հանելով, վառում են. զահը վերցնելով իրենց հետ, թափորով պատեցնում են փողոցներով և մարդաշատ տեղերում գետնին դնում ու վորպես ամբիոն ծառայացնելով, բարձրանում վրան և ճառեր արտասանում»:

Վերջապես բուրժուազիային հաջողվում է պատրաստել հուսիսյան նախճիրը և խեղդել ապստամբութիւնը: Կ. Մարքսը հու-

սիսյան հերոսների հիշատակին արտասանած իր մի ճառում ասում է. «Պարիզի բանվորների ապստամբութիւնը թշնամութեամբաց ուժերով խեղդված է, բայց չի վոչնչացված. բանվորները ջաղված են, բայց նրանց թշնամիները՝ հաղթված: Յեվ յերբ բանվորները յերկրորդ ապստամբութեան նախապատրաստական շրջանին հասնեն, այդ դեպքում Յեվրոպային փնում է տեղից ցատկել և աղաղակել. «Դու հրաշալի յես փորում, հինավուրց խլուրդ»:

Միահեծանութեան արեցած զորաշարքերի «բաջութեան» արդյունքն այն է լինում, վոր սպանում են յերեք հազարից ավելի բանվորներ և 12—14 հազար էլ արքորում են ֆրանսիական գաղութները:

Այսպիսով վերջանում է ֆրանսիական բանվորութեան բաղաբական հերոսամարտի առաջին շրջանը, վորպեսզի տասնյակ տարիների դադարից հետո նոր թափով հրապարակ գար 1871 թ. աշխարհի բռնակալներին ցույց տալու իր հսկա ուժը, միութեան անհաղթելի վոգին և նրա հաղթական յերթը պատմութեան ճամբին:

Իսկ ի՞նչ դրութեան մեջ էր Գերմանիան, վորը բոլոր տվյալներն ուներ իր հարեաններից յես չմնալու:

Գերմանիան բավական ուշացել էր Անգլիայից և Ֆրանսիայից: Այն ժամանակ, յերբ արդյունաբերական կապիտալը հիշյալ յերկրներում նվաճումներ էր անում, Գերմանիան դեռ խաբիսափում էր իր տնայնագործական (կուստար) տնտեսութեան մեջ այդ դրութիւնը տեեց մինչև 19-րդ դարի կեսերը: Այդ յերեւոյթների պատճառներից զխափորը յերկրի 36 վարչական ինքնուրույն միավորներ ունենալն էր: Չնայած վոր Գերմանիան կառավարում էր կայսրը, բայց զանազան իշխանների իրավասութեան տակ գտնվող՝ մեր մի նահանգից քիչ հողամաս ունեցող «յերկրները» կայսրին չեյին յենթարկվում. ամեն մեկն էլ դրանցից իր ներքին կյանքում իր վարչաձեւն ուներ: «Յերկրներին» միջև գոյութիւն ունեցող մաքսային և դրամական սիստեմը նորագույն արդյունաբերական ձեերին անցնելուն արգելք էր հանդիսանում:

60-կան թվականներին մանր արհեստավորների մոտ աշխատող քարգահների թիվը, չնչին լինելով, մի առանձին ուժ չեր ներկայացնում իր դասակարգային կովի ասպարիզում. նույնը կարելի յէ ասել շատ թույլ շարքեր ունեցող բուրժուազիայի մասին, վորը տիրող աղնականութեան դեմ անկարող էր վճռական կով մղել:

Իսկ ինչ վերաբերում ե գյուղացիութեան, մինչև 19-րդ դարի սկզբները նրանք աղնավականների հովանու տակ ճորտատիրական շրջանի կախման մեջ էին: Կառավարութիւնը, իրեն ուժեղ զգալով, 1814 թվին գյուղացիների մեծ մասից հողերը խլում և հանձնում ե աղնավականներին: Այսպիսով, հողագուրկ գյուղացիները կամ անցնում են քաղաքները՝ նվիրվելու գործարաններին, կամ թե մնում են հողոտների մոտ, վորպես բատրակ: Գերմանիայի մի քանի կետերում միայն գոյութիւն ունեյին մանվածային, բրդեղենի, մետաքսեղենի գործարանային արդյունաբերութիւնը, չուգունի ձուլարաններ, մեքենայինարարական գործարաններ, վորոնց մեջ աշխատողները յերկրի արդյունաբերական պրոլետարիատն եր կազմում: Հետագայում հեղափոխութեան սնուցանող ոջախը այս գործարաններն են լինում, վորտեղից և հրապարակ են գալիս մի շարք բանվոր-ղեկավարներ:

Սակավաթիվ գործարանների արտադրութիւնները բավարարում էին Գերմանիայի ներքին շուկայի պահանջները: Բացի այդ, Անգլիայից և Ֆրանսիայից ներմուծված գործարանային արտադրանքները ավելի արժան գներով մրցում էին Գերմանիայի արտադրութեան հետ: Գերման բուրժուազիան պահանջում ե կառավարութիւնից «հովանավորյալ» որենքներ հրատարակել՝ հայրենական արդյունաբերութեան զարգացմանը զարկ տալու համար:

Արդյունաբերական հեղաշրջումը Գերմանիայում սկսվում ե 40-ական թվականներից: Արդյունաբերական զարգացմանը նպաստում էին «յերկրների» միջև ստեղծած մաքսային միութիւնը և յերկաթուղու ճանապարհներ անցկացնելը (առաջին անգամ 1835 թ.): Աճում ե ակցիոներական ընկերութիւնների թիվը: Զարգանում ե նաև արտաքին ու ներքին առևտուրը:

Արդյունաբերական զարգացման հետ միասին զարգանում ե և պրոլետարիատը:

Վերջինիս գլխավոր մասը կազմում էին տնայնագործները և արհեստավորները: Սակայն բանվորների շահագործումը չափ ու սահման չունէր: Բանվորները այստեղ ել իրենց դժբախտութեան պատճառը սկզբում վերագրեցին մեքենաներին, ու խռովութիւնների ժամանակ քաղցած մնալով՝ ջարդում էին մեքենաները: Այդ շարժումներից մեծը Սիլեզիայի ջուլհակների 1844 թ. ապստամբութիւնն եր, վորի ազդեցութեան տակ «Սիլեզիայի ջուլհակների» յերկրից Կ. Մարքսի մոտիկ բարեկամ, հայտնի բանաստեղծ Ֆրեյլին Գրատը, խոսքն ուղղելով կայսրին, յերգել է.

«Վոչ մի ուժ չի կարող մահացու հարված տալ այն հեղափոխութեան, վորը բուն ե դրած ամեն մի խրճիթում, այնտեղ, ուր անվում ե կարիքի ահալոր տնքոցը, արհեստանոցում, վորտեղից լսվում ե ծանր մուրճի շփնդը... Թող դահիճները բանվոր դասակարգին դեպի հսկա դամբարանները մղեն... Մի որ, խորտակելով կայսերական գահերը, բանվոր դասակարգը կաղաղակ ե լուր ամբողջ աշխարհի—«Յես յեղել եմ, կամ յեմ հաւատել կլինեմ»:

Սիլեզիայի ջուլհակների ապստամբութիւնն ամենաանողոր կերպով խեղդվում ե՝ տալով հսկայական զոհեր: այնուհետև, տնտեսական հողի վրա, Գերմանիայի դանազան մասերում մի քանի տարի տեղութեամբ մի շարք նման խռովութիւններ են տեղի ունենում:

1848 թ. ֆրանսիական հեղափոխութեան ազդեցութեան տակ, Գերմանիայի բուրժուազիան, միանալով պրոլետարիատի հետ, ապստամբում ե և ձեռք բերում լիբերալ բնույթով սահմանադրութիւն: Նոր որենքներով վերացվում են ֆեոդալական ուժի մնացորդ ճորտատիրական կարգերը, բանվորներին տրվում ե ընտրական իրավունք:

Բանվորները այդ հնարավորութիւնից ոգտվելով, գործարանների միջոցով վորոշ չափով թեթեացրին իրենց դրութիւնը: սահմանվեց 10 ժ. բանվորական որ, մի շարք արդյունաբերական ճյուղերում ավելացավ աշխատավարձը և ստեղծվեցին պրոֆմիութիւններ:

Սակայն բուրժուազիան հետագայում, յերբ իրան բավականին ուժեղ զգաց, մինչև 50-ական թ. սահմանափակեց սահմանադրութեամբ նախատեսված իրավունքները: Սկսվում ե ռեակցիայի շրջանը: Այս պայմաններից ոգտվում ե գլուխ են քարձրացնում մանր բուրժուական գաղափարախոսները, վորոնք իրենց ներկայացուցիչ Շուլցե Դելիչի բերանով արհեստավորներին խորհուրդ են տալիս՝ պահպանել իրենց համբարական դիրքերը և հեռու մնալ «պրոլետարական ժանտախտից»:

Բայց արդյունաբերութեան զարգացման շնորհիվ արդեն այդ թվականներին արդյունաբերական պրոլետարիատը մի պատկանելի մեծութիւն եր կազմում (մեկ և կես միլիոն):

Այդ հսկա բանակը կազմակերպելը հերթական խնդիր ե դառնում:

Այսպիսով, յերբ նոր կազմակերպված բանվոր դասակարգը հրապարակ ե իջնում յերկրի քաղաքական կյանքին ակտիվ մասնակցութիւն ցույց տալու, պետական իշխանութեան դեկը անցնում ե նույնպես նոր զարգացող բուրժուազիայի ձեռքը... Յեկ պատմութեան բեմ են յելնում յերկու, իրենց շահերով հակադիր դասակարգեր—բուրժուազիան և պրոլետարիատը:

ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

«Թող տիրապետող դասակարգները սարսափեն կոմունիստական հեղափոխությունից.—պրոլետարները վաշխն չունեն կորցնելու, բացի իրենց շղթաներից. բայց հաղթելու դեպքում կտիրանան ամբողջ աշխարհին...» «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»:

Կ. Մարքս և Ֆ. Ենգելս.—«Կոմունիստական Մանիֆեստ»:

Խոսք ար-
դյունաբե-
րու թյան
նվաճում-
ները:

1848 թ. հեղափոխությունը և հեղափոխական շարժումները ճնշվելուց հետո Յեվրոպայի սկսում է ապրել ռեակցիայի մի ամբողջ ժամանակաշրջան. սակայն ուժեղ չափով և չտեսնված թափով առաջ է գնում կապիտալիզմի զարգացումը: Մորանում ու լայնանում են համաշխարհային շուկան և առևտուրը: Դրա հետ միասին արագ կերպով զարգանում են և բանվորական կազմակերպությունները:

Արդյունաբերական կապիտալը տնտեսական սովոր կապ է ստեղծում տարբեր յերկրների միջև: Այժմ ամեն մի յերկիր չի բավարարվում լուկ իր յերկրում արտադրած նյութերով: Իր դործնելության ասպարեզը լայնացնելով, կապիտալը մուտք է գործում այն յերկրները, ուր ավելի պարարտ հող կա զարգանալու: Այսպիսով՝ «խոշոր արդյունաբերությունը, պոկվելով իր անգլային հիմքից, յենթակա յե դառնում միջազգային շուկայի, միջազգային աշխատանքի բաժանման որենքներին»*:

Սոցիա-
լիստ-ուժո-
պիսունքը:

Ֆրանսիան դեռ իր արդյունաբերական զարգացման մեղրամիսն էր ապրում, յերբ հանգես յեկան յերկու խոշոր սոցիալիստ-ուսուպիստներ—Սեն-Սիմոն (1750—1825) և Շարլ ֆուրյե (1772—1837):

Ժամանակի այս յերկու խոշոր դեմքերի ուսմունքն ընդգծում էր կապիտալիստական նոր կարգերի բացասական կող-

* К. Маркс и Ф. Энгельс. Коммунистический Манифест.

մերը և առաջարկում՝ անցնել ավելի բարձր հասարակական ձևերի, վոր հիմնված պետք է լինին արտադրության միջոցների ընդհանուր սեփականության վրա: Ձգտելով սոցիալիզմի թաղափորության, նրանք գտնում էին, վոր մարդկային նյութական և հոգեկան անսպառ հարստության ուժը անգամ խեղճերին կտանի դեպի հավասարություն: Մի յերրորդ հայտնի ուսուպիստ՝ անգլիացի Ռոբերտ Ուլենը (1771—1858) իր ուսմունքի հիմնական տարր համարում էր այն բոլորին, ովքեր տուժել են նոր զարգացող կապիտալիզմից: Ուլենը գտնում էր, վոր մարդու բնավորության դաստիարակությունից և նրա կենցաղային պայմանների բարելավումից է կախված կյանքի առեղծվածների լուծումը: Սոցիալիստ-ուսուպիստները նոր կարգերի շարժումը չեյին կապում պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ, այլ հենվում էին քարոզի կամ առանձին սոցիալիստների կազմակերպման վրա:

Այս յերեք խոշոր ուսուպիստները մի ընդհանուր կողմ ունեն—այդ այն է, վոր իրենց չեյին տրամադրում պատմականորեն զարգացող պրոլետարիատի շահերին: 18-րդ դարի ֆրանսիական փրիստոփայի նման նրանք ևս աշխատում էին մարդկության վերածնունդի դարաշրջանն սկսել ամբողջ մարդկության և վոչ թե տվյալ հասարակական դասակարգի ազատագրությամբ*: Ուսուպիստների սոցիալիզմը պայմանավորվում էր յերեք հիմնական սկզբունքներով—բացարձակ ճեմարսությամբ, գիսակցությամբ յեվ ուղղամտությամբ:

Ուսուպիստների իդեյական խարխափումները մեզ համար հասկանալի կլինի, յերբ ծանոթանանք այդ դարաշրջանի մի հսկա գիտության ձևակերպմանը և նրա դավանանքին: Այդ գիտությունը հետազայում հասարակական գիտությունների կոթողը հանդիսացավ իր մեծ հիմնադիրների՝ Կ. Մարքսի և Ֆ. Ենգելսի հոյակապ մտքի արդյունքներով:

Պատմության մատերիալիստական ըմբռնումը, կապիտալի ծագման և զարգացման որենքները և սոցիալիստական հեղափոխության գործնականը—այս Մարքս-Ենգելսյան փրիստոփայության հիմնական կետերը: Մենք տեսանք, վոր ուսուպիստների թեորիան պատմական տնտեսական պայմանների խորը ուսումնասիրությունից միանգամայն հեռու յե:

Սոցիալիստ - ուսուպիստները ըննադատության են յեն-

* Ф. Энгельс. Развитие социализма.

Կ. Մարքս
յեվ
Ֆ. Ենգելս:

Թարկում կապիտալիզմը, բայց նրա դրական ու բացասական կողմերն ու հետագա ընթացքի ելությունը չեյին հասկանում: Բուրժուազիայի և պրոլետարիատի ակնբախ շերտավորումն ու անընդհատ դասակարգային պայքարը առաջադրում են մի կարևոր խնդիր—ուսուցման սիրելի այն յերևույթների պատմա-տնտեսական ընթացքը, վորոնց շնորհիվ ստեղծվել են այդ դասակարգերը: Մարքս-Ենգելսյան ուսուցման սիրույթյունը հանգում է այն յեզրակացութայն, վոր «մարդկային հասարակութայն պատմությունը դասակարգային կոնֆլիկտի պատմություն է»: Նյութական հիմքը և գոյութայն կովի որենքն է, վոր նախնական կոմունիզմից սկսած և հետագա պատմութայն ընթացքում—առաջ են բերել հասարակութայն մեջ դասակարգեր:

Մարքս-Ենգելսյան դավանանքը (վորը բերված է «Կոմունիստական Մանիֆեստում») պատմութայն մատերիալիստական ըմբռնմանը ավելացնում է և հավելյալ արժեքի տեսությունը՝ կապիտալի աճման որենքներով և պրոլետարիատի աշխատանքի շահագործման ձևերով հիմնավորված:

«Պատմութայն մատերիալիստական ըմբռնումով—ամեն մի հասարակական կյանքի զարգացման հիմքն են կազմում տնտեսական հարաբերությունները և դրանից առաջացած դասակարգային պայքարը: Պատմական շրջանի ամեն մի հասարակութայն մեջ նյութերի բաշխումը, նրա հետ և դասակարգերի կամ դասերի կազմակերպվելը կախված է այն բանից, թե ինչ է արտադրում այդ հասարակությունը և ինչպես են փոխանակվում արտադրված նյութերը: Արանից հետևում է, վոր սոցիալական յերևույթների հիմնական փոփոխություններն ու բաղադրական հեղաշրջումները տեղի չեն ունենում մարդկանց ուղեղներում կամ նրանց քիչ թե շատ չափով հավիսեմական նեւաբնութայն յեվ ուղղամտութայն ըմբռնման հետևանքով, այլ արտադրութայն ձևերի ու փոխանակութայն կարգի փոփոխությունների պատճառով: Ուրիշ խոսքով—չարիքը չպետք է վորոնել փլիսոփայութայն մեջ, այլ տվյալ պատմական շրջանի տնտեսական պայմանների մեջ: Ենգելսն այս բոլորն ուղղում է ուսուցիտներին, վորոնք ճգնում էյին ապացուցելու, վոր «գիտակցությունն է բնորոշում մարդու կեցությունը»: Նույն հարցի մասին Լենինը ասում է. «Եթե մատերիալիզմը գիտակցությունը կեցությամբ է բացատրում, ապա՝ այդ սկզբունքը կիրառելով մարդկային հասարակութայն նկատմամբ,

կատացվի այն, վոր հասարակական գիտակցությունը հասարակական կեցությամբ է բացատրվում»:

Ուրեմն մարդկային հասարակութայն պատմական կյանքի յերևույթների հիմքը կեցությունն է, նրա նյութական հիմքը: Մարքսի համար հասարակական կյանքի իմաստը շարժման մեջ է, ամեն ինչ շարժվում է անկախ նրանից—այդ նկատելի յե, թե վոչ. հակաշարժումը դարձյալ ստեղծում է նոր շարժում, անվերջ շարժում*:

Անհատը գործիք է պատմութայն ընթացքի. կոլլեկտիվ ուժն է, վոր ստեղծում է տնտեսական կյանքի արժեքները: Պրոլետարիատը այն ուժն է, վորը, շնորհիվ դասակարգային կովի ընթացքի, պետք է տիրող դասակարգի դեմ մղվելիք կովում ավանգարդ հանդիսանա: Այդ տեսակետից առաջին անգամ պրոլետարիատին Մարքսը ցույց տվեց դասակարգային կովի ուսմունքը. «Մարքսի հանճարեղությունը նրանումն է, վոր նա ամենից շուտ է հանգել այն յեզրակացութայն, վոր ուսուցանում է միջազգային պատմությունը. այդ յեզրակացությունը դասակարգային կովի ուսմունքն է» (Լենին):

Բուրժուական դիկտատուրային հակադրելով պրոլետարական դիկտատուրա, Մարքսն ապացուցեց, վոր վոչ մի սոցիալատգրություն ձեռք չի բերվել առանց արյան և առանց կովի բուրժուական և վոչ մի յերկիր դեռ վոչ մի գիջում չի արել իր հակառակորդ դասակարգին առանց համառ կոնֆլիկտի: Այդ հաստատվում է նրանով, վոր պրոլետարիատի մինչ այսոր տարած հաղթություն հերքը գնված են միլիոնավոր թանկագին զոհերի գնով: «Այն բոլորը, ինչ վոր ստեղծված է մարդկային հասարակութայն ջանքերով—ասում է ընկ. Լենինը—նա (Կ. Մարքսը: Ս. Մ.) ըննադատորեն վերամշակել է, անանց վորեւ կետ մոռանալու: Այն, ինչ մարդկային միտքն է ստեղծագործել, նա վերամշակել է, յենթարկել է ըննադատութայն, փորձել է բանվորական շարժումների բովում և այն յեզրակացություններն արել, վոր բուրժուա-

* Ոգտվելով առիթից, պետք է նկատենք. Վ. Վահանյանի և Դր. Տ. Միմոնյանի խմբագրությամբ լույս տեսած՝ ընկ. Լենինի «Մարքսի և մատերիալիզմի մասին» աշխատութայն հայերեն թարգմանությունը միակ լրիվ հրատարակությունն է, վոր հայ ուսանող ընթերցողներին ծանոթացնում է. Կ. Մարքսի հետ մեր Մեծ ուսուցիչ Լենինի բերանով: Արժեքավոր են մանավանդ ընկ. Վահանյանի նախաբանն ու «Ծանոթությունները»: Բայց չենք կարող մեր ցավը չհայտնել այն մասին, վոր նման մի արժեքավոր գործ շատ անհաջող է խմբագրված:

կան շրջաններին և բուրժուական նախապաշարունակներին յենթակա-
մարդիկ անկարող էյին այդ անել: Մարքսի ուսմունքը ամենա-
ուղիղը, հետեւաբար և ամենաոռութեղն է: Այդ ուսմունքը բովան-
դակալից է և անսայթաք, և մարդկանց տալիս է անահավա-
տության, յետադիմության և բուրժուական ճնշման պաշտպա-
նության հետ յերբեք չհաշտվող մի ամբողջական աշխարհայացք»
(Լենին):

Գիտենք, վոր Անգլիան, շնորհիվ մի շարք առանձնահատուկ
պայմանների, արդեն 19-րդ դարի սկզբներին արդյունաբերական
զարգացման նորմալ պայմաններում եր գտնվում: Նրա նավերը,
կտրելով ովկիանոսները, թագավորում էյին համաշխարհային շու-
կայի վրա:

Անգլիան դառնում է «համաշխարհային գործարան» մա-
նականդ 1850—1875 թվականներին, յերբ արդյունաբերությունը
այնքան եր զարգանում, վոր տեղական բանվորական ուժը չե-
բավականացնում: Հսկայական ոգուտներ ստանալով, անգլիական
բուրժուազիան իր բանվորներին հեշտությամբ զիջումներ եր
անում: Այդ յուրահատուկ պայմաններում է դառնալով ան-
գլիական բանվորական շարժման ձեւը — Տրեդ-Ունիոնիզմը: Ան-
գլիայի հասարակական մտքի զարգացումն ել, վոր պայմանավոր-
ված եր յերկրի տնտեսական կյանքով, պարզ է, վոր պիտի զար-
գանար տիրող դասակարգի շահերի թելադրությամբ: Զարտիստ-
ների պարտությունից հետո, մինչև 60-ական թվականները, յերբ
սկզբնավորվում են սոցիալիստական կուսակցութայունները, Ան-
գլիայում գոյութայուն ունեցող պրոֆմիտությունները (Տրեդ-Ունիոն-
ներ) գտնում էյին, վոր ստեղծված քաղաքական պայմաններում
բանվորների դրության բարելավումը, նույնիսկ տիրող պետական
որենքների սահմաններում, առանց վորեւ քաղաքական յեկույթի,
հնարավոր է պայքարի «խաղաղ» ձեւով: Պրոլետարիատի կռիվը
միշտ պայմանավորվում եր փոխադարձ զիջողությամբ և հեղափո-
խական թափը տեղի յեր տալիս «համաձայնողական» քաղաքա-
կանության:

Քաղաքական բնագավառում Տրեդ - Ունիոնները ձգտում
էյին միայն պաշտպանել իրենց արհեստակցական նեղ շահերը,
չմտածելով անգամ ինքնուրույն քաղաքականութայուն ունենալու
մասին:

Ռենեգատ Կ. Կաուցկին, յերբ դեռ հետեւողական մարքսիստ
եր, նկարագրում է այդ շրջանի հասարակական մտայնութայունը

այսպես. «Մտավորականներն ու բարձրացող դասակարգի առաջա-
վոր ղեկավարները սկզբունքային տեսակետից քրիստոնեյու-
թյունը, ազնվականութայունը և միապետութայունը չէյին բացա-
րում. նրանց կուսակցութայունները լայն ծրագրեր չէյին ցուցա-
դրում. նրանք չէյին աշխատում իրենց գաղափարները իրենց
տրամաբանական վերջավորության հասցնելու, և փոխանակ լայն
ծրագրերի, նախապատմութայուն էյին տալիս աննշան գործնական
միջոցներ ձեռք առնելուն, վորոնք թվում եր թե այդ մոմենտում
ավելի բան ոգտակար էյին:

Սահմանափակ հասկացողութայուն և յետադիմութայուն, առ-
որյա քաղաքական մանր աշխատանքների գերագնահատում և
հետագա հեռանկարների բացասումն — ահա այն մտայնութայունը,
վոր այն ժամանակ բոլոր դասակարգերի մեջ տիրողն եր:

1857—1858 թ. թ. արդյունաբերական ճգնաժամից հետո
արդյունաբերական կենտրոններում առաջ են գալիս Տրեդ-Ունի-
ոնների մշտական խորհուրդներ: Այդ ժամանակ բանվորական
շարժման գլուխն են կանգնում պրոֆմիտությունների առաջնորդ-
ներ՝ մեխանիկ Ալլանը, հյուսն Եպլզարտը և կոշկակար Ուոթերը,
վորոնք ձգտում էյին Տրեդ-Ունիոններին մասնակից անել տալ
քաղաքական պայքարին և վորոնք խոշոր դեր կատարեցին Առա-
ջին Խնտերնացիոնալի կազմվելու գործում:

60-ական թվականների սկզբում Անգլիայում մի տեսակ
սթափում է առաջանում, վորի գլխավոր պատճառներից մեկը
Ամերիկայում նեղերի ապստամբության պատճառով առաջացած
պատերազմն եր: Ամերիկայի բամբակի արտահանության խան-
գարումը Անգլիայում ստեղծում է արդյունաբերութայուն ճգնաժամ,
վորի հետևանքով անգործութայուն են մատնվում հազարավոր բան-
վորներ: Վերջապես այդ ընդհանուր դժբախտութայունը բանվորնե-
րին գիտակցութայուն բերելով, հիշեցնում է չարտիստների կող-
մից կառավարութայուն ներկայացրած ընտրական իրավունքի պա-
հանջը, վորը իր ժամանակին կառավարութայունը մերժել եր:
Տրեդ-Ունիոնների արթնացմանը նպաստու են նաև Փրանսիայի
և Գերմանիայի հեղափոխութայուն պարտութայունից հետո Լոնդոն
ժողովված զանազան հեղափոխականներ, վորոնց կենտրոնական
դեմքերից մեկն եր նաև Կ. Մարքսը: Տրեդ-Ունիոնները քաղա-
քական ցույցեր են կազմակերպում և վողջունում խաղաղական
հայտնի հեղափոխական Գարիբալդիին. բողոքի միտինգ են նախա-
ջեռնում ցարի դեմ՝ Լեհաստանի ապստամբութայունը խեղդելու

Սրափման
օրջան:

պատճառով և հետո առաջին միջազգային բանվորական միութեան նախաձեռնողը հանդիսանում:

ԴՐՈՒՅՈՒՆՆԵՐ ՓՐԱՆՍԻԱՅԻՆ: Այն ժամանակ, յերբ անգլիական Տրեդ-Ունիոնները սթափված, միջազգային բանվորական միութեան սկզբունքներն յեն արծարծում, ֆրանսիական բանվորական շրջաններում մուտք եյին գործում Պրուդոնի և Բլանկիի դավանանքները, վորոնք ֆրանսիական հեղափոխութեան մեջ նշանավոր դեր խաղացին:

Մանր բուրժուազիայի տիպիկ ներկայացուցիչ Պրուդոնը վոչ թե հասարակական կյանքի կատարելագործված ձևերին եր ձգտում, այլ—վերադարձ դեպի հինը, իր լիցեալը մանր արհեստավորների ասոցիացիայի մեջ եր տեսնում: Պրուդոնի համար ոտար եր դասակարգային կռիւի հասկացողութեանը, նա դեմ եր վորեւե քաղաքական պայքարի. նա համոզված եր, վոր խաղաղ տնտեսական կռիւը ամեն ինչ կտա: Պրուդոնի դեմ խիստ ըննադատութեամբ հանդես ե գալիս Բլանկին, վորը պահանջում ե իշխանութեան բռնադրաման և դիկտատուրայի սկզբունքի կիրառումը: Պրուդոնիոտների և Բլանկիստների պայքարը բավական սուր կերպարանք ե ստանում գլխավորապես բանվորական վերին շերտերում և վոչ մի համակրութեան չի արժանանում բանվորական ներքին խավերում, վորովհետեւ այդ դադափառներն անհարազատ եյին սրանց:

Ռեակցիայի դեմ կռիւելու համար առաջադիմական բուրժուազիական բանվորներին կազմակերպեց, ասելով՝ վոր բանվորները իրենք պետք ե իրենց ոգնեն («ինքնոգնութիւն»):

Այդ պալիտատիվ միջոցները չեյին կարող բավարարել բանվորներին, և սկսվում ե բանվորների անգատագրումն բուրժուական գաղափարախոսութեան ազդեցութեանից:

Գերմանիայում Ֆ. Լասսալի ջանքերով առաջին անգամ կազմակերպվում ե «Գերմանական ընդհանուր բանվորական միութեան», վորի լոզունգն եր «Ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրողական իրավունք»: Լասսալի նպատակն եր, վոր բանվոր դասակարգն ընդհանուր ընտրողական իրավունքի միջոցով ազդել որենադրական որդանների Վրա՝ ոգնելու բանվորական արտերնին, վորոնք ժամանակի ընթացքում արտադրութեան միջոցների տերերն են հանդիսանալու: Բացի այդ նա գտնում եր, վոր աշխատավարձը «յերկաթյա որենք» ունի, վորի համաձայն կապիտալիստական հասարակարգում բանվոր դասակարգի դրութեան բարեկալութեան անհնար ե. այստեղից և հանգում ե այն հեղափո-

խական յեղրակացութեան, թե կապիտալիզմը անհրաժեշտ ե տապալել: Դրա համար ել Լասսալի «սոցիալիզմը» պետական սոցիալիզմ ե անվանվում: Սակայն այդ հանգամանքը չի խանգարում, վոր նա գերմանական բանվորական սոցիալիստական կազմակերպութեան հիմնադրի պատվավոր անունը կրի իր վրա:

Բանվորների շրջանում մի այլ հոսանք, Ա. Բեքելի և Վիլհելմ Լիքքենբախի ղեկավարութեամբ, 1863 թ. կազմակերպում ե «Գերմանական բանվորների միութեանների միութիւն» ինքնազարգացման ընկերութիւնը, վորը, մի առժամանակ կապ պահանջելով ռադիկալ դեմոկրատների հետ, «Կոմունիստական Մանիֆեստը» լույս տեսնելուն պես ընդունում ե գիտական սոցիալիզմը և այսպիսով կանգնում մարքսիստական տեսակետի վրա: Այնուհետեւ, 1869 թ., Եյդնախի համագումարում, բանվորական շարժման նույն առաջնորդների ղեկավարութեամբ, հիմք ե դրւ վում «Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցութեան» (Եյդնախցիներ):

Պարզ եր, թե նոր հրապարակ յեկած մարքսիզմին ինչպիսի ջանքեր եյին հարկավոր՝ պայքարելու նեղ գործնական շրջանակում խարխափող անգլիական Տրեդ-Ունիոնների, մանր բուրժուական անարխիզմով տարված Պրուդոնի, Լասսալի «Պետական սոցիալիզմի» և այն բոլոր «սոցիալիստական» հոսանքների դեմ, վորոնք ժառանգութիւն եյին անցյալից:

1846 թ. Կ. Մարքսը ապրում եր Բելգիայի Բրյուսել քաղաքում, ուր ստեղծել եր բանվորական մի կազմակերպութիւն՝ «Ինքնազարգացման բանվորական միութիւն» անունով: Այդ միութեան բջիջների ներկայացուցիչները կենտրոնական կոմիտե յեն կազմում և Լոնդոնում տեղի ունեցած կոմիտեների առաջին համագումարում կազմակերպում են «Կոմունիստների Միութեանը»: Միութեան նպատակն եր՝ «բուրժուազիայի տապալումը, պրոլետարիատի գերիշխանութեան հաստատումը, բուրժուական հասարակութեան հին, անտագոնիզմի վրա հիմնված դասակարգերի վոչնչացումը և առանց դասակարգերի ու առանց մասնավոր սեփականութեան նոր հաստատութիւն հիմնելը»: Բայց այսքանը դեռ բավական չեւ: Հարկավոր եր բանվորական միջազգային միութեան սկզբունքները ավելի ձևակերպել, ավելի հիմնավորելույն թվի նոյեմբերին գումարված յերկրորդ համագումարում մասնակցում ե նաև Կ. Մարքսը, վորն առաջին անգամ հրապարակ ե նետում «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» ռազմական լոզունգը:

Գերմ. սոց. դեմ. կուսակց. հիմնադրումը:

Գերմ. բնդ-հաճութեան քանդ. միութիւնը:

Միջազգային բանվճարային և ֆինանսական օրգանը:

1848 թ. փետրվարին լույս է տեսնում Կարլ Մարքսի և Ֆ. Ենգելսի կազմած «Կոմունիստական Մանիֆեստը», վորը հետագայում դարձավ միջազգային պրոլետարիատի դավանանքը, նրա դասակարգային կռիվն ուղեցուցը: Շնորհիվ միջազգային ռեակցիայի, ընկերության գործնականությունը 1825 թ. դադարում է:

Բայց առաջին խոսքը ասված էր. բանվոր դասակարգի անտեսական դրությունը միատեսակ լինելով, նրանց հեղափոխական շարժումները և կռիվն ձևերը մեկը մյուսի շարունակությունը հանդիսանալով, Անգլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում արդեն ստեղծվել էր ընդհատակյա գործողությունների միակերպություն: Յեվրոպայի բանվորությունը բնագոյմամբ զգում էր այդ միության անհրաժեշտությունը: Դեռ 60-ական թվականներին, անգլիական բանվորների մի դիմումը (ուղղված Ֆրանսիական բանվորներին) պարզում է միջազգային բանվորական միությունն ունենալու անհրաժեշտությունը. այդ դիմումը վերջանում է այսպես. «Ժողովուրդների յեղբայրությունը անհրաժեշտ է հենց իր աշխատավորության շահի տեսակետից: Ամեն անգամ, յերբ փորձում ենք պահանջել կրճատելու մեր աշխատանքի ժամերը կամ ավելացնելու աշխատավարձը, կապիտալիստները մեզ սպառնում են Ֆրանսիական, գերմանական կամ բելգիական բանվորներին հրավիրելով, վորոնք ավելի քիչ վարձով կարող են մեր աշխատանքը կատարել: Դժբախտաբար կապիտալիստների այդ սպառնալիքը շատ անգամ իրականություն է դառնում: Ինչ խոսք, վոր Անգլիայից դուրս բնակվող բանվոր ընկերների չար կամքը չէ, վոր թելադրում է նման դեպքերում մեր տեղերը գրավելու, այլ այն, վոր միջազգային վարձու բանվորների մեջ բացակայում են կանոնավոր կապեր: Այստեղ տեղական պատճառներից միայն մեկն է բերված, վորով անհրաժեշտ է համարվում բանվորության միջազգային միության իրականացումը. բայց քաղաքական շարժումների կյանքում միջազգային այդ միությունն ավելի քան անհրաժեշտություն է, վորի բացակայությունը հեղափոխական գործին ֆլաստներ բերեց զբոսավորապես Ֆրանսիական հեղափոխությունների տարիներում:

Ինչպես նկատեցինք, Լոնդոնը համարվում էր հեղափոխական խմորումների ոջախ: Այնտեղ էլին հավաքվում բոլոր յերկրների և ժողովուրդների հեղափոխական տարրերի պարագլուխ եմիգրանտները: Այդ հանգամանքը դյուրացնում էր անգլիական բանվորությանը հաստատելու ցանկալի ծանոթություններ և այդ

կապերի շնորհիվ էլ հող պատրաստելու ապագա միջազգային միությունը պաղափարի իրադրման համար:

Մի վերին աստիճանի հաջող դեպք արագացրեց յերկու գլխավոր յերկրների՝ Ֆրանսիայի և Անգլիայի բանվորության հանդիպումը: Նապոլիոն յերրորդի և դեմոկրատական ընդդիմադիրների միջև տեղի ունեցող պայքարի շնորհիվ, Նապոլիոնը, ցանկանալով բանվորությանը յուր կողմը դրավել, բանվորական ներկայացուցիչներին թույլ է տալիս պետական հաշվով գնալու Լոնդոնում 1862 թ. տեղի ունենալիք համաշխարհային ցուցահանդեսը դիտելու: Ի պատիվ Ֆրանսիական բանվորության, անգլիական բանվորները կազմակերպում են միորյա «Միջազգային յեղբայրություն» տոն և ցանկություն հայտնում ստեղծել երոպական բանվորության միություն: Այդ որն ունենում է վճռական նշանություն և հետագա կապը քանի գնում, ամրանում և այդ յերկու գլխավոր ինդուստրյալ բանվորների միջև:

Մի տարի անց, 1863 թ., Լեհաստանի ապստամբությունն անողորմ կերպով ճնշվում և ցարի կողմից: Այդ դեպքը առիթ է ծառայում Յեվրոպայի բանվորական մասսաների բողոքի ցույցեր կազմակերպելու: Ամենախոշոր ցույցը տեղի յե ունենում Լոնդոնում, ուր մասնակցում է նաև Ֆրանսիայի հատուկ բանվորական պատգամավորությունը: Այդ ցույցը առիթ է ծառայում կրկին յրոշուր: անգամ հրապարակ դնելու միջազգային բանվորական միության պաղափարի վերջնական լուծումը և այդ նպատակի համար կազմված հատուկ կոմիտեն՝ կոչակար Ոջերի գլխավորությամբ՝ մի կոչ-դիմում և ուղղում Ֆրանսիական բանվորության. այդ կոչի մեջ յ միջի այլոց շնորհակալություն է հայտնվում ուսական ցարի դեմ բողոքի ցույցին մասնակցելու համար և մատնանշվում է միջազգային բանվորական միություն կազմակերպելու անհրաժեշտության վրա: Կոչը Ֆրանսիական բանվորության վրա ունենում է խոշոր ազդեցություն և իսկույն հատուկ պատգամավորություն են ուղարկում Լոնդոն՝ ընդառաջելով դիմումին: 1864 թ. սեպտեմբերի 28-ին Լոնդոնում տեղի յե ունենում այդ առթիվ հրավիրված միտինգը, ուր ընդունվում է բանաձև՝ կազմակերպելու միջազգային բանվորական միություն: Ընտրվում է քսան մեկ հոգուց մի կոմիտե և սրան հանձնարարվում կազմելու այդ միության ծրագիրն ու կանոնադրությունը: Կոմիտեի անդամներից մեկն է լինում Կարլ Մարքսը:

Ինտերնացիոնալի ծրագրի և կանոնադրության նախագիծը

Ինտերնացիոնալի ծրագիրը և կանոնադրությունը:

կազմում է Կ. Մարքսը և ներկայացնում ընկերության գլխավոր խորհրդին, իսկ հետո—Առաջին Ինտերնացիոնալի առաջին համագումարին, վորը տեղի ունեցավ 1866 թ.: Այդ նախագիծը համագումարի կողմից ընդունվում է շատ աննշան փոփոխություններով, վորի հիմքը կազմում էյին դասակարգային կռիվը և պրոլետարիատի ազատագրումը բուրժուական լծից: Թե ծրագրերը և թե կանոնադրությունը վերջանում են նույն լոգունով, ինչպես «Կոմունիստական Մանիֆեստ»-ինն է—«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»:

Կանոնադրության մեջ ասված է, վոր «բանվոր դասակարգի ազատագրումը կարող է նվաճել միայն ինքը բանվոր դասակարգը»:

«Վոր պայքարելով իրենց ազատագրման համար, բանվորները պիտի ձգտեն վոչ թե նոր արտոնություններ ու մենաշնորհներ ստեղծելու, այլ բոլորի համար հավասար իրավունքներ ու պարտականություններ հաստատելու և վերացնելու դասակարգային ամեն տեսակի տիրապետություն»:

«Վոր բանվոր դասակարգի տնտեսական հպատակեցումն արտադրության գործիքների միահեծան տերերին, այսինքն՝ ֆինանսական բոլոր աղբյուրների տերերին, հանդիսանում է ստերկության բոլոր ձևերի գլխավոր պատճառը, սոցիալական վողջ չարիքի, հոգևոր ամբողջ այլասերման և բանվոր դասակարգի բաղադրական հպատակեցման պատճառը»:

«Վոր բանվոր դասակարգի տնտեսական ազատագրումը հանդիսանում է այն մեծ նպատակը, վորին պիտի ստորադասվի ամեն բաղադրական շարժում, վորպես միջոց»:

«Վոր այդ նպատակին հասնելու համար բոլոր ձգտումները մինչև այժմ մնում էյին ապարդյուն այն պատճառով, վոր արհամարհել են յերկրների զանազան պրոֆեսիաների բանվորների միջև պակասում եր համերաշխություն և զանազան յերկրների բանվորների միջև բացակայում եր եղբայրական միաբանություն»:

«Վոր աշխատանքի ազատագրումը, հանդիսանալով վորպես վոչ տեղական և վոչ ազգային խնդիր, այլ սոցիալական, շոգափում է շահերը բոլոր յերկրների, վորտեղ գոյություն ունի արդի հասարակական կազմը, և իր լուծման համար պահանջում է ամենից առաջավոր յերկրների տեսական ու գործնական համագործակցությունը»:

«Վոր Յեվրոպայի արդյունաբերական յերկրների արդի բան-

վորական շարժման միաժամանակ վերածնունդը, մի կողմից՝ առաջացնում է նոր հույսեր, մյուս կողմից՝ լուրջ կերպով նախազգուշացնում է չկրկնել հին սխալները և պահանջում է անմիջական միություն մինչև որս իրար հետ չկապված շարժումներին»:

Մարքսը, դիտակցելով, վոր բանվորական կազմակերպություններն իրենց խայտառղետ կառուցվածքով դեռ հեռու են մարքսիզմի գաղափարական իմաստն ըմբռնելուց, թե կանոնադրությունը և թե մանիֆեստը կազմել է այնպիսի զգուշությամբ, վոր մանր բուրժուական մտայնության մեջ դեռևս խարխափող մասսաներին չվախեցնի նորակազմ Ինտերնացիոնալից: Պրուլետիատներն ու բլանկիստները ֆրանսիական բանվորների վրա խոշոր ազդեցություն ունեյին և այդ հանգամանքը պետք է հաշվի առնվեր: Բայց Մարքսն իր հմուտ մոտեցումով այդ զիջումն արել է առանց մագաչափ անգամ ֆլասեղու իր հիմնական սկզբունքներին: Ինչպես այդ հաստատում է Ինտերնացիոնալի ներսում հակամարքսիստական հոսանքների դեմ Մարքսի մղած հետադա պայքարը:

Իր ակտիվ կազմակերպչական գործնեյությունը Մարքսն սկսեց Ինտերնացիոնալի առաջին կոնգրեսի նախորդակից: Այդ շրջանում, Տրեդ-Ունիոնների ընտրական իրավունքների լայնացման ոգտին մղած պայքարում, Ինտերնացիոնալը ուժեղ մասնակցություն հանդես բերեց, գրավելով նրանց բուռն համակրությունը, վոր անհրաժեշտ եր Ինտերնացիոնալի հետագա գործնեյության համար:

Շատ կարճ ժամանակի ընթացքում Ինտերնացիոնալը խոշոր հեղինակություն է ձեռք բերում բոլոր յերկրների բանվորների շարքերում: Ինչպես այսօր միջազգային պրոլետարիատը և ճնշված գաղութային ժողովուրդները իրենց զսպած վրիժառության ըրպեններին իրենց թշնամիներին սպառնում են Կոմունիստական Ինտերնացիոնալով, նույնպես և Առաջին Ինտերնացիոնալի շրջանում, բուրժուազիայի անզուսպ շահագործման զոհերը սպառնում էյին Ինտերնացիոնալով: Ահա, թե ինչ է պատմում Վ. Զասուլիչը իր «Միջազգային ընկերության ուղուադժեք»-ում. «Զնայած նորմանդիայի կտավագործը կամ Բելգիայի անխահատը միացել են առանց Ինտերնացիոնալի նպատակները կարդալու, բայց և այնպես այդ քայլը նրանց կյանքի մեջ մտցրել է շատ նորություններ, ստիպել է նրանց մտածելու, զգալու սարսափեցուցիչ բաներ: Այն բանվորը, վորը իր մանկությունից իրեն

Ինտերնացիոնալի լայնաբեր-դեռութիւնը:

Ինտերնացիոնալի ազդեցութեան մասին վրա:

գրացել է մենակ, առանց նույնիսկ միևնույն ջարքերում աշխատող ընկերոջ վորեւ աջակցութեան, այժմ Ինտերնացիոնալի շնորհիվ զգում է, վոր ինքը իր նման միլիոնավոր բանվորների հետ է, նրանց աջակցութեան և ոգնութեան յենթակա. առաջին անգամն է, վոր զգում է, թե իր «հայրենակից» գործարանատերը շատ ավելի հեռու յի իրենից, քան հեռվում ապրող Շոտար բանվորը: Նույնիսկ այն յերկրներում, ուր դեռ մուտք չեր գործել Ինտերնացիոնալը, բանվորներն իրենց տերերի հետ ունեցած վեճի ժամանակ կատաղած ասում էին. «Ե՛հ, կոստանք մինչև կգա Ինտերնացիոնալը. նա մեզ համար մի տեսակի մեսսիա յեւ»: Գործադուլներին ցույց տված իր բարոյական և նյութական լայն աջակցութեամբ, Ինտերնացիոնալը բանվորութեան համար արդեն մի ուժ էր, վոր հակադրվում էր բուրժուազիային: Միջազգային կամ յերկրային բնույթ կրող քաղաքական և տնտեսական վորեւ լուրջ խնդիր չի յեղել, վորի անթիվ Առաջին Ինտերնացիոնալը իր ձայնը բարձրացրած և ուղիներ ցույց տված չլինի:

Կոնգրեսները յեւ
Բնութագրում
առնված
հարցերը

Առաջին Ինտերնացիոնալն ունեցել է վեց կոնգրես (ժընև-վում—1866 թ., Լոդանում—1867 թ., Բրյուսելում—1868 թ., Բազելում—1869 թ., Հաագայում—1872 թ., ժընևում—1873 թ., և յերեք կոնֆերանցիա—յերկուսը Լոնդոնում 1865 և 1871 թ. և մեկը Ֆիլոզոֆիա 1876 թ.):

Առաջին Ինտերնացիոնալի մեջ կազմակերպված միջազգային բանվորութեան թիվը ճիշտ հայեցի չէ. Ինտերնացիոնալի թըշնամիները չափադանցում են այդ թիվը և հասցնում մեկից մինչև 7 միլիոնի: Ինտերնացիոնալի Պարիզի սեկցիայի դատավարութեան ժամանակ դատախազը պնդում էր, վոր թիվը 810 հազար յե յեղել: Կոնգրեսում մասնակցել են 22 սեկցիաներից և 11 հարող ընկերություններից ներկայացուցիչներ: Հաստատվում է կանոնադրությունը, ընկերության են առնվում հետևյալ հարցերը.— արհեստակցական և կոոպերատիվ շարժման, 8 ժամյա բանվորական օրվա, յերեխաների աշխատանքի, ուսական միապետութեան՝ Յեվրոպայի վրա ազդեցություն ունենալու դեմ պայքարի մասին, մշտական զորքը վերացնելու և նրան ամբողջ ժողովուրդի սպառազինումով փոխարինելու մասին:

Կազմակերպ-
վածը:

Կազմակերպութեան կառուցվածքը յեղել է լայն դեմոկրատական կենտրոնացման սկզբունքով: Հիմքը սեկցիաներն են կազմում, վորոնք իրենց մեջ ընդգրկում են ազգային ֆեդերալ

կամ շրջանային խորհուրդները: Կազմակերպությունների գլխավոր մարմինը Կենտրոնական խորհուրդն է, վորին ընտրում է ամեն տարի գումարվող կոնգրեսը: Ամեն սեկցիա ազատ է իր գործողությունների մեջ և ուղղակի կապ է ստեղծում կենտրոնի հետ: Սեկցիաների համար պարտադիր են Ինտերնացիոնալի ընդհանուր սկզբունքները, կոնգրեսների վորոշումները և կանոնադրությունը:

Մի շարք գլխավոր խնդիրների շուրջը Ինտերնացիոնալի մեջ առաջ են գալիս հոսանքներ:

Մանր-բուրժուական պրուդոնիզմի և բանկիզմի հետեղեն-Բակունին: Իրից գատ, Ինտերնացիոնալի ակնավոր անդամներից մեկն էր նաև ուս հայտնի անարխիստ Բակունինը, վոր Միքելից փախուստ տալով անցնում է Յեվրոպա, և մի շարք հեղափոխական անհաջող ձեռնարկություններից հետո 60-ական թվականների կեսերից իրեն նվիրում է բանվորական շարժումներին և հետագայում դառնում Առաջին Ինտերնացիոնալի ամենակատիվ գործիչը և Մարքսի վոխերիմ հակառակորդը:

Ինչպես գիտենք, Մարքսի համար պետությունը մի քաղաքական կազմակերպություն է, վորը գենը է ծառայում տիրող դասակարգի ձեռքին՝ իր գերիշխանությունը անսասան պահելու համար:

Դասակարգերը վերանալով, կվերանա նաև պետությունը: Բայց մարքսիստների համար կարևոր է և այն, թե ինչպիսի պետական կազմն է ավելի ոգտակար պրոլետարիատին. որինակ՝ սահմանադրական կամ հանրապետական պետական կազմն ավելի ձեռնտու յե պրոլետարիատին, ուր նա ավելի նպաստավոր պայմաններում կվարի իր դասակարգային կռիվը, քան միապետական կազմը, ուր ազատ չնչել անդամ արդելված է վերջապես՝ մարքսիստների տեսակետով, մինչև սոցիալիզմի կատարյալ իրականանալը, քաղաքական իշխանությունը գրավելն անհրաժեշտություն է. այլ խոսքով՝ «Պրոլետարիատի դիկտատուրան» անհրաժեշտություն է:

Իսկ անարխիստ Բակունինը բացասում է ամեն տեսակի իշխանություն և կողմնակից է ազատ միություններ ստեղծելուն:

Այն ժամանակ, յերբ Պրուդոնն առաջադրում էր պետության գաղափարին բոլորտ անելու տեսակետը, Բակունինը բուրժուական էր պետության հիմնական վուչնացումը: Բակունինը, ստրկական կյանքով ապրող ուս գյուղացիութեան ծնունդ լինելով, չեր կարողանում արդյունաբերական պրոլետարիատի պատմական դերի իմաստն ըմբռնել: Նա, լինելով տնտեսապես քայքայվող

Ինտերն-
գլխավոր
հասանգե-
րք յեկ տա-
րածայնու-
թյուններ:

Գործադուլների խնդիրը խոշոր վեճի առիթ չեղավ:

Սակայն մի շարք գործադուլների արդյունքները ակնհերձ լինելով, Բրյուսևիչի կոնգրեստում գործադուլների խնդիրը անցնում է համաձայն մարքսիստների առաջարկության:

Այդ առաջարկութիւնները Խնտերնացիոնալը չի ընդունում. վորոշում ե կայացնում առաջարկել բոլոր յերկրների բանվորներին՝ իրենց պրոֆմիտիւթյունների միջոցով և Խնտերնացիոնալի ղեկավարութեամբ կտրուկ միջոցներ ձեռք առնել աշխատանքի ժամերը կրճատելու:

*) Զինդա Նույնյակի մի միտք արծարծվեց ՄՄՀակ-ի եջերում (1908 թ., № 192), ուր հորդորում են հայ բանվորներին, վորպեսզի հայ բուրժուաների գործարանում գործադուլ չանեն, վորովհետև գործազրկությունը հայերի մեջ բազմանում և է հայ գործարանատերերը սեանականում են:

Մարքսը պրոֆմիլուծյունների մեջ եր տեսնում պրոլետարիատի դասակարգային կազմակերպւթյունների կենտրոնական ուժը: Մարքսը կոոպերացիային այն խոշոր քաղաքական նշանակությունը չեր տալիս, ինչ վոր տալիս էին շատ ուտոպիստներ: Ըստ Մարքսի, հասարակական արտադրության խոշոր համագործակցության և կոոպերատիվ աշխատանք ստեղծելու համար հարկավոր է փոխել տիրող հասարակական կառուցվածքը:

Մարքսիզմի և անարխիզմի ուժեղ պայքարը հայտնաբերվում է 1869 թ., Բազելի կոնգրեսում: Ժառանգության իրավունքի մասին Բակունինը այլ տեսակետ ուներ. նա պնդում էր վոր այդ իրավունքը պետք է վերացնել, կարծելով, վոր այդպիսով կվերանա սեփականությունը, կապիտալի այդ անկյունաքարը: Իսկ մարքսիստները, ցույց տալով բակունինիստների անհեթեթությունները, հաստատում էին, վոր ժառանգության իրավունքը ներկա տնտեսական պայմանների դերիշխանություն շրջանում հետևվանք է և վոչ թե պատճառ:

Առաջին անգամ Լոգանի կոնֆերենցիայում ընդունում են մի բանաձև, ուր ասված է, թե «պատերազմը մի ծանրություն է բանվորի համար վոչ թե այն պատճառով, վոր նա զրկվում է անհրաժեշտ սննդից, այլ նաև՝ իր կյանքից»։ Նույն հարցը կրկին անգամ քննության են առնվում Բրյուսելի կոնգրեսում ուր, համապատասխան բանաձև ընդունելով, բանվորներին ուղղած, կոչի մեջ ինտերնացիոնալը ասում է. «Գործաթող հայտարարեցե՛ք՝ յեթե ձեր յերկրում պատերազմ ծագի, և խանգարեցե՛ք ամենավճռական կերպով»։ 1870 թ. Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ ինտերնացիոնալի Պարիզի սեկցիան գերմանական բանվորներին ուղղած կոչում առաջարկում է չմասնակցել պատերազմին։ Բեռլին-ու Վ. Լիբքներխտը պարլամենտում պատերազմական ծախսերի դեմ են քվեարկում։ Պատերազմի դեմ ինտերնացիոնալի խորհրդի կողմից ևս մանիֆեստ է բաց թողնվում, իսկ գերմանացիների հաղթությունից հետո լույս է տեսնում Մարքսի գրած

Ինքսերնա-
ցիոնալ և
Պարիզի
կոմունան:

մանիֆեստը, վորի համար և ձերբակալվում են Բեքելը, Լիբ-
քնեխտը և ամբողջ կոմիտեն, վորը հրատարակել էր մանիֆեստը:
Ինտերնացիոնալը պահանջում է, վոր մշտական զորամասերը փո-
խարինվեն համաժողովրդական բանակով: Ճիշտ այնպես, ինչպես
այսօր իրագործված է Պորտուգալիայի Միության մեջ — ղինված
ուժերի յերկրային կազմակերպությամբ:

Առաջին Ինտերնացիոնալի մասնակցությունը Պարիզի Կո-
մունայում ահագին ազդեցություն է ունեցել: Ինտերնացիոնալի
անդամների խոշոր մասը ակտիվ մասնակցություն են ցույց
տվել Պարիզի Կոմունային:

Պարիզի Կոմունան աշխատավոր մասսաների սեփականու-
թյուն է դարձնում նրա կոչերը, հարձակումները, բողոքները
Վերսայլի գերատիկաների դեմ, այդ խնդիրը դնելով միջազգային
դասակարգային մեծ կռվի խակական ուղիի վրա:

Պարիզի Կոմունան իր վրա յեր բեկեռն աշխարհի բոլոր
բռնակալներին ուշադրությունը:

«Կոմունիզմի ուրվականը պատվում էր Յեվրոպայում»:

Բուրժուազիան սարսափած՝ զորահավաքի յինթարկելով յուր
գերագանց կազմակերպված ուժերը, սկսում է մի ուժեղ արշա-
վանք վոչ միայն Պարիզի կոմունարների դեմ, այլ նաև այն բո-
լորի, վորոնք գեթ մազաչափ անգամ կնպաստեն հեղափոխական
գործին:

Այդ ուժգին արշավը դեռ տակավին կազմակերպչական նախ-
նական շրջանում գտնվող պրոլետարիատի ճկուն ուսերն անկարող
էին տանել: Դասակարգային գիտակցության յետաձուլման
ամենագլխավոր չարիքն էր, վոր բուրժուազիան ոգտագործում էր
ի վնաս հենց նույն աշխատավոր մասսաների: Պարիզյան Կոմու-
նան յուր յերկու և կես ամսվա փառավոր գոյությամբ ցույց տվեց
բուրժուազիային, վոր ինքը, վորպես մի նոր ուժ, տենչում է նրա
իշխանությունը ընդմիշտ խլել: Լինել չլինելու հարցը բուրժուա-
զիային առաջադրվել էր և հարկավոր էր բացարձակ կռվի մի-
ջոցով վորոշել այդ խնդիրը:

Կ. Մարքսը Պարիզյան Կոմունայի որերին իր գրավոր կոչե-
րով հրահրում էր միջազգային պրոլետարիատին:

Չնայած վոր Մարքսն ու Ենգելսը Պարիզի բանվորների ղինված
ապստամբությունը վաղաժամ էին համարում, բայց յերբ արդեն
պրոլետարիատը տարերային կերպով բարեկազմների վրա կռվում
էր, Մարքսի, հետևապես նաև Ինտերնացիոնալի բուռն համա-

կրանքը նրա կողմն էր: Պարիզի Կոմունայի մեջ ինտերնացիոնա-
լիտեներն աննշան թիվ էին կազմում. վերջիններս Ազգային
Պորտուգալիայի պրոլետարիատների ու բլանկիստների դեմ ավելի շուտ
ընդդիմադիր ուժ էին կազմում, բայց և այնպես շոշափելի ոգուտ
էին տալիս իրենց ակտիվ մասնակցությամբ:

Կ. Մարքսը Պարիզի պրոլետարիատի ինքնագոհությունից
և իր դասակարգային նվիրվածությունից հիացած, խոսք էի
գտնում Կոմունայի հերոսների ինքնագոհությունը վեր հանելու:

Մի քանի յերկրներում թույլ էին բանվորական կազմա-
կերպությունները. Ինտերնացիոնալի կոչերը արձագանք չէին
գտնում ուրիշ յերկրներում:

1872 թ. Հաագայի կոնգրեսում Մարքսն այդ մասին ասում
է, վոր «հեղափոխությունը միասնական պետք է լինի. Պարիզի
Կոմունան մեզ համար մի մեծ փորձաքար է. նա ընկավ, վորով-
հետև Պարիզին անմիջապես չպաշտպանեցին Մադրիթը, Բեռլինը
և այլն»:

Պարիզի Կոմունայի հերոսամարտը շատ ժողովուրդների հա-
տարակական մտքին սթափման ուժ տվեց: Թե ինչ ազդեցություն
է ունեցել Առաջին Ինտերնացիոնալի և Պարիզի Կոմունայի գործ-
նեյությունը Ռուսաստանում 70-ական թվերի ազատագրական
շարժումների վրա, այդ մասին այսպես է ասում ընկ. Դեյչը «Առա-
ջին Ինտերնացիոնալի դերը ռուսական շարժումների մեջ» հոդ-
վածում. «Արդեն 1872 թվից մեզ մոտ սկսում են յերևալ հեղա-
փոխական առաջին խմբակները, վորոնք նպատակ են դնում ֆաբ-
րիկ-գործարանային բանվորների մեջ ագիտացիայով և պրոպա-
գանդայով զբաղվել: Հատկապես այդ ասպարիզում, ինչպես հայտնի
է, շատ գործ է կատարել այսպես կոչված Չայկովցիների
խմբակը: Իսկ 1872—73 թվերին հեղափոխականորեն տրամադ-
ված յերիտասարդության մեջ մեր քաղաքական եմիգրանտների
«դեպի ժողովուրդ» լուղունդն ավելի ու ավելի յե տարածվում:
Այս շարժումը, վորի նմանը Արևմտյան Յեվրոպայի վոչ մի յեր-
կրում չի յեղել, կարելի յե առանց չափազանցության ասել՝ հա-
մակել էր մեր առաջավոր յերիտասարդության:

Կարիք չկա այստեղ այդ շարժման մասին յերկար խոսելու.
բայց չի կարելի չնշել այն անվիճելի փաստը, վոր այդ շարժ-
ման առաջնախուռն Առաջին Ինտերնացիոնալն ու Պարիզի Կոմու-
նան խոշոր ազդեցություն են ունեցել: Հազիվ թե առանց այդ
արևմտա-եւրոպական խոշորագույն փաստերի ու դեպքերի, մեր

Ինքսերն-ի
և Պարի-
զի Կոմու-
նայի ազ-
դեցությու-
նը ուսու-
ազասա-
գրակա
բարժու-
մերի վրա:

Առաջին
Ինքնագիր-
գոյություն
դադարու-
մը:

յերիտաւարդութիւնը համակվեր այնպիսի անսահման անձնագո-
հութեամբ ու վողեորութեամբ, աշխատավոր մասսաների ազատա-
գրութեան համար ամեն ինչ գոհաբերելու ձգտումով, յեթե վերո-
հիշյալ դեպքերը չլինեյին: Իսկ հայտնի յե, վոր ժողովրդի մեջ
մտնելուց հետո, մեզ մոտ Ռուսաստանի սոցիալ- քաղաքական
յետաձեւ կարգերի դեմ սկսվում է մի ընդհանուր պայքար, վորը
կարճատեւ ընդհատումներով տեւում է կես դար. մի պայքար, վոր
անթիվ զոհեր, արյան գետեր ու անհաշիվ տանջանքներ եր պա-
հանջում է վորը հաղթանակով պսակվեց միայն 1917 թվին»:

Պարիզի Կոմունայի անկումից հետո տիրող ռեակցիայի
շրջանում Ինտերնացիոնալի գործնեյութեան համար աննպաստ
պայմաններ եյին. ստեղծվել, մանավանդ վոր Ինտերնացիոնալի
ներսում ել տարաձայնութիւններ եյին առաջացել: 1871 թ. Լոն-
դոնի կոնֆերենցիան մատնանշել եր, վոր բուրժուազիայի կու-
սակցութիւնների հանդեպ պրոլետարիատը եւ պետք է ունենա
իր կազմակերպութիւնը, վոր սոցիալիզմի հաղթանակի համար
անհրաժեշտ ե:

Լոնդոնի նույն կոնֆերենցիայում քննութեան է առնվում
նաե ներքին տարաձայնութիւններ խնդիրը: Դրան վորպես պա-
տասխան, բախումնիստները հրավիրում են շվեյցարական սեկցիայի
համագումար, վորի մեծամասնութիւնը բախումնիստներ եյին:

1872 թ. Հաագայի կոնգրեսում դրվում են քաղաքացիական
կռիւի ե Ինտերնացիոնալի Գերագույն Պորհրդի իրավունքների
խնդիրները: Այս յերկու խնդիրներում ել բախումնիստները պար-
տութիւն են կրում: Կոնգրեսը, հակառակ բախումնիստների առա-
ջարկութեան, ընդունում է քաղաքացիական կռիւը ե լայնացնում
Գերագույն Պորհրդի իրավունքները: Բախումնիստները հեռացվում
Ինտերնացիոնալից: Պարիզի Կոմունայի անկումից հետո մեծ թվով
բլանկիստներ եյին հավաքվել Լոնդոնում: Վորպեսզի արդեն
իսկ մեռնող Ինտերնացիոնալը բլանկիստների ձեռքին չդառնա
վորպես քաղաքական դավադրական եքսպերիմենտների վայր,
Կ. Մարքսը Գերագույն Պորհրդը Ամերիկա յե փոխադրում:

1876 թ. Ամերիկայի Ֆիլադելֆ քաղաքում տեղի յե ունե-
նում Առաջին Ինտերնացիոնալի վերջին կոնգրեսը, վորը մի վեր-
ջին կոչով դիմում է միջազգային պրոլետարիատին: Այդ կոչի
մեջ ասված է. «Յեվրոպայի մեր ընկեր բանվորներին պէտք է
վորոշ ժամանակ տրամադրվի, վորպեսզի ուժեղացնեն իրենց ազ-
գային կուսակցութիւնները, ե հավատացած ենք, վոր նրանց կհա-

ջողվի մոտ ապագայում քանդել այն պատնեշները, վորոնք բա-
ժանում են նրանց այլ յերկրների բանվորներից»:

Այսպիսով, պրոլետարիատի միջազգային ընկերութիւնը,
տաւը տարվա իր քեղմնավոր գործնեյութեանից հետո, միջազգա-
յին պրոլետարիատի կռիւի ասպարիզից չքանում ե՝ նոր ինտերնա-
ցիոնալներ ծնելու համար:

II

ՅԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

«Հայրենիքի պաշտպանության գործում բոլոր յերկր-
ների սոցիալ-դեմոկրատները մասնակցելու հավասար
իրավունք կամ հավասար պարտականություն ունենան»:

Կ. Կառուցիկ.—«Սոցիալ-դեմոկրատները պատե-
րազմի ժամանակ», 2 հոկտ. 1914 թ.

«Ինտերնացիոնալը մեռավ՝ ուղորտյունիզմից հող-
թահարված. կորչի ուղորտյունիզմը և կեցցե վոչ միայն
թուլամորթներէից (ինչ ցանկանում ե «Գոլոտա»* թերթը),
այլ և ուղորտյունիստներից դուրս Յերրորդ Ինտերնա-
ցիոնալը»:

Լենին.—«Սոցիալիստական Ինտերնացիոնալի
զրույթյունն ու անելիքը», 1 նոյեմբ. 1914 թ.

Ինպե՛րիա-
լ ի զ մ ի
ա ն ց մ ա ն
ց ռ ջ ա ն ր:

Կապիտալիզմի զարգացումը 80-ական թվականներին թեա-
կոխում է իր վերջին փուլը, վորը իր բնույթով վորակում է
իմպերիալիստական շրջանը:

Վերջին 60 տարվա ընթացքում ածուխի արտահանությունը
զարգացել է 14 անգամ, յերկաթինը—12 անգամ, չուգունինը—13
անգամ:

Արտադրական ուժերի զարգացման նպաստել են մեքենա-
գործության բնագավառում տեղի ունցած մի շարք նորագույն
գյուտերը, տեխնիկայի կատարելագործումը, գազային, նավթա-
յին և ջրային ուժերի ոգտագործումը և արտադրության միջոց-
ների նախնական ձևերից ավտոմատ աշխատանքի պրոցեսին անց-
նելու պայմաններ ստեղծելը: Տեխնիկայի հսկայական թափով
զարգացումը ցույց տալու համար, բավական է հիշել, վոր

* «Գոլոտա» թերթը լույս էր տեսնում Պարիզում 1914—1915 թ. թ.,
սոց.-դեմոկրատ Ինտերնացիոնալիստների որգանն էր:

1900 թ. մինչև 1907 թ. իրենց գյուտերի համար մենաշնորհի
իրավունք են ստացել Գերմանիայում՝ 36.620, Ֆրանսիայում՝ 12.650
և Անգլիայում՝ 16.234 մարդ: 1878 թվին, Ս. Թոմասի՝ յերկաթի
հանքային նյութերից պողպատ ստանալու հաջող գյուտը խոշոր
հեղաշրջում առաջ բերեց տնտեսական կյանքում. դրա շնորհիվ
եւ արագ կերպով զարգացան՝ յերկաթուղիների ցանցը, նավա-
գնացությունը, կամուրջների և տունեղների կառուցումը և մի
շարք այլ խոշոր ձեռնարկություններ:

Ժամանակակից տնտեսությունը իր եյուլթյամբ միջազգային
բնավորություն ունի: Գոյություն չունի մի յերկիր, վոր կարո-
ղանա ապրել ու զարգանալ մեկուսացած, առանց արտաքին
փոխարարերու: Կապիտալն ունի իր որենքները և իր ձեզ-
տուններով միջազգային եւ Ուժեղ մրցման միջոցով բոլոր գորեղ
կապիտալիստական պետությունները ամեն կերպ աշխատում են
իրենց գերիշխանությունը տարածել վոչ միայն իրենց ներքին
շուկայում, այլ և իրենց յերկրներից դուրս, միջազգային մրցակե-
ցության ասպարիզում:

Մրցման միջոցների մեջ կապիտալիստները խտրություն
չեն դնում և արտաքին շուկայում ամեն մեկը ջանում է իր
ապրանքի գները եթանացնել մինչ այն աստիճան, վոր հակառա-
կորդին ստիպի սնանկանալու և ասպարիզից հեռանալու:

Նախ հաջող մրցության համար նրանք աշխատում եյին
զլխավորապես տեխնիկան կատարելագործել և ապրանքը եթա-
նացնել: Բայց հետագայում դիմեցին զլխավորապես հաճախողա-
կան, մաքուր ձևերին, վորով ազգային պետությունների ներ-
սում կապիտալիստները ձեռք են բերում այս կամ այն ապրանքի
ուպառման մենաշնորհ իրավունք: Այդ նշանակում է, վոր իր հայ-
րենակիցներին միևնույն ապրանքները ծախում են ավելի թանկ
դնով, քան արտասահմանյան շուկայում:

Ցարական իշխանության հովանավորությամբ ամբողջ Ռու-
սաստանում շաքարի մենաշնորհը պատկանում էր շաքարի սին-
դիկատին: Շնորհիվ դիտմամբ սահմանված բարձր մաքսերի, դրո-
սից շաքար չեւ ներմուծվում, վորպեսզի սինդիկատը կարողանա
արտաքին շուկայում հաջող մրցել ոտար կապիտալիստների շա-
քարի առևտրի դեմ. այդ արվում էր ի հաշիվ ուս աշխատավոր
ուպառողների, վորոնք շաքարը դնում եյին համեմատաբար թանկ
գնով (13—14 կոպ.):

Սինդիկատը ամեն մի գրվանքա շաքարում «իր ժողովրդից»

Կապիտալի
միջազգ.
բնույթը,
ինպե՛րիա-
լ ի զ մ ի
ա ն ց մ ա ն
ց ռ ջ ա ն ր
և ֆա-
ղափակա-
նությունը:

աշխատում եր 8 կուպ., իսկ արտաքին շուկայում այդ նույն շաբաթը վաճառում եր գրվանքան 6—7 կուպ.: Անգլիացիք ուսուկան շաբաթով կերակրում էին իրենց խոզերին այն ժամանակ, յերբ ուսու բանվորը կամ գյուղացին թեյը խմում էին «կծովի»: Անգլիան, Գերմանիան և մյուս պետությունները տրեստների, սինդիկատների միջոցով մենաշնորհի յենթարկելով արտաքին առևտուրը, գաղութները դրել էին պաշարման դրության մեջ:

Իմպերիալիզմի գլխավոր նպատակներիցն է նաև՝ հում նյութերով հարուստ յերկրներ գրավելը, գլխավորապես՝ այդ յերկրների հանքային հարստությունների սեփականացումը: Մրցումն առաջ և բերում գաղութային յերկրների, իրենց ազդեցություն տակ գլխաված շրջանների բաժանման խնդիրը: Այդ տեսակետից հետաքրքիր է այն, վոր 1880 թ. մինչև 1907 թ. յերկաթուղիների ցանցը Գերմանիայում ներկայացնում եր 72 տոկոս, Ֆրանսիայում 84 տոկոս, Անգլիայում 29 տոկոս: Այդ նույն ժամանակաշրջանում գաղութային յերկրների յերկաթուղիները ավելացել են հարյուրավոր տոկոսներով: Աֆրիկայում ավելացել է 547 տոկոս, Բրիտանական Հնդկաստանում 226 տոկոս և այլն: Այսպիսով ամեն մի իմպերիալիստական յերկիր ձգտում է հիմնական կերպով տիրելու գաղութներին և ստեղծելու ռազմական-պաշարողական-պաշտպանողական կետեր:

Անգլիայի միջազգային տնտեսական գերիշխանությունը սպառնում եր նոր զարգացող Գերմանիային: 20-րդ դարի սկզբներին հրապարակում հանդես էին յեկել յերկու խոշոր ախոյաններ, վորոնց շուրջն էին խմբվում շահերով հակադիր յերկրները:

1879 թվին հիմք է դրվում Գերմանիայի և Ավստրիայի, իսկ յերեք տարի հետո նաև Իտալիայի յեռյակ համաձայնությունը: Հակառակ բանակը, հանձինս Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի, կազմում է յեռյակ միությունը: Այս յերկու խմբակցություններն իրենց գրաված գաղութները «խաղաղ» կերպով բաժանել էին ազդեցության շրջանների և տեղային ռազմական պատրաստություններ տեսնում՝ հարկավոր դեպքում հաշիվները ուժով մաքրելու համար:

Արժե մի քիչ հանգամանորեն կանգ առնել իմպերիալիստների շահատակության ձևերի վրա:

Չնայած վոր քարածուխի համաշխարհային պաշարը կրավարների հինգ հազար տարի, նավթինը՝ 40 տարի, յերկաթինը՝ 800 տարի, բայց և այնպես իմպերիալիստ պետությունների բոլոր պատե-

րազմները պայմանավորված են գլխավորապես այդ հանքային հարստությունների տիրապետության ձգտումով: Իմպերիալիստների մրցման նպատակներից թերևս գլխավորն այն է, վոր միմյանց զրկեն վոչ միայն այն նյութերից, վոր իրենց հարկավոր են, այլ նաև այն նյութերից, վորոնք իր հակառակորդ պետությունը պետք կգան, նույնիսկ հեռավոր ապագայում:

Հանքային հարստությունների շարքում կարևոր տեղ է բռնում նավթը, վորը միջազգային իմպերիալիստների գլխավոր կռվածադրվին է: Նավթի ամենախոշոր սպառողը Ամերիկան է, վորի պաշարը կբավարարի միայն 10 տարի: Անգլիայի գերիշխանության տակ են գտնվում Պարսկաստանի և Միջագետքի, Հոլանդական և Անգլիական Հնդկաստանի, Հարավային Ամերիկայի և Յեգիպտոսի նավթային հողամասերը: Բացի այդ, Անգլիայի խոշոր ազդեցության տակ են գտնվում Մեքսիկայի նավթային հողամասերը, վոր աշխարհի նավթային պաշարի 59,5 տոկոսն են կազմում: Հանձինս Նորելի և Ռուտշիլդի, Բագվում մուտք եր գործել նույն անգլիական կապիտալը. շնորհիվ Հոկտեմբերյան հեղափոխության, պատմության ընթացքում առաջին անգամ պրոլետարիատը մահացու հարված հասցրեց «նվաճող» իմպերիալիզմի սանձարձակ ախորժակին:

Վերջին 40—50 տարվա ընթացքում իմպերիալիստական մոնոպոլ քաղաքականությունը նշանակալից է նրանով, վոր հում նյութերի գրավման մրցությունը Միացյալ Նահանգները, Անգլիան, Ֆրանսիան և Յապոնիան ճնշում են 588.310.000 գաղութային և 487.500.000 կիսագաղութային բնակչության:

Ներկայումս գաղութներ չունեն Գերմանիան, վորից պատերազմի հետևանքով բոլորը խլեցին իր ուժեղ մրցակիցները, և Սորհրդային Միությունը, վորը իր դասակարգային դավանանքի հրահանգներով բոլոր աշխատավոր ժողովուրդների հետ իրեն հավասար է ընդունում և կատարի կռիվ մղում իմպերիալիստների գաղութային տիրապետության դեմ:

Ֆինանսական կապիտալը՝ ի դեմս բանկերի՝ գաղութների գրավման խոշորագույն գործոններից մեկն է:

Բանկերն իրենց գումարներով մուտք են գործում այնտեղ, ուր կարելի չէ կապիտալը գանազան ձեռնարկությունների մեջ ավելի շահավետ կերպով գործադրել և տոկոսով վարել բաց թողնել կապիտալի կարիք ունեցողներին: Ֆինանսական կապիտալը իմպերիալիստների ամենակատար զենքն է, վորով գրավում են

Ֆինանս. կապիտալի դերը գաղութներում մեղմացնելը:

միջազգային տնտեսական կյանքի հրամանատարական դիրքերը:

«Չինված մրցակցութունը ծնում է գինվիւժ մրցում»:

Տենդային սպառազինման ձգտում տեսնում ենք նաև պատերազմից հետո: Բավական է շեշտել, վոր 1923 թ. վերջերին, բացի Նորհրդային Միութիւնից, ամբողջ աշխարհի ցամաքային գինված ուժերի թիվը հասնում էր 6,315,280 հոգու, մինչդեռ մինչ պատերազմը այդ ուժը ընդամենը 4 միլիոն էր: Պարզ է, վոր իմպերիալիզմի վարած քաղաքականութիւնն անխուսափելիորեն տանում է դեպի նորանոր պատերազմներ: Միևիույի ապստամբութեան ճնշումը, ռիֆների դեմ մղած պատերազմը, Ճապոնի և Սումատրայի ապստամբութիւնների անողորմ ճնշումը և վերջապէս Չինաստանի հեղափոխութեան դեմ մղած այն արյունալից կռիւները, վորոնք դեռ չեն վերջացել և հզի յեն համաշխարհային նշանակութիւն ունեցող քաղաքական դեպքերով, այդ բոլորը հաստատում են մեր ասածները:

Չին ժողովրդի ազատագրական շարժումը ճնշելու համար միացել են իմպերիալիստական բոլոր պետութիւնները՝ միջազգային պրոլետարիատի և գաղութային աշխատավորութեան կողմից մոտալուտ վտանգ զգալով: Այդ պետութիւնները գաղութային ժողովուրդներին իրենց կրունկների տակ պահելու համար՝ ժամանակավորապէս մի կողմն են թողել իրենց ներքին տարածայնութիւնները և ստեղծել են ընդհանուր ճակատ:

Ընկ. Լենինը իմպերիալիզմի մասին խոսելով, տալիս է հետեւյալ բնորոշումը. «Իմպերիալիզմը ինքը կապիտալիզմն է, վորը գտնվում է զարգացման այնպիսի աստիճանի վրա, յերբ տարածված է մենաշնորհի սխտեմը և ապահովվել է ֆինանսական կապիտալի արտահանման նվաճումը, յերբ տեղի ունի աշխարհի բաժանումը կապիտալիստական յերկրների միջև, իսկ շուկաներին տիրապետում են միջազգային տրեստները»:

Յերկրորդ Խնտերնացիոնալի նախորդակին երոպական պետութիւններն իրենց պիտական որենսդրական որգաններն ու որենքները հարմարացրել էին տնտեսական և քաղաքական կյանքում տարած նվաճումներից բխող պահանջներին: Բուրժուազիան իր հետագա ձգտումներն ապահովելու համար ստեղծել էր հանրապետական և սահմանադրական վարչաձևեր, տալով դրանց իր հարազատ դասակարգային դեմքը: Այն բանի լիբերալ որենքներով մանր բուրժուազիային ու բանվորներին ընտրական իրավունքի վորոշ արտոնութիւններ տալով (որինակ՝ աղքատախնամ ընկերու-

թիւններ, նյութականի կազմակերպումն և ելի մի շարք ուրիշ «գիշուկներ» անելով, վորոնք կարող էին աշխատավորութեան դասակարգային ինքնագիտակցութիւնը մթազնել), տիրող դասակարգը շահում է մասսաների վստահութիւնը իր՝ դեպի վերջինների ունեցած «խնամքի» շնորհիւ:

Իմպերիալիզմի մարմնացում Անգլիան իր «ազատարար» որենքներով կարողացել էր բանվոր դասակարգին անշարժութեան մատնել, բանվորական աշխատավարձը ավելացվել, հաճախակի կրկնվող տնտեսական ճգնաժամերը դադարել էին, նվազել էր անգործների թիվը, և վոր գլխավորն է, վորեւ քաղաքական պահանջի դեպքում անգլիական բուրժուազիան բանվորներին հիշեցնում էր չարտիստների դեմ գործադրած խտութիւնները:

Ռուստիայն իր «Բանվորական շարժումները Անգլիայում» գրքի մեջ գրում է, վոր 70—80 թ. թ. անգլիական Տրեդ-Ունիոնիստների գործնեյութեան իբր թե ամենափայլուն շրջանն է համարվում, այդ միանգամայն հնարովի յե, վորովհետև հենց այդ թվականներին է, վոր մասսաները թմրութեան էին մատնվել բուրժուազիայի «խնամատարութիւնից»:

Բանվորական կազմակերպութիւնների գլուխն էին անցել մանր-բուրժուական տարրերը և տիրող դասակարգը ոգտագործում էր այդ հանգամանքը: Միայն 1900 թ. է սկսվում անգլիական բանվորների ընդհանուր սթափումը, վոր իր մի բանի խոշոր գործադուլներով որինակելի յեր:

Տրեդ-Ունիոնների՝ նոր թափով գործնեյութեան անցնելու պատճառներն էին—աշխատավարձի ավելացումը և աշխատանքի ժամերի կրճատումն ու պրոֆմիութիւնների իրավունքների ընդլայնումը, իսկ մյուս կողմից, ինչպէս հետո կտեսնենք, սոցիալիստական պրոպագանդի հետեանքով՝ բանվորների մտավորի բարձրացումը: Այդ շրջանը կոչվում է նոր «Տրեդ-Ունիոնիզմի» շրջան, վորը անգլիական բանվորական շարժումների պատմութեան մեջ իր պատվավոր տեղն է բռնում:

Այլ էր պատկերը Գերմանիայում: Ինչպէս տեսանք, վերջինս համաշխարհային շուկայում Անգլիային հակակշիռ ուժ էր ներկայացնում: Գերմանիայի մեքենագործութիւնը Անգլիայից ընդորինակածներով չէր սահմանափակվում, այլ ինքը ցուցադրում էր իր ինքնուրույնը՝ կատարելագործելով այն: Բացի այդ, Գերմանիային է պատկանում ելեքտրական ուժի ոգտագործման գլուխը, դինամո-մեքենան, դիզելը, գազային շարժիչները և այլն, բոլորը

Բա Գ Վ Ո Ր-
ՆԵՐԻ ՈՐՈՒ-
ՔՅՈՒՆԸ ԱՅ-
ՈՒՄ ԵՐԱՅԻ:

Ա գ գ ա յի Գ
պ է Տ Ո Ւ-
թ Յ Ո Ւ ՆԵՐԻ
վ ԵՐԳՆԱԿԱՆ
ձ ԵՎ Կ Ե-
պ ու մ ր:

Գ Ե Ր Մ Ա-
ՆԻ Կ Ա Ն
Յ Ի Կ Ա Ն
Յ Ի Կ Ա Ն:

Գերմանիայի ստեղծագործություններն են, վորից հետո այնտեղ հսկայական քայլերով զարգանում է արդյունաբերությունը: Նույն կատարելագործման են յենթարկվում նույնպես գյուղատնտեսական արդյունաբերության համար պատրաստած մեքենաները, վորոնք դարձյալ գերմանական գյուտեր են և աշխատում են շոգիով ու ելեքտրականությամբ: Գյուղատնտեսական նյութեր Գերմանիան արտահանում է յերեք անգամ ավելի, քան հարևան պետությունները:

Գերմանիայի արդյունաբերության զարգացման հետ միասին զարգանում է նաև նրա արտաքին առևտուրը, վորը քսան և հինգ տարվա ընթացքում ավելանում է յերեք անգամ, մինչդեռ նոր ժամանակաշրջանում Անգլիայի, Ամերիկայի և Ֆրանսիայի առևտուրը ավելանում է միայն յերկու անգամ: Գերմանիան գլխավորապես արտահանում է մեքենաներ և տեխնիքական գործիքներ: Պոռտ արդյունաբերության զարգացման հետ՝ պարզ է, վոր ուժաղանում են նաև բանվորության շարքերը:

Գյուղատնտեսությունը անհամեմատ յետ է մնում արդյունաբերությունից. 90-ական թվականներին Գերմանիայում կային 16 միլ. գործարանային բանվորներ: Ֆրանսիան այդ շրջանում յետ էր մնացել իր հարևաններից՝ շնորհիվ ֆրանս-պրուսական պատերազմից ստացած ֆլանների: Ֆրանսիայի արդյունաբերության և առևտրի թափը ուժեղանում է հետզհետե և 1902—1903 թ. թ. նա արդեն համարվում էր ուժեղ իմպերիալիստական պետություններից մեկը: Հետագայում Ֆրանսիան, վորպես արտաքին տրեստական կյանքում մասնակցողներից մեկը, աչքի է ընկնում իր բանկային գործնեյությունով:—Նա իր (ֆրանսիական) կապիտալը ոգտագործելով արտաքին շուկաներում, ավելի շատ շահ էր ստանում:

Այս յերեք յերկրներում էլ գոյություն ունեյին տարբեր սոցիալիստական կուսակցություններ, վորոնց վրա անհրաժեշտ է կանգ առնել:

80-ական թվականներին Անգլիայում փորձում են հիմնել սոցիալիստական կուսակցություն. նախաձեռնողն էր լրբերալիզմի մեջ հիպոթեզաված ինտելիգենցիան, վոր գաղափարականությունից դուրս վոչ մի գործնական քայլ չարավ: 1881 թ. կազմած «Բրիտանական սոցիալիստական կուսակցության» ղեկավարները աշխատում են բանվորական ներքին խավերի հետ սերտ կազմակերպչական կապ ստեղծելու, բայց, ինչպես նկատե-

ցինք, անգլիական այդ շրջանի բանվորներին հազիվ թե կարելի լիներ սթափեցնել: Բանվորական կազմակերպությունների տրամադրության հետ ծանոթանալու համար բավական է այստեղ հիշել հետևյալ դեպքը: Տրեդ-Ունիոնների մի կոնֆերենցիայում սոցիալիստները մի բանաձև են առաջարկում, վորով կառավարությունից պահանջվում է՝ որենսդրական ճանապարհով կյանքի մեջ կիրառել 8-ժամյա բանվորական օրը: Թվում է թե նման չափավոր պահանջ բնական է ամեն մի շատ թե քիչ հեղափոխականորեն մտածող կազմակերպության համար, բայց Տրեդ-Ունիոնները գտնում են, վոր այդ կնշանակի—խառնվել տերերի և աշխատողների փոխադարձ համաձայնության ներքին խնդիրների մեջ, և այդպիսով մերժում են առաջարկությունը: Մի ուրիշ դեպք, վոր ավելի քան բնորոշում է Տրեդ-Ունիոնների ղեկավարներին. սոցիալ դեմոկրատները նույն համագումարում մտցնում են մի առաջարկ.—դիմել պարլամենտին՝ անգործների համար գործարաններ հիմնելու վարկ, բաց թողնելու ինչ խոսք, վոր այս առաջարկությունն ևս Տրեդ-Ունիոնների կողմից հանդիպում է հեղինակների և նույնիսկ լիգերներից մեկը թույլ է տալիս այսպիսի արտահայտություն. «Ի՞նչ, գուցե սոցիալիստները կցանկանան համայնացնել նաև լուսինը»:

Վերջապես, վորպեսզի Տրեդ-Ունիոնիստներն ազատվեն սոցիալիստների ներկայությունից, կանոնադրություն են մշակում, վորով սոցիալիստների առաջ փակվում են հետագա համագումարների դռները:

Ֆրանսիայում, դեռ 1876 թ., Պարիզում հրավիրվել էր բանվորական կոնգրես, ուր դրված էին կազմակերպչական խնդիրներ:

Այդ կոնգրեսի ղեկավարները զգուշացնում էին բանվորներին՝ հեռու մնալ ինտելիգենտներից. այդտեղ էլ վորոշում են կազմել սոց-կուսակցություն՝ Պարիզի Ֆեդերացիա անվան տակ. իրենց ռազմական վոգով և հեղափոխական մաքրությամբ ֆրանսիական բանվորները այս անգամ ևս միանգամայն տարբերվում են Անգլիայի և Գերմանիայի յերերուն կուսակցություններից: Նորակազմ կուսակցության գլուխն էր անցել Գետտե: 1880 թվին Մարբուր կազմել էր այդ կուսակցության ծրագիրը: Շնորհիվ 1881 թ. քաղաքական ներման, կոմունարների կուսակցության շարքերն են մտնում զանազան հոսանքների պատկանող տարրեր. այսպիսով հնարավորություն չի լինում միասնական ուժեղ կուսակցություն ստեղծելու, ուստի և պառակտվում է:

Սոցիալիստական կուսակցություն, Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում:

Բացի Գետի գլխավորութեամբ գործող բանվորական կուսակցութիւնից կազմվում է նաև մի նորը՝ Բրյուսիստների (Բրյուսի կողմնակիցներ) կուսակցութիւն անունով, վորը ավելի շուտ գործնական նպատակներ է հետապնդում: Բլանկիստների տեսակետի պաշտպանն էր Վալյանը, վոր իր կոչերում բանվորներին հրավիրում էր միայն քաղաքական յեղութիւններ:

Դրանց շարքում գոյութիւն ունէր նաև անկախ սոցիալիստների ֆեդերացիա՝ Ժորեսի և Միլերանի գլխավորութեամբ:

Այս բոլոր սոցիալիստական հոսանքները կատարի կռիվ ելին մղում միմյանց դեմ. սակայն Դրեյֆուսի գործի հետ կապ ունեցող գլխավորական դիկտատուրայի սպառնալիքը ստիպում է բոլոր հոսանքներին միանալ: Կուսակցութեան ղեկավարութեան մասի մոտեցումը բուրժուական հանրապետականներին, թեքում է նրան դեպի աջ մինչ այն աստիճան, վոր նրա լիդեր Միլերանը Կոմունայի դահճ Գալլիֆէյի հետ հրավիրվում է միմյանորակա պաշտոնի:

Ռեֆորմատորական նման յերեւոյթը այդ պատմական շրջանում կարելի չէ միջազգային համարել, վորովհետեւ միևնույն ժամանակ Գերմանիայում հրապարակ յեկան Բերնշտեյնի աշխատութիւնները, վորի մասին խոսք կլինի ներքեւում:

Ֆրանսիական սոցիալիստական կուսակցութիւններ միացյալ համագումարը շատ անորոշ դիրք բռնեց միմյանորակա կարեւորում իր անդամների մասնակցելու խնդրի նկատմամբ և ընդունեց մի բանաձե, վորով իրավունք է տրվում՝ «արտակարգ հանգամանքներում» հարցը վերաքննելու:

Քաղաքական կուսակցութեան հետ միաժամանակ կազմակերպվում է նաև «Միդիկատների Խնտերնացիոնալ Միութիւնը», վորն իր անհրաժեշտութիւնը պատճառաբանում է այսպես. «Խնկատի ունենալով, վոր պրոլետարիատի հանգեպ, յերես առ յերես կանգնած է լավ կազմակերպված բուրժուազիան, պետք է բանվորների կազմակերպութիւնները հակադրել բուրժուազիային՝ սկզբում պաշտպանողական դիրք ընդունելով, իսկ հետո, յեթե պէտք լինի, նաև հարձակողական դիրք ընդունել: Միդիկատների յերրորդ կոնգրեսը հանում է մի բանաձե, ուր ասված է՝ «Սոցիալիստական հեղափոխութեան ուղին անցնում է ընդհանուր գործադուլի միջով». այդ լոզունգը ահագին նշանակութիւն ունեցավ մասսաների կազմակերպման գործում, գլխավորապէս պրոֆմիութիւնների ասպարիզում:

1878 թվին կազմվում է գերմանական սոց.-դեմոկրատական կուսակցութիւնը, վորը Երֆուրտի համագումարում, ընդունելով նոր մշակված ծրագիրը, վերջնականապէս հիմք է ընդունում Մարքսի ուսմունքը և կուսակցութեան շարքերը մաքրում Լասալյան ազդեցութիւնից:

Սոց.-դեմոկրատական ազդեցութիւնը յերկրի մասսաների վրա արագորեն ուժեղանում է. անհամեմատ կարճ ժամանակամիջոցում (1914 թ.) գերմանական ռալիստագում ունենում է 110 պատգամավոր:

Այս հաջողութիւնը զուտ պարլամենտական բնույթ կրող աշխատանքի հետեանք էր, իսկոք որեմեքների սահմաններում ձեռք բերված սոցիալիստական վորոշ արդյունք էր: Իր առաջին կոչերից մեկում գերմ. սոց.-դեմոկրատիան բանվորներին խորհուրդ է տալիս լինել «խոհեմ» և «հնազանդ». «Վո՛չ մի բռնութիւն. հարգեցեք որենքները և այդ սահմաններում պաշտպանեցեք ձեր իրավունքները»:

Մի ուրիշ առթիւ Բեքելը ռալիստագում հայտարարում է. «Կուսակցութիւնը պետք է հավատարիմ լինի սոցիալիստների համար գրված որենքներին, քանի նա բարենորոգումներ կուսակցութիւն է բառիս ամենալայն իմաստով. առհասարակ ուժով կատարած հեղափոխութիւնը հիմարութիւն է»: Այս այսպէս լինելուց հետո զարմանալու վորինչ չկա, վոր այդ կուսակցութեան ամբողջ հետագա պատմութիւնն ընթանար հակասութիւնների ուղիով:

Առաջին և ամենակարեւոր յերեւոյթը, վոր հիմք է դնում կուսակցութեան ուղորդունիքին, այդ—Բերնշտեյնի ռեվիզիան էր, վոր կատարվում էր Մարքսի արտահայտած մտքերի դեմ. դա պատմութեան մեջ կոչվում է ռեվիզիոնիզմ:

Մարքսի դասակարգային կռիւ ուսմունքը Բերնշտեյնը գրտնում է սխալ, վորովհետեւ՝ ըստ վերջինիս՝ քաղաքացիական ազատութիւնը, դեմոկրատիան, ընդհանուր ընտրական իրավունքը—քաղաքացիական կռիւ անհրաժեշտութիւնը մեջ տեղից վերաջնում են:

Սաղաղ բարենորոգումների ճանապարհով, բուրժուական կարգերը պետք է տեղի տային սոցիալիստականին. միայն հարկավոր է, վոր սոցիալիստները սերտ բարեկամութիւն ստեղծեն բուրժուական կուսակցութիւնների հետ և վերջինների միջոցով անցկացնեն այդ բարենորոգումները: Այժմ մի քանի դրութիւններ

Գերմ.սոց.-դեմ. կուսակց. սպայորս յու-նիզմի ար-մասները:

Ռեվիզիոն-նիզմի գիւր-գերմ. սոց.-դեմ. կուսակց. ար-մասները:

գործնական կյանքում մեզ համար պարզվել են: Մենք այսօր ավելի քան յերբեք ակնհայտես ենք, թե բուրժուազիայի դիկտատուրայի շրջանում ձեռք բերված «ազատությունից» պրոլետարիատը ինչպես է ոգտվում հենց իր՝ Բերնշտեյնի հայրենիքում:

Ռեվոլյուցիոնիստները խոշոր դեր էյին խաղում գերմ. սոց-դեմ. կուսակցության մեջ, իսկ հետագայում՝ նաև Ինտերնացիոնալում: Բավական է հիշել, վոր ռայխստագի 110 պատգամավորներից 57-ը ռեվոլյուցիոնիստներ էյին:

Իր ժամանակին, այսպես կոչված որթողորս մարքսիստների՝ վորպես Մարքսի գաղափարների հավատարիմ հետևողների՝ կողմից ուժեղ ու համառ պայքար մղվեց ռեվոլյուցիոնիզմի դեմ: Լենինը ևս իր «Մարքսիզմ և ռեվոլյուցիոնիզմ» հոդվածում, իրեն հատուկ վոչնչացնող քննադատության յենթարկելով ռեվոլյուցիոնիզմը, ավելացնում է. «Ռեվոլյուցիոնիզմի անխուսափելիությունը գտնվում է ներկա հասարակության դասակարգային արմատների մեջ, ռեվոլյուցիոնիզմը ինտերնացիոնալ յերևույթ է», և հոդվածը վերջացնում է հետևյալ կանխագուշակ խոսքերով. «14-րդ դարի հեղափոխական մարքսիզմի պայքարը ռեվոլյուցիոնիզմի դեմ՝ նախադուռն է պրոլետարիատի մեծագուշն ճակատամարտների, վորը դիմում է դեպի իր գործի հաղթանակը՝ հակառակ բոլոր մեղչանների թուլամորթությունների և տատանումների»:

Գերմանական սոց.-դեմ. իր գաղութային, պրոֆմիլութենական և ընդհանուր գործադուլի հարցերում յեղել է նույն համաձայնողականը, միշտ յենթակա աջ թևի ազդեցություններին:

Սոց.-դեմ. կուսակցության «չափավորությունը» պատճառաբանվում է նրանով, վոր կուսակցության վրա ազդում էյին արտաքին պայմանները և դրա հետեանքով կուսակցության մեջ մուտք էյին գործել վոչ ցանկալի տարրեր: Բայց ինչու՞նք և գերմ. սոց.-դեմ. կուս. այդ հաջողությունների պատճառը: Նախ այն, վոր իմպերիալիզմի շրջանում միայն սոց.-դեմ. և, վոր կառավարության ընդդիմադիր ուժն է կազմում և դրանով դեպի իրեն և գրավում բոլոր ճնշվածներին. դրա համար ել ռայխստագի ընտրություններին սոց.-դեմ. ձայն են տալիս վոչ միայն բանվորները, այլ նաև մանր և միջին բուրժուազիան: Այս վերջիններն ել ճնշում են գործ դնում կուսակցության վրա իրենց քաղաքական ընթացքով: յերկրորդ՝ պարլամենտում մասնակցելու համար հարկավոր են մտավոր զարգացողության տեղ մարդիկ: մի

խոսքով՝ բարձր ինտելիգենցիա, վորոնք կուսակցության չինովնիկներն են հանդիսանում. յերրորդ՝ շնորհիվ մոնոպոլ կապիտալի նվաճումներին, հնարավոր է դառնում բարձր վորակով բանվորների աշխատավարձն ավելացնել, վորի հետեանքով վերջիններս հետզհետե դառնում են բանվորական արխատկրատներ. և վերջապես չորրորդ՝ բավական հասակ առած կուսակցությունը ճնշում է իր քանակով առաջապահ խմբակին: Կարծում ենք այս ձևի բնորոշումն ամեն ինչ ասում է և գերմ. սոց.-դեմ. կուսակցության՝ Յերկրորդ Ինտերնացիոնալի մեջ վարած քաղաքականությունը մեզ այնքան ել զարմանալի չպետք է թվա:

Այդ ժամանակ գոյություն ունեյին հետևյալ սոցիալիստական կուսակցությունները. — գերմանական սոց.-դեմ., վորը կազմակերպվել եր 1869 թ., ֆրանսիական — 1879 թ., բելգիական — 1885 թ., շվեյցարական — 1887 թ., ռուսական սոց.-դեմ. խմբակներ — 1883 թ., իտալական — 1892 թ.: Ինչպես գիտենք, բացի սոցիալիստական կուսակցություններից, մի շարք յերկրներում գոյություն ունեյին խոշոր թիվ կազմող սինդիկալիստական կազմակերպություններ, վորոնք իրենց հեղափոխական ավանդությունները, վորպես ժառանգություն, ստացել էյին Բակունինի շրջանից:

II Ինտերնացիոնալի մեջ մտնող կազմակերպությունների անդամների քանակը հաշվում էյին այսպես. բանվորական կուսակցության անդամներ — $3\frac{1}{2}$ միլ., ընտրողներ — 11—12 միլ., պրոֆմիլության անդամներ — 11 միլ., կոոպերացիայից — 8 միլ., զանազան պարլամենտների պատգամավորներ — 700, քաղաքային ինքնավարությունների ծառայողներից — 10 հազար, ամենուրյա թերթերից — 200 հոգի:

Առաջին Ինտերնացիոնալի անկումից հետո, միջազգային բանվորական միությունը իր գոյությունը փաստորեն պահպանել է, և մինչև Յերկրորդ Ինտերնացիոնալի ձևակերպումը ամեն տարի տեղի յեն ունեցել մի շարք համագումարներ, գլխավորապես պրոֆմիլութենական գծով:

Ֆրանսիական սինդիկալիստներն առաջարկում են սոց-կուսակցությունների 1889 թ. միջազգային ցուցահանդեսի ժամանակ հրավիրել նաև միջազգային բանվորական կոնգրես: Նույնալիս վորոշում են կայացնում նաև գերմանական սոց.-դեմ. և անգլիական Տրեդ-Ունիոնները:

1889 թվին Պարիզում տեղի յե ունենում յերկու միջազգա-

II Ինտերնացիոնալի մեջ մտնող կազմակերպությունների

Միջազգ. բանվորական կոնգրեսի համագումարը:

Գերմ. սոց. դեմոկրատ. պարլամենտի պատգամավորներ:

յին կոնգրեսն. մեկը մարքսիստական, իսկ մյուսը՝ ֆրանսիական պոստիքիստների: Այս յերկու հոսանքներին միացնելու համար Վ. Լիբքնեխտի բոլոր ջանքերն իղուր են անցնում: Մարքսիստների կոնգրեսի կոչը ստորագրում են 19 յերկրների սոցիալիստներ. համագումարին ներկա եյին 400 պատգամավոր: Մարքսիզմի առաջին մասսայական հաղթանակն է լինում այս՝ միջազգային մասշտաբով:

II ԻճՏԵՐԳ.
ԻճՏԵՐԳ.
ԻճՏԵՐԳ.
ԻճՏԵՐԳ.
ԻճՏԵՐԳ.
ԻճՏԵՐԳ.
ԻճՏԵՐԳ.
ԻճՏԵՐԳ.

Այսպիսով հիմնվում է Յերկրորդ Ինտերնացիոնալը, վորն իր 25 տարվա գոյության ընթացքում ունեցել է իննը կոնգրես. 1889 թ.—Պարիզում, 1891 թ.—Բրյուսելում, 1893 թ.—Ցյուրիխում, 1896 թ.—Լոնդոնում, 1900 թ.—Պարիզում, 1904 թ.—Ամստերդամում, 1907 թ.—Շտուտգարդում, 1910 թ.—Կոպենհագենում և 1912 թ.—Բազելում (վերջինս արտակարգ, վոր գումարվեց բալկանյան պատերազմի առթիվ):

Յերկրորդ Ինտերնացիոնալի ամբողջ գործնելութունը սահմանափակվել է իր կոնգրեսներում կայացած վորոշումներով. նա ավելի շուտ ինֆորմացիոն նպատակներ է ունեցել:

1900 թ. Պարիզի կոնգրեսում վորոշվում է ունենալ Միջազգային սոցիալիստական բյուրո, վորը պետք է՝ 1) հայթայթե հարկավոր տեղեկութունները, 2) կազմե բացատրական ժողովածուներ՝ նախկին կոնգրեսների վորոշումներից, 3) սոցիալիստական շարժումների մասին լինելիք գեկուցումները կոնգրեսներից յերկու ամիս առաջ բաժանե առանձին յերկրների կողմից գեկուցողներին, 4) կոնգրեսում քննության արժանի հարցերի (ներկայացրած գեկուցումներից բղխող) վերաբերյալ ընդհանուր տեսություններ կազմե, 5) ժամանակակից հասարակական խնդիրների աչքի ընկնող բարենորոգումների, ինչպես և բաղադրական ու տընտեսական կարևոր հարցերի հետազոտության շուրջը բրոշուրներ և մանիֆեստներ հրատարակե, 6) բոլոր յերկրների պրոլետարական մասսաներին կազմակերպելու, ինչպես և նրանց միասնական գործողությունների ընթացքը թեթևացնելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք առնե:

Բյուրոյի մեջ մասնակցում են ամեն յերկրի կուսակցություններից 2-ական հոգի և մի-մի հոգի էլ պարլամենտական պատգամավորների խմբակներից: Գործադիր կոմիտեն, վորի նախագահը Վանդերվելդեն էր, կենտրոն էր ընտրել Բրյուսելը, ուր տարեկան մի անգամ նիստ եյին ունենում և քննության առնում առաջադրված «սուբհանդակային» խնդիրները:

Յերկրորդ Ինտերնացիոնալի այդ կենտրոնը, համեմատած Առաջին Ինտերնացիոնալի հետ, վորը իր լայն իրավունքներով իրոք վոր ղեկավարի դեր էր վերապահել իրեն, թույլ եր. Բայց մենակ Ինտերնացիոնալի կազմակերպչական կառուցվածքը չէր, վոր խախտու էր, այլ և գլխավոր կուսակցությունները իրենց ներքին կյանքում նույնպես ուժեղ չեյին՝ շնորհիվ իրենց յերերուն, խայտաբղետ կազմին ու անորոշ գործելակերպին: Այսպես, 1900 թ. սոց.դեմ. համագումարում (գումարված՝ Հալլեյում), վորտեղ առաջին անգամ ընդունվեց դերման. սոց.դեմ. ծրագիրը, նրա գեկուցող Աուերն ասաց.—«Պետք է աշխատել, վոր կուսակցությունը բաղադրական միության բնույթ չկրի»: Թե ովքեր կարող են մտնել կուսակցության շարքերը, նույն գեկուցողը պարզում է կանոնադրության վորոշ կետեր և ավելացնում, վոր ամեն մի կուսակցական չպետք է կանոնադրի ամեն մի բառի իմաստով շարժվի, բավական է, վոր կուսակցական ծրագրի իմաստն ընդունում է, նա արժանի յե կուսակցության շարքերը մտնելու: Նույնպիսի թուլություններ և թերություններ տեսնում ենք նաև ֆրանսիական ու անգլիական կուսակցությունների կյանքում: Ինչպես հայտնի յե, նույն կարևոր խնդիրը դրվում է նաև Ռ. Ս. Գ. կուսակցության յերկրորդ համագումարում, 1903 թ. և Հեկնոնադրության առաջին կետի վերաբերյալ տարաձայնությունը հասցնում է մինչև կուսակցության պառակտման: Լենինը պահանջում էր, վոր կուսակցության անդամը, ծագի այն, վոր ընդունում է կուս. ծրագիրը, պիտի նաև մասնակցի կազմակերպության մեջ տարվող կենդանի աշխատանքին:

Յերկրորդ Ինտերնացիոնալը իր իսկական ոպորտյունիստական գույնով հանդես յեկավ հենց իր սկզբնական քայլերում: Չնայած վոր Պարիզի համագումարն իր ընդունած բանաձևով դատապարտում է սոցիալիստների մասնակցությունը բուրժուական կառավարության մեջ, բայց և այնպես բանաձևին ավելացրված է նաև այն, վոր այդ խնդրի վերջնական վճիռը թողնվում է առանձին յերկրների սոցիալիստներին:

Դրանով լայն հնարավորություններ են տալիս միջազգային ոպորտյունիստներին՝ իրենց ներքին գործերը «կատարել իրենց ուզած ձևով»: Յերք Ամստերդամի համագումարում այդ հարցը կրկին անգամ հրապարակ բերին, յերկարատե վիճաբանություններից պարզվեց, վոր նույնիսկ կենտրոն համարվող ուժերը (Կա-

ուցկին, Հաազեն) տրամադիր չեն ուժեղ դիմադրութիւն ցույց տալու ռպորտյունիստներին:

Ինտերնացիոնալի նման վերաբերմունքը նպաստում է զատ-զատ կուսակցութիւնների շարքերում ռպորտյունիստական հոսանքների ուժեղանալուն:

Աղիւսին իր մի հողվածում զգուշացնում է Ինտերնացիոնալին՝ չմիջամտելու կուսակցութիւնների ճենքին խնդիրների մեջ, ավելացնելով, վոր «միջազգային կոնգրեսը կարող է և պետք է լայնացնի մեր տեսակետները, ամրացնի մեր յեռանդն ու հավատը հաղթանակի նկատմամբ, իսկ մեզ կառավարելու հնարավորութիւնից նա զուրկ ե»: Նույն հարցի մասին Վանդերվելդեն, գործադիր մարմնի նախագահը, գրում է. «Մեր կարծիքով կոնգրեսը շատ ապարդյուն է փաստակար գործով կղքաղվի, յեթե մտադրվի հայտարարութեան սկզբունքով բնեւելու այն տարաձայնութիւնները, վորոնք գոյութիւն ունեն զանազան սոց. կուսակցութիւնների կյանքում: Չե՞ վոր մենք միջնորդ դատարան չենք»: Հենց այդպիսի տրամադրութեամբ ել Ինտերնացիոնալը ծայր տված խմբավորումների մասին կոչ է անում բոլոր յերկրների սեկցիաներին (վորոնք մինչև այսօր շարունակում են պառակտումը), վորքան կարելի յ շտապ կարգով վերականգնել միութիւնը, առանց հաշվի առնելու նրանց միջև յեղած սկզբունքային տարաձայնութիւնները:

II Ինտերն-
վերաբեր-
մունքը դե-
պիսիս
հոսանք-
ներ:

Նույն ռպորտյունիստական գործն է, վոր գրում է Յերկ-րորդ Ինտերնացիոնալին Լոնդոնի կոնգրեսից հեռացնելու այն մի շարք հոսանքներին, վորոնք պահանջում էին ընդունել քաղաքացիական կռիւի իրավունքը, մի բան, վոր Առաջին Ինտերնացիոնալն ընդունել եր՝ հակառակ բոլոր աջ հոսանքների ընդդիմադրութեան:

Նույն կոնգրեսը հանձնարարում է Բյուրոյին հաջորդ անգամ հրավիրել այն պրոֆմիութիւնների ներկայացուցիչներին, վորոնք ընդունում են պարլամենտական յեմ ռեֆուզալան գործնելութիւնը, յեմ այն քաղաքական կազմակերպութիւններին, վորոնք ընդունում են սոցիալիզմը: Միևնույն ժամանակ ընդգծվում է — «հետևապես՝ անարխիստները չեն կարող մասնակցել»: Այսպիսով, մինչև ուղի ու ծովը համաձայնողականութեամբ վարակված Տրեդ-Ունիոնները, դասակարգային կռիւ չընդունող ֆաբիանովցիները, մանր-բուրժուական սոց. հեղափոխականները, շովինիստական կուսակցութեան լեհական պեպեստովցիները և վերջապես՝ գաղափարա-

կան «զուլուրներ» դաշնակցութիւնը մնալով Յերկրորդ Ինտերնացիոնալի մեջ, պետք է ղեկավարել միջազգային պրոլետարական շարժումները, իսկ ձախ հոսանքները մնային դուրս:

Ինտերնացիոնալի կյանքում գոյութիւն ունեյին յերեք հոսանք, վորոնց հարաբերութիւնները պատերազմից հետո ավելի էին սրվել: Առաջինը կազմում եր Ինտերնացիոնալի մեծամասնութիւնը՝ իրենց սոցիալ-շովինիստական ուղղութեամբ. դրանց ամենացայտուն ներկայացուցիչն եր գերմանական սոց. դեմ.: Յերկրորդը — այսպես ասած կենտրոնը, վորի պարագլուխն եր Կ. Կաուցկին. սրանք ել վոչնչով չտարբերվելով իրարից, պատերազմից հետո միացան: Յերրորդ հոսանքի մեջ էին մտնում իսկական մարքսիստ հեղափոխականները, վորոնց ղեկավար մարմինն եր ռուսական բոյլշեիզմը, և վորոնք հետագայում հիմք դրին Կոմիւնտերին:

Յերկրորդ Ինտերնացիոնալն անկարող յեղավ տնտեսական և քաղաքական պայքարի հիմնական ուղիները միմյանցից զատելու և ճշգրիտ ուղղութիւն տալու:

Վերին աստիճանի թուլլ է յեղել կուսակցութեան ղեկավարութիւնը և՛ ինչպես Ռ. Լյուքսեմբուրգն է նկատում՝ չեն գիտակցել, վոր պրոֆմիութիւնների պայքարը ամբողջովին ընդգրկում է բանվորական շարժումների ալմյան շահերը, իսկ քաղաքականը — հետագայի շահերը: Այն ժամանակ, յերբ անհրաժեշտ է պրոլետարիատի սերտ միութիւնը, չեզոք պրոֆմիութիւնները վորոշում են հրաժարվել ընդհանուր գործադուլներից. նման յերևույթները տեղի յեն ունենում մի յերկրում, վորտեղ գոյութիւն ունեն գերմանական սոց. դեմ.: ուր տարածված էին Մարքսի ուսմունքի զանազան վարյանտների ինքնատիպ բացատրութիւնները, նրանց թեորետիկ մոտեցումները՝ սոցիալիզմի ամսիմանական զարգացման, հետզհետե ավելացող քաղաքական ուժերի մասին, վորի առթիւ ել ժորեսը Ամստերդամի կոնգրեսում, դառնալով գերմանացիներին, ասում է. «Դուք ձեր անուժութիւնը թագնում եք այն թեորետիկ ֆորմուլաների յետևը, վորպիսիք մինչև իր մեռնելու ուր ձեզ կմատակարարի ձեր այնքան սքանչելի ընկ. Կաուցկին»:

Յերկրորդ Ինտերնացիոնալը Պարիզի առաջին համագումարում ընդունեց միջազգային պրոլետարիատի հավաքական ուժերի ցուցադրման մի նշանակալից վորոշում, վորը հետագայում դարձավ աշխատավոր մասսաների դասակարգային կռիւի ամենա-

Քաղաքա-
կան հո-
սանքներ
II Ինտ. մեջ:

Պրոֆմիութի-
ւոն և երբ
և II Ինտեր-
նացիոն.-ը:

Մայիս-
մեկը:

գլխավոր խթաններից մեկը. դա ամերիկական պրոֆմիթյան՝ Աշխատանքի մեղմարացիայի կողմից առաջարկած աշխատավորական մայիս-մեկյան տոնի միտքն էր, յերբ ամեն օտարի մայիսի մեկին համաշխարհային պրոլետարիատը պետք է ցուցադրեր իր ուժը բուրժուազիայի հանդեպ և հրապարակ դնել իր բանվորական պահանջները: Այս սլոգան խնդրում ևս դերմանակուն սոց.-դեմ. ցույց է տալիս իր պոլորտյունիզմը: Ինտերնացիոնալի վորոշումը չի կիրառվում կյանքի մեջ և յերկրորդ անգամ այդ խնդիրը ըննության առնվելով, ընդունվում է հետևյալ վորոշումը. «Բոլոր յերկրների սոց.-դեմոկրատները պարտավոր են միջոցներ ձեռք առնել, վոր Մայիսի մեկին բոլոր բանվորները իրոք դադարեցնեն իրենց աշխատանքները և նպաստեն այն բոլոր կազմակերպություններին, վորոնք կցանկանան տոնել: Չնայած կրկնակի վորոշման, գերմանական սոց.-դեմոկրատիան այդ հարցը դնում է իրենց կուսակցական համագումարում. ընդունում են Ինտերնացիոնալի վորոշումը, բայց «...կուսակցության համագումարը առաջարկում է—մայիս-մեկյան տոնին թող մասնակցեն այն բանվորները կամ բանվորական կազմակերպությունները, վորոնց շահերին չի վնասիլ գործաթող լինելը»: Այս փաստը մի վերջին անգամ հաստատում է այն, վոր Ինտերնացիոնալի կենտրոնը վոչ մի ազդեցություն չունի թե առանձին կուսակցությունների և թե գերման սոց.-դեմ. վրա, և վորպես ինքնուրույն քաղաքական ուժ, Ինտերնացիոնալից անկախ, այդ կուսակցություններն ունեն յուրահատուկ գործելակերպ:

80-ական թվականների վերջերից սկսվում է ռուսական արդյունաբերության շրջանը, ուստի և հասարակական միտքը սկըսում է ազատագրվել նարոդնիկական ազդեցությունից: Ռուսական տակավին յերիտասարդ պրոլետարիատը, հանձինս նորակազմ սոց.-դեմ. սկզբնական բջիջների, հրապարակ էր յեկել վորպես միջազգային պրոլետարական ընտանիքի մի մասնիկ: 1889 թ. առաջին անգամ Ռուսաստանի ներկայացուցիչները մասնակցում են միջազգային սոցիալիստական միության:

Համագումարին զեկուցում են յերկու ռուս եմիգրանտներ. ժողովրդական ազատության կուսակցության կողմից—Պյոտր Լավրովը, և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների կողմից—Պլեխանովը:

Այդ համագումարին Պլեխանովի արած զեկուցումը նույնիսկ այժմ ունի իր նշանակությունը: Վերլուծելով այդ շրջանի ռուսա-

կան մասսաների սոցիալական կազմը և փոխարաբերությունները, Պլեխանովը կանգ է առնում ցարերի՝ «ոճյալ ժանդարմների» խմբակի վարած բռնակալական քաղաքականության վրա թե՛ յերկրի ներքին կյանքում և թե՛ ցարի ռեակցիոն ազդեցությունը համաերակալան ազատագրական շարժումների վրա տարածելու խնդրում: Պլեխանովը հանգում է այն յեզրակացության, վոր «Ռուսաստանի հեղափոխական շարժումների հաղթանակը հանդիսանում է նայել Յեվրոպայի բանվորության հաղթանակը», և վերջացնելով՝ վորոշակի կերպով հայտարարում է, թե՛ «Ռուսաստանի հեղափոխական շարժումը կարող է հաղթանակել վորպես լոկ բանվորական շարժում, ուրիշ կերպ վոչ մի դեպքում հաղթություն չի լինի»:

Պլեխանովի այդ բնորոշումը, վոր նա տվել էր 30 տարի առաջ, ճիշտ էր, և Ռուսաստանում հեղափոխական հաղթանակը տարավ միմիայն բանվոր դասակարգը:

Ռուսաստանի դրության մասին Պլեխանովի ղեկուցումը Յերկրորդ Ինտերնացիոնալի վրա այնպիսի խոր ազդեցություն է թողնում, վոր նույնիսկ հրապարակ է նետվում «Կոիվ ցարի դեմ» ռազմական լողունգը:

Չնայած ռուսական պատգամավորությունը կոնգրեսի նիստին ձեռնպահ էր մնացել, գտնելով, վոր նման մայիսյան ցույցեր ցարական ռեժիմի պայմաններում միանգամայն անկարելի յեն, բայց և այնպես հենց առաջին տարվանից ռուսական բանվորական մասսաները հարազատ արտահայտիչը հանդիսացան Ինտերնացիոնալի վորոշումների, և տարեց-տարի ցույցերը դարգացնելով արտը Մայիս մեկը տոնում են իրենց սեփական իշխանության հովանավորությամբ, մինչդեռ նման վորոշումները կեղծող, խարդախող գերման սոց.-դեմոկրատները Գինդենբուրգի կրունկներն են լիզում:

Յերկրորդ Ինտերնացիոնալի առաջ կրկին անգամ ծառանում է քաղաքացիական կռվի հարցը: Ինտերնացիոնալն իր վոչ մի համագումարում հրապարակ չի բերել պրոլետարական դիկտատուրայի հնարավորության և կարեորության խնդիրը: Միշտ, յերբ խոսք է յեղել այդ մասին, ընդունվել են մշուշապատ և բողբոջված բանաձևեր: Քաղաքացիական կռվի շուրջը, Լոնդոնի կոնգրեսում անարխիստները ներկայացնում են մի բանաձև, ուր ի միջի այլոց ասված էր. «Մենք դեմ ենք այն բարենորոգումներին, վորոնք բղխում են պետությունից. մեր միջոցներն են՝ ընդհանուր գործադուլը, ֆերմերների գործադուլը, գինվորականների գործադուլը, վերջապես ըմբոստացման բոլոր ձևերը»:

Քաղաքացիական կռվի հարցը:

Ռուսաստանի մասնակցությունը:

Ինչ խոսք, վոր Ինտերնացիոնալը վճռական կերպով մերժում է այդ բանաձևը:

Բայց Ինտերնացիոնալը անկարող չեղավ նույն վճռականութունը ցուցադրել աջից յեկող վտանգի դեմ, յերբ վերջինս վորոշել եր Մարքսի թեորիան իրենց ուղածի պես ըննության յենթարկելու:

Գաղութա-
յին և ազգ-
հարցեր:

Չարմանալի վոչինչ չկա, վոր նման արիստոկրատ սոցիալիստները վազ անցնելին «սեամորթներին», այլ խոսքով՝ գաղութային հարցի վրայից. Ինտերնացիոնալը արևելյան յերկրների սոցիալիստական կազմակերպություններին իր մեջ չընդունեց և մինչև իր վերջին որն ել չկարողացավ հասկանալ իմպերիալիզմի քայքայիչ նշանակությունը, նրա գաղութային քաղաքականությունն ընդհանրապես: Յերբ Ամստերդամի կոնգրեսում ինդուս Դեդաբլա Նաորոշին Ինտերնացիոնալից ոգնություն եր խնդրում Հնդկաստանի ժողովուրդների վերաբերմամբ՝ Անգլիայի կողմից տարվող ավերածությունների դեմ, Ինտերնացիոնալը վորոշում է կոչ անել անգլիական բանվորներին՝ առաջադրելու իրենց կառավարության—«ներկա գաղութային ձեերին վերջ դնել և Անգլիայի գերիշխանության տակ Հնդկաստանին ինքնավարություն տալ»:

Այն ժամանակ, յերբ Ինտերնացիոնալը երոպական ժողովուրդներին իր բանաձևերով աջ ու ձախ «տրամադրում եր» ազգային կուլտուրական ինքնավարություններ, ուրիշների համար ասում է՝ «տալ այնպիսի ազատություն և ինքնավարություն, վորը կհամապատասխանի նրանց զարգացողության չափին»:

Ազգային հարցն իր լայնությամբ առաջին անգամ Յերկրորդ Ինտերնացիոնալի կյանքում առաջ է քաշում Լենինը, վորը գլխավորապես Ռ. Լյուքսեմբուրգի հետ ունեցած սկզբունքային վիճաբանությունից դեմը չի անցնում, և Ինտերն-ը այդ խնդիրը ուղարկում է Նույնպիսի «ուղարկության» են արժանանում նաև հոլային և գլուղացիության վերաբերյալ հարցերը:

Վերջապես, մեզ անհրաժեշտ է կանգ առնել պատերազմի հարցի վրա, վորն այնքան ճակատագրական հանգիստացավ Յերկրորդ Ինտերնացիոնալի համար:

Լոգուևգր-
քարի դեմ:

Թե Յերկրորդ Ինտերնացիոնալի կյանքում միլիտարիզմի և պատերազմի խնդիրները վորքան են յեղել ժամանակի հրատապ խնդիր, ցույց է տալիս այն, վոր համարյա բոլոր կոնգրեսների որակաբերում դրված են յեղել այդ խնդիրները: Պատերազմի

հարցերը ունեցել են յերկու շրջան. մեկը—ցարի դեմ լողունգը, մյուսը—իմպերիալիզմի դեմ:

Ռուսական պատերազմը համարվում եր միջազգային «եակցիա» 1848 թ. հեղափոխության մեջ կատարած քաջագործություններով. 1891—92 թվականներին Ֆրանս-ռուսական միությունը բավական իրարանցում է ձգում գլխավորապես գերմանական սոց.-դեմոկրատիայի շարքերը. կասկածում են, վոր այդ միությունը ուղղված է Գերմանիայի կողմը, և վերջապես ցարիզմը, այդ ամենայնատմաց, միահեծան իշխանությունը՝ մուտք գործելով կուլտուրական յերկրները՝ տակն ու վրա կանի կուլտուրական արժեքները: Նման դեպքերում, ընդելսը առաջ է քաշում այն միտքը, վոր Գերմանիան, պատերազմելով և հաղթելով Ռուսաստանին, կատարած կլինի ազատագրական պատերազմ: Այդ հարցը դրված եր Յուրիխի համագումարում, ուր գեկուցող Պելխանովը իր ճառի մեջ նույն միտքն է հայտնում, ինչ վոր կոնգրեսի մեծամասնությունը: Պելխանովը բարձր արամադրությամբ բացականչում է. «Մեր գերման բարեկամները վորքան շատ հարձակվեն դուստական ցարիզմի վրա, այնքան մենք շնորհակալ կլինենք նրանցից: Կեցցե՛ք» բարեկամներ! Չախջախեցե՛ք նրան գլխովին, նստեցրե՛ք նրան դատապարտյալի աթոռի վրա՝ վորքան կարող եք շատ անգամներ, հարվածեցե՛ք նրան ամեն տեսակի միջոցներով»:

Այս բոլորից հասկանալի չէ դառնում, թե ինչու 1905 թ. հոլսական հեղափոխությունը այնչափ հիացում առաջ բերավ բոլոր յերկրների հեղափոխական մասսաների շարքերում և Ու. Լեն-տերնացիոնալի Ամստերդամի կոնգրեսը իսկույն իր ջերմ վողջույններն ուղղեց սկսվող հեղափոխության, նկատելով, վոր Ռուսաստանի պրոլետարիատը, կռվելով իր սեփական ազատագրության համար, նույն է թե կռվում է նաև միջազգային պրոլետարիատի ազատագրության համար: Շտուդգարդի կոնգրեսը, գումարված լինելով 1905 թ. հեղափոխության տաք շրջանում, իր մի բանաձևի մեջ ասում է. «Ռուսական հեղափոխությունը, վորը չնայած նոր է սկսված, բայց արդեն դարձել է ամենակարող ուժը աշխատանքի և կապիտալի կռվի ասպարիզում. կոնգրեսն ուղարկում է իր յեղբայրական վողջույնները հերոսաբար կռվողներին՝ գլուղի և քաղաքի պրոլետարիատին»:

Կոնգրեսներում ընկված խնդիրների շարքում աչքի չեն ընկնում ֆարքիկ-գործարանային միջազգային սրենսդրությունը, վորով սահմանվում է բանվորական 8-ժամյա օր, արգելվում է 16 տարեկան

Վողջունա-
գիր ուս-
նեղ ա փ ո-
խությալք:

չդառած պատանիներին կատարել տալ գիշերային աշխատանք, վոր արգելվում է կանանց աշխատանքը այն հիմնարկություններում, ուր կարող է վատ ազդել նրանց որդանիզմի վրա, սահմանվում է լրիվ կրթություն—ընդհանուր, տեխնիքական ու արհեստակցական, շաքաթական 36 ժամ անդադար հանդիստ, քաղաքացիական և քրեական պատասխանատվություն հիմնարկությանց տերերի համար՝ բանվորներին հասած դժբախտ դեպքերում, կանանց և տղամարդկանց աշխատանքների հավասար վարձատրության սկզբունքի կիրառում, այն նյութերը, վորոնք ֆրասակար կարող են լինել գործարանային կյանքում, պետք է փոխարինել ուրիշ նյութերով, պետք է հիմնել աշխատանքի տեսչություն և միջազգային գործարանային տեսուչների միություն, պետք է բանվորներին ապահովագրել, ընտելություն են առնված յեղել նաև հողային, կանանց և պետության վերաբերյալ հարցերը։

Պատերազմի մասին:

Նկատենք, վոր պատերազմի խնդիրը Յերկրորդ Խնտերնացիոնալի կենտրոնական հարցերիցն է։

Բոլոր բանաձևերումն էլ դուք կգտնեք պատերազմը՝ դադարեցնելու մասին, բայց հետաքրքիր է լսել կոնգրեսի վորոշումները։

1889 թ. (Պարիզ)։ Մշտական գործի փոխարինումը՝ ժողովրդական միջոցառում։

1891 թ. (Բրյուսել)։ Կոչ է անում բոլոր աշխատավորներին անվերջ ագիտացիայի միջոցով բողոքել ամեն անգամ, յերբ պատերազմի փորձ կկատարվի... և հայտնում է, վոր համենայն դեպս պատասխանատվությունը դնում է ղեկավար դատակազմի վրա։

1893 թ. (Ցյուրիխ)։ Բանվորական կուսակցությունների պատգամավորները պարտավոր են մեծելու այն բոլոր վարկերը, վորոնք պետք է ծախսվեն պատերազմի դեպքում և պետք է բողոքել մեծական գործ պահելու դեմ։

1896 թ. (Լոնդոն)։ Բոլոր յերկրների բանվորները պետք է գեմ լինեն ամեն մի բռնություն, վոր առաջ կգա պատերազմի հետևանքով, ճիշտ այնպես, ինչպես բանվորությունը դեմ է կանգնում տիրող դասակարգերի կատարած բռնություններին։

1900 թ. (Պարիզ)։ Բոլոր յերկրների սոցիալիստ պատգամավորները պարտավոր են դեմ ձայն տալու այն վարկերին, վորոնք պետք է գործադրվեն զորքի և գաղութային պատժիչ զորամասերի պետքերին։

1907 թ. (Շտուտգարդ)։ Յերբ պատերազմը ծագելու լինի, սոցիալիստները պարտավոր են միջամտել, վորպեսզի ոգծագործ

ծվի պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական և քաղաքական ճգնաժամը՝ ժողովուրդը ապստամբեցնելու և դրանով կատարելատեղյակ թագավորության վախճանը արագացնելու համար։

1910 թ. (Կոպենհագեն)։ Անդամաձայն պարտականություն է, վոր ամեն մի պատգամավոր պետք է ձայն տա պատերազմական ծախսերի դեմ։

1912 թ. (Բադել)։ Պրոլետարները հանցանք են համարում իրար վրա զնդակ արձակելը, քանի վոր դա հոգուտ կապիտալիստներին և լինելու (Լենին)։

Ահա այս համագումարների մի շարք վորոշումները ողջ ցնդեցին ճիշտ այն մոմենտին, յերբ պատերազմը սկսվեց։ Խնտերնացիոնալի ներսում տասնյակ տարիներով բուն դրած ոպորտյունիզմը իր իսկական գույնով հանդես յեկավ, առանց վորեք ջանք թափելու իմպերիալիստների վոտնձգությունների դեմ բողոքելու։

Յերկրորդ Խնտերնացիոնալի մարքսիստները անկեղծորեն ամեն պատեհ առիթին կրկնում էին Մարքսի խոսքերը, բայց յերբ գալիս էր այդ խոսքերը իրականացնելու բողոք, իսկույն ամենախայտառակ կերպով նահանջում էին։ Կլարա Յետկինը դեռ 1918 թ. ոռուս մենշևիկների—Պլեխանովի և Մարտովի հասցեյին ասել էր, վոր նրանք կարողանում են շատ խելոք բաներ դրել անցյալ և ապագա հեղափոխությունների մասին, բայց չեն կարողանում ըմբռնել, յերբ որվա խնդիր է դառնում այդ հեղափոխությունը։

Գերմանական սոց-դեմ- ղեկավարները, հենց վոր պատերազմը սկսվեց, նույնիսկ ամենապայտնի մարքսիստ-թեորետիկ Կաուցկու բերանով հայտարարեցին. «Խնտերնացիոնալը խաղաղ ժամանակի գործիք է. պատերազմի ժամանակ ամեն մի յերկրի սոցիալիստ պարտավոր է իր յերկրի շահերը պաշտպանելու՝ ընդդեմ դրա թշնամու»։

Ղեկավար կուսակցությունների «խոսքից գործի» անցնելու հակասությունները փոխված են Խնտերնացիոնալի ամբողջ 25 տարվա գործնելության պատմության ճամբին, վորի վրա արդեն մատնացույց ենք արել և դեռ անհրաժեշտ է խոսել։

Շտուտգարդի համագումարը (1907 թ.) իր աշխատանքները ամբողջովին տարել է «Իմպերիալիզմի դեմ պայքար» մղելու նշանաբանով։ Բայց գաղութային հարցում Խնտերնացիոնալի ղեկավարները դարձյալ ֆուում էին իրենց հին տեսակետի վրա։ Շտուտգարդը հայրենիքի կույր պաշտպանություն անհրաժեշտությունը պատճառաբանում են աշխատավորական շահերի տեսակետից, որի-

Գերմ. սոց. դեմ.-ի դավաճանությունը:

Չախ բեվի
վերաբեր-
մունքը:

նակ, ֆորմալը իր հայրենասիրական ձգտումները քողարկում է նրանով, վոր «Յեռյակ Միությունը մարդկության համար առաջադեմ ֆակտոր է»։ Իսկ Բեքելը առաջ եր քաշում «ռուսական ժանդարմերիական վտանգի» լեգենդան՝ առանց հիշելու 1905 թ. ռուսական հեղափոխությունը և հետագայում զարգացող հեղափոխական շարժումները, Կառուցելին պատերազմի նախորդակին գրում եր. «Յեթեպատերազմը ծագելու լինի, հազիվ թե վորևէ յերկրում պրոլետարիատը իրեն ուժեղ զգա այն չափով, վոր հնարավոր լինի պատերազմը դադարեցնել հեղափոխություն միջոցներով»։

Ինտերնացիոնալի մեջ կար ձախ թե, հանձինս Լենինի, Ռ. Լուքսեմբուրգի, Պանիկովի և այլն, վորոնք կանգնած լինելով հեղափոխական մարքսիզմի տեսակետների վրա, ցույց եյին տալիս տիրող ոպորտյունիստական ուժեղ հոսանքների կորստաբեր տեսակետները։ Բայց ձախ թեի հոսանքին հարողների թիվն այնքան քիչ եր, վոր նրանց ձայնը հաշվի չեր առնվում այս կամ այն խնդրի քննության ժամանակ։ Ետուղգարդի համագումարում, պատերազմի խնդրի շուրջը կազմած հանձնաժողովում Ռ. Լյուքսեմբուրգը ձախ թեի կողմից հայտարարում է. «Մենք պահանջում ենք, վոր վոչ միայն ագիտացիայի միջոցով վերջ տրվի պատերազմին, այլև այն, վոր պատերազմը ոգտագործվի դասակարգային գերիշխանության անկման համար»։

Յերկրորդ Ինտերնացիոնալի Ետուղգարդի համագումարին պատերազմի դեմ ընդունված բանաձևի հեղինակներից մեկն եր նաև ընկ. Լենինը. և յերբ Ռ. Լյուքսեմբուրգի հետ միասին առաջարկում են ընդունել, վոր պատերազմի դեպքում անհրաժեշտ է հայտարարել հեղափոխություն, ուրիշ խոսքով՝ քաղաքացիական կռիվ, համագումարի մեծամասնություն կազմող մտավախ պատգամավորները այդ բանաձևին տալիս են քողարկված ձև, վոր պեսզի «սագերին չլղայնացնեն», ինչպես բացատրել և Բեքելը Լենինի բողոքի առթիվ։ Ինչ խոսք, վոր այդ «լղայնացող սագերը» այն բուրժուազիան եր, վորի շնորհիվ պատերազմ-մոլոխի գիրկը նետվեցին դեղին Ինտերնացիոնալի յերկրպագուները, յերեի դարձյալ «սագերի» անգործությունը չխանգարելու համար։

Յեվ յերբ պատերազմի որերում ընկ. Լենինը, Ետուղգարդի այդ բանաձևը հիշեցնելով, պահանջում եր Բեքելի մուրհակը հաշվհարդարի յենթարկել, այսինքն՝ «սագերի ջղայնություն» հարցը այլևս վերացնել ու բռնել հեղափոխության ուղիները, դեղին Ինտերնացիոնալի ղեկավարները՝ այդ խնդրի վրայից անցնելով՝

դադարում են հերթական խնդիրներով. այսպիսով ամեն մի «որոշման»-ի ազատություն է տրվում մտնելու իր կառավարության ախոռները։

Բալկաններում տեղի ունեցած պատերազմի առթիվ (1912 թ. 11 Ինտերն.-ի անկումը: 24—25-ին) գումարած արտակարգ խորհրդակցու-

թյունն ևս իր վճռական խոսքն է ասում և իր մանիֆեստում զգուշացնում է տիրող դասակարգերին՝ պատերազմ չսկսել, սպառնալով Պարիզի Կոմունայով և Ռուսաստանի հեղափոխությամբ, վորոնք առաջ են յեկել պատերազմների հետևանքով։ Մինչ սոցիալիստական կուսակցությունները կվիճեյին իրենց անելիքների մասին, պատերազմը բռնկվում է և բոլոր իմպերիալիստական պետությունները սկսում են թնդանոթների լեզվով խոսել։ Գերմանիան հայտարարվում է պատերազմական դրություն մեջ և արգելվում է պատերազմի դեմ ցույցեր կազմակերպելը։ Գերման. սոց.-դեմ. հաշտվելով այդ դրության հետ իր մի կողմի մեջ այսպես է ասում. «Վարվենք այնպես, ինչպես միշտ հայտարարել ենք. վտանգի միջոցին մենք հայրենիքն առանց ողնության չենք թողնիլ։ Մենք գիտակցում ենք, թե մեր գործողության մեջ համերաշխ ենք Ինտերնացիոնալի հետ, վորը ճանաչում է յուրաքանչյուր ժողովրդի ինքնորոշման և ինքնապաշտպանության իրավունքը։ Ինտերնացիոնալի հետ համամիտ՝ մենք դատապարտում ենք նվաճողական ամեն մի պատերազմ։ Այս կերպ ղեկավարվելով՝ մենք ձայն կտանք պահանջված վարկերի համար»։

Ժորեսը պատերազմի նախորդակին վարձու զնդակով սպանվում է՝ վորպես պատերազմի ամենավտխրիմ թշնամի, և մյուս որը Ֆրանսիական սոցիալիստները հայտարարում են, վոր իրենք պետք է ձայն տան պատերազմական վարկերին, յեթե Ֆրանսիայի վրա հարձակվեն։ Անգլիական սոցիալիստներն ևս իսկույն անցնում են հայրենիքի պաշտպանության գործին։

Ռուսական սոց.-դեմ. ականավոր ղեկավար Պլեխանովը իր վերաբերմունքը պարզում եր հետևյալ խոսքերով. «Երբեք վոր յես հին հեղափոխական եմ, գիտեք և այն, վոր 25 տարի յե ինչ կովում եմ ցարի դեմ, բայց և այնպես ասում եմ, վոր այն կռիվը, վոր այստեղ վարում է Ռուսաստանը, արդարացի կռիվ է, և մենք պետք է դադարեցնենք մեր պայքարը ուսել իշխանության դեմ»։

Պլեխանովի այդ խոսքերից հիացած, կաղետական կուսակ-

ցոթթյան կենտկոմի անդամ Իզգոյեը անա թե ինչ եր ասում է ինչպես եր վողջուհում այդ պատմական ուժերին»։ «Վաստակել ենք իսկական պատմական ուժեր»։ պարզվել է, վոր այլևս գոյություն չունեն սոց.-դեմ. ուժեր, վորոնք դեմ գնային բուրժուական աշխարհին։ Գոյություն ունեն միայն ազգային բանվորական կազմակերպություններ, վորոնց ղեկավարները իրենց անվանում են սոց.-դեմոկրատներ» («Ռուսական Մըսը», ոգոստոս, 1914 թ.)։

Լենինը 1915 թ. Կրակովից ղեկավարում եր Լենինգրադի «Պրավդա»-ն։ Լսելով, վոր ռայխստագում սոց.-դեմ. ձայն է տվել պատերազմական ծախսերի ոգտին, խորը հառաչելով բացականչում է. «Այսօրվանից Յերկրորդ Ինտերնացիոնալը մեռավ»։

Լենինի և Ռ. Լյուքսեմբուրգի գլխավորությամբ գոյություն ունեցող ձախ թեք չի դադարում գործելուց. այդ խմբակի վոգին ներկայացնում եր Լենինը. այդ խմբակը բուռն կերպով սկսում է իր հակապատերազմական ուժեղ պրոպագանդը։ Այս շրջանում ուսժական սոց.-դեմ. կոմիտեյի անդամները ամբողջովին բոյլշևիկներ եյին, և առաջինն այդ կուսակցությունն եր, վոր պատերազմի դեմ Լենինի խմբագրած մանիֆեստը տվեց հրատարակության։ Այդ պատմական փաստաթղթի մեջ միանգամայն վորոշակի հայտարարելով Յերկրորդ Ինտերնացիոնալի խորտակումը, ընդգծում է այդ վողբերդական վերջավորությունը հետևյալ բնորոշումով. «Ոպորտյունիստները շատ վաղուց եյին պատրաստում դրա խորտակումը. նրանք բացասելով սոցիալական հեղափոխությունը, այդ փոխարինում են բուրժուական բարեկարգությանը, բացասելով դասակարգային կռիվը, վոր նշանավոր մոմենտներում պետք է փոխարինվի սոցիալական հեղափոխությունը, քարոզում եյին դասակարգերի միասնական գործնելություն... Չի կարելի սոցիալիզմի խնդիրները լուծել, չի կարելի իրականացնել իսկական ինտերնացիոնալ բանվորական միություն՝ առանց ոպորտյունիստներից վերջնականապես բաժանվելու և նրանց անխուսափելի անկումը մասսաներին բացատրելու։ Պրոլետարական ինտերնացիոնալը չի մեռել յեվ չի ել մեռնիլ։ Բանվորական մասսաները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, կստեղծեն նոր ինտերնացիոնալ Ոպորտյունիստների ներկա խրախճանքը յերկարատե չե։ Վորքան շատ լինին պատերազմի զոհերը, բանվոր դասակարգն այնքան շուտ կըմբռնի այն դավաճանությունը, վոր թույլ տվին ոպորտյունիստները, և բանվորներն իրենց զենքերը կուղղեն իրենց կառավարության և բուր-

ժուազիայի դեմ։ Ներկա համաշխարհային պատերազմը վերածելով քաղաքացիական կռիվի, դա այն ուղիղ պրոլետարական ռզուլտեն է, վոր ցույց է տվել Պարիզի Կոմունայի փորձը և Բագելի (1912 թ.) բանաձևը»։

Այստեղ ցուցադրվում է ձախ թեխի ամբողջ վերաբերմունքը դեպի ստեղծված դրությունը, մի վերաբերմունք, վորին դեմ եյին ոպորտյունիստական տարրերը։

Այսպիսով, Յերկրորդ Ինտերնացիոնալը մահվան դատապարտվեց իր ոպորտյունիզմի շնորհիվ. այդ ելք փակեց կարա Ցետկինի արտասանած դամբանականով. «Յերկրորդ Ինտերնացիոնալը չեք կարող նույնիսկ վրկնել Ֆրանցիս Առաջինի խոսքերը» — «ամեն ինչ կորած է՝ բացի պատվից», վորովհետե Յերկրորդ Ինտերնացիոնալը ամենից առաջ կորցրեց պատիվը՝ պարտվելով առանց վորեք կռիվի։ Նա, խայտառակությամբ ծածկված, ընկավ հենց այն կռիվ դաշտում, յորի վրա գերմանական և ֆրանսիական պրոլետարները կոտորում եյին միմյանց՝ գերմանական սոց.-դեմ. և ֆրանսիական միտցյալ սոց. կուսակցությունների որհնությամբ։ Յերկրորդ Ինտերնացիոնալի փառահեղ արտաքինի տակ, նրա փայլուն դադաղի տակ ծածկված եր փոքրոգի և թուլամորթ հոգի, վորը անձնատուր լինելով աննշան, բարեկարգություններին, մոռանում եր ձգտել սոցիալիզմի իսկական գանձին, մոռանում եր նույնպես, վոր սոցիալական դանդաղ եվոլյուցիային անպայման պետք է հաջորդե հեղափոխական բուռն զարգացման շրջանը։

ՅԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

«Առաջին ինտերնացիոնալը հիմք դրեց սոցիալիզմի ոգտին մզվող պրոլետարական միջազգային պայքարի»

Յերկրորդ ինտերնացիոնալը մի շարք յերկրներում լայն մասսայական շարժում տարածելու հիմքերի նախապայտրաստման մի եպոխտ յե յեղել:

Յերկրորդ ինտերնացիոնալն ընդունեց Յերկրորդ ինտերնացիոնալի աշխատանքի պտուղները, դեն ձգեց նրա ոպորտյունիստական, սոցիալ-շովինիստական, բուրժուական և մանր-բուրժուական արատները և սկսեց իրականացնել պրոլետարիատի դիկտատուրան:

Լեճին

Պատերազմի հետեվանքներ: Համաշխարհային պատերազմը հանդիսացավ միջազգային կապիտալիստական կուլտուրայի, նրա հեգեմոնիայի առաջին և ուժգին հարվածողը: Նա դիմազերծ արեց բուրժուական հասարակակարգի խարդախ դեմքը և միջազգային աշխատավորական մասսաների համար մատչելի դարձրեց նրա ձգտումների իսկական արժեքը: Յեթե բուրժուազիան պատերազմին լծված ըոպեյին իր առնական ուժի մեջ եր, սակայն պատերազմը վերջանալուց՝ պարտված եր բոլոր ճակատներում, թուլացած, յենթարկված անդամալուծության: Պատերազմը ցույց տվեց, վոր կապիտալիզմը ավարտում ե իր պատմական միսսիան և հերթական խնդիրն դառնում նրան փոխարինող հասարակակարգի անհրաժեշտությունը: Չնայած վոր պատերազմից անցել ե արդեն 13 տարի, բայց դեռ նրա ավերածության հետքերը մնում են շատ յերկրներում:

Հսկա քանակությամբ նյութական և ֆիզիքական ուժեր են զոհաբերվել պատերազմին: Բավական ե հիշել, վոր միայն

Յրանսիայից գրաված յերկրամասերում իսպառ վոշընչացվել են 280.147 շինություններ, քսավել—422.736, փչացել են 53.976 կիլոմետր ճանապարհներ, 1.121 կիլոմետր ջրանցքներ, քանդվել են 4.677 կամուրջներ, 4.484 արդյունաբերական հիմնարկություններ: Բոլոր յերկրներում և պատերազմի բոլոր ճակատներում սպանվել են 10 միլիոն ամենաառողջ և աշխատանքի կենսունակ մարդկային կյանքեր, ինչպես նաև 20 միլիոն վիրավորներ, վորոնց 50%-ը աշխատանքի անընդունակ են դարձել: Այն ժամանակ, յերբ Գերմանիայում 1913 թվին ցորեն եր արտադրվում 4,4*,—1917 թ., այսինքն պատերազմից հետո, ամենաուժասպառ տարին այդ թիվը իջել ե 2,2-ի, — ճիշտ կեսի. նույնը—գետնախնձորը, հաճարը և այլն: Գյուղատնտեսական շնչավոր և անշունչ ինվենտարի (ձի, յեղջյուրավոր անասուններ, խոզ, մեքենաներ և այլն) կեսից ավելին վոշնչացել ե: Նույն պատկերն ե ներկայացնում նաև լեռնային հարստությունների արտադրությունը. քարածուխ՝ 1913 թ.—1915 ** 1918 թ.—160,5, չուգուն՝ 1913 թ.—19,3, 1918 թ.—11,9, դեղին մետաղ՝ 1913 թ.—35,9, 1918 թ.—26,9: Արտադրող արդյունաբերությունը կրճատվում ե մոտավորապես 50%-ով: Գերմանիայի պետական պարտքը պատերազմից առաջ կազմում եր 11 միլիարդ, իսկ պատերազմը վերջանալուց արդեն հասել եր 150 միլիարդ մարկի***, Նույն չափ տուժել են նաև Գերմանիայի դաշնակիցները—Տաճկաստանը, Ավստրո-Վենգրիան, Բուլղարիան:

Անտանտայի շարքերում ամենամեծ տուժողներից ե Յրանսին, վորի պարտքը 33 միլիարդ ֆրանկից**** բարձրանում ե մինչև 200 միլիարդի. թուղթ փողի քանակը 6 միլիարդ ֆրանկից բարձրանում ե 30 միլիարդի. և Յրանսիայի դրամական ճգնաժամը մինչև այսոր ել տակավին շարունակվում ե: Պատերազմի վրա ծախսված ընդհանուր (բոլոր յերկրներում) գումարը հասնում ե 337 միլիարդ դոլլարի)*****:

Շնորհիվ թուղթ դրամի՝ վոսկու արժեքից ավելի բաց թողնշուն, դրամի արժեքն ընկնում եր և դրանից ամենից առաջ տուժում եյին նրանք, վորոնք իրենց ուժը ծախում եյին անարժեք թուղթ

* Հաշված միլիոն տոններով:

** Նույնպես հաշված միլիոն տոններով:

*** Մարկը = 47 կ. վոսկով:

**** Յրանկը = 37 կ. վոսկով:

***** Դոլլարը = 1 ր. 94 կ. վոսկով:

դրամներէ: Տնտեսապէս և ֆիզիքսպէս հյուսիսէն ընդհանրական պետութեանները, պարզ և վոր պետք և ամեն կերպ աշխատելին վերականգնելու իրենց նախկին դրութիւնը և ինչ խոսք, վոր այդ արվում էր նույն տուժած մասսայի հաշիւին, դնելով նրանց վրա զանազան ուղղակի և անուղղակի հարկեր:

Պատերազմող կողմերից Անգլիան ամենաքիչ տուժողն և յեղել նախ նա ուշ սկսեց ակտիվ մասնակցել պատերազմին, և յերկրորդ, նա իր աշխարհագրական դիրքի շնորհիւ, շատ քիչ զորք և հրապարակ հանել, ուստի և ամենից քիչ տուժել: Թուլացել է Անգլիայի միայն բնական հարստութիւնների արտադրութիւնը: Անգլիան իր հմտութեամբ կարողացել էր յերկրի ներսում, մի շարք նախնական միջոցներով, դրամի արժեքը կայուն դարձնել և դրանով պահպանել հարկավոր հավասարակշռութիւնը: Բայց քաղաքական ասպետ Անգլիան պատերազմից մի այնպիսի ֆնաս կրեց, վոր այլևս չի կարող վոչ մի ուժով ու միջոցով վերականգնել, այդ—նրա ուժի և հզորութեան անկումն և միջազգային քաղաքական կյանքում:

Ամերիկա

Ամերիկան, վոր իր արդյունաբերական կյանքի հսկայական աճումը մի չտեսնված արագութեամբ սկսեց XIX դարի վերջերից, այժմ Անգլիոյի առաջնութիւնը վերցրել է իր վրա: Դեռ 1887 թ. Ամերիկան Անգլիայից յետ եր ֆնացել քարածուխի և չուգունի արտադրութեամբ: Շնորհիւ նրան, վոր հարավային Ամերիկայի նեգրերը աղատագրվում են (1864 թ.) ճորտութեանից և, պլանտատորների շահերի տեսուկեանից նրանց տրվում է նաև ընտրողական իրավունքը—սկսվում է արդյունաբերական Հյուսիսի և հում նյութերով հարուստ Հարավի տնտեսական կյանքի արագ աճումը: Ամերիկայի տնտեսական ուժեղութիւնը պայմանավորվում է նրա յերկրների անսպառ հարստութեամբ,—հողամասերի բերրիութեամբ, քարածուխի, յերկաթի, նավթի, պղնձի, արծձի, ցինկի, վոսկու և արծաթի հանքերով:

Վոչ մի յերկրում կապիտալը կուտակման պրոցեսին այնչափ չէ յենթարկված, ինչպես Ամերիկայումն և Ամերիկան տրեստների հայրենիք և Ամերիկական պողպատի տրեստն ընդգրկում է 80% յերկրների արդյունաբերութիւնը: Նավթի «Մտան» դարդ Ոյլ» տրեստն ընդգրկում է 80%-ը նավթային հարստութիւնների և նրա գործնեյութիւնը տարածվում է ամբողջ աշխարհում: Մսի տրեստն ընդգրկում է բոլոր մսի առևտրի 70%-ը և ունի իր բաժանմունքները Արգենտինիայում և Ավստրալիայում:

Շաքարի, թութունի, ողու, բրդի և այլ տրեստները ընդգրկում են համարյա բոլոր միավորներին և տիրում նրանց հում նյութերին ևս: Զուգահեռաբար, տրեստների հետ միասին զարգանում է ֆինանսական կապիտալի կուտակման պրոցեսը, միացնելով բոլոր բանկերը, վորոնց գլուխ են կանգնած Ռոկֆելլեր և Մորգան հայտնի միլիարդները: Սրանց ձեռքին է վոչ միայն բոլոր տրեստների և սինդիկատների ամբողջ բախտը, այլ նույնիսկ յերկրի, պարլամենտի, պրեզիդենտի, և այդպես, ֆինանսական ամենահզոր կապիտալը, իր փերի մեջ առած՝ դեկավարում է Ամերիկայի տնտեսական, հետևապէս և քաղաքական կյանքը:

Յերբ ծագեց համաշխարհային պատերազմը, Ամերիկան իր զարգացած արդյունաբերութեամբ և ֆինանսական կապիտալով հանդիսացավ պատերազմի միջազգային կապալառուն և իր տնտեսական կյանքը հարմարեցրեց պատերազմի պետքերի համար պահանջվող անհրաժեշտների (յեվրոպական կովող պետութիւններին) համար:

Ամերիկան պատերազմին մասնակցեց այն ժամանակ, յերբ ռուսական զորամասերը ցրվեցին (1917) և Գերմանիայի ձեռքերը ազատվեցին ռուսական ճակատում: Վախենալով վոր Գերմանիան Յեվրոպայում հաղթող կհանդիսանա և, ֆրանսիական յերկաթը ռուսական ածուխին միացնելով՝ կլինի Ամերիկայի ուժեղ մրցակիցը,—Ամերիկան կարևոր համարեց իր մասնակցութիւնը պատերազմին: Ամերիկան պատերազմի ընթացքում պարտք է բաց թողել Անգլիային 4 միլիարդ դոլլար, Ֆրանսիային—3,3 միլիարդ իտալիային՝ 1,6 միլիարդ, Բելգիային—375 միլիոն, Յարական Ռուսաստանին տվել է 192 միլիոն: Ամերիկան փողերը տալիս է վաշխառուական պայմաններով—ստանալով խոշոր տոկոսներ:

Ինչ պետք է լինել միլիոնավոր բանվորների և գյուղացիութեան դրութիւնը, յերբ նրանք հաշմանդամ, նիհարած, յերկար տարիների խրամատային կյանքից ստացած անբուժելի խոցերով վերադառնալով, տեսնում են իրենց «տները» ավերած, տնտեսութիւնը վոչնչացած, տան անդամները քաղցից նվաղած՝ մահամերձ ընկած են: Բանվորի միակ ապրուստի միջոցը գործարանի աշխատանքն է, սակայն նա նրանից ևս զրկված է, գործարանները հարմարեցրած լինելով պատերազմի պետքերին և ընդհանուր տնտեսական արժեքներն ընդհանրապէս խախտված լինելով, բանվորները դատապարտված են անգործութեան:

Մասնա-
նեղի կազ-
մակերպ-
ման ազ-
դակները:

Անգործութեան և քաղցի դժոխային պայմանները իր ուսերի վրա տարել ե գերմանական պրոլետարիատը, վորը, վորպես «պարտ-ված յերկրի» գինվոր, ընկած եր հաղթողների վտառների տակ:

Բայց խախտվել եյին վոչ միայն բուրժուական յերկրների տնտեսական հիմքերը, այլ նաև հասարակական միտքը: Պատե-րազմից վերադարձող ամեն մի գինվոր պետք ե վոր ըննական հայացք ձգեր անցողորդների վրա և վորոնք այնչափ ավերածու-թյունների պատճառ դարձող գլխավոր վոճրագործներին և միջադ-գային դահիճներին:

Ահա այստեղից ել առաջ են գալիս մասսաների տարերային շարժումները, նրանց անգուսպ վրիժառութիւնը դեպի իրենց թըշ-նամի դասակարգը. այդպիսի ցասման արդյունքն եր նաև Հոկ-տեմբերյան մեծ Հեղափոխութիւնը, վորը միջազգային պրոլետա-րիատի իդէերի և ձգտումների հալածաբար թարգմանը հանդի-սացավ:

Ռուսաս-
տանը:

Ճարական Ռուսաստանը պատերազմի ընթացքում ցույց տվեց իր սնանկութիւնը: Պարենավորման սուր ճգնաժամը և ֆրոնտի անհաջողութիւնները գալիս եյին ասելու, վոր ցարական կառավարութիւնը անկարող ե յերկրը հանելու ստեղծված դրու-թյունից: Մի խումբ խոշոր հողատերերի և իմպերիալիստական բուրժուազիայի խնամքին եր հանձնված մի լայնածավալ յերկիր, ու միլիոնավոր մասսաները հյուժվում եյին արտաքին և ներքին ուժերի հարվածներից:

Շատ միամիտներին թվում եր, վոր Ռուսաստանի բանվորա-գյուղացիական լայն մասսաները դեռ կարող եյին հաշտվել ստեղծ-ված դրութեան հետ, և յերբ բուրժուազիան, ազնվականութեան հետ վեճի բռնված, պետական դումայի առաջ պատասխանատու միջնորդական կարիքների խնդիրն եր լուծում, մասսաների մեջ վերակենդանանում եր 1905 թ. ապստամբ վոգին: Այն ժամանակ, յերբ Փետրվարյան որերին մասսաները ցարի անկումն եին պա-հանջում, բուրժուազիայի դեմոկրատական խավերը մի առանձին հիացմունքով ընդառաջ եյին գնում այդ պահանջին, կարծելով, վոր շարժումը պետք ե սահմանափակվի միայն դրանով—մոնար-խիայից անցնելով դեպի սահմանադիր-դեմոկրատական կարգերը: Եսերներն ու մենշևիկներն իրենց ոպրտունիատական ելու-թյան շնորհիվ միանգամայն ձուլվել եյին կադետների հետ. նրանք վողջագուրվելով ազնվականների ներկայացուցիչ իշխան Լյովի հետ, միևնույն աթոռի վրա նստելով իմպերիալիստական

բուրժուազիայի ներկայացուցիչ Միլյուկովի հետ, չեյին կարո-ղանում ըմբռնել ըմբոստացած մասսայի քաղաքական պահանջ-ները, նրանց հետագա ընթացքի ահռելիութիւնը: Նրանք իրենց անփառունակ իշխանութեան որոք չուզեցին հողերը գրավել ու հանձնել գյուղացիութեան, չսահմանեցին Ց-ժամյա բանվորական որ, չկազմեցին արդյունաբերութեան վրա հսկող հանձնաժողովներ, չդիմեցին միջոցների՝ գլուխ բարձրացրած հակահեղափոխական տարրերի դեմ, և այլն:

Բավական եր մի քանի ամսվա՝ բուրժուական կառավարու-թեան գոյութեան ժամանակաշրջանը, վոր մասսաների համար պարզվեր նրա դասակարգային դեմքը: Յերբ, հակառակ տիրող կառավարութեան կամքին, գյուղացիութիւնը տարերային կերպով շարժվեց ազնվականութեան դեմ, յերբ քաղաքի պրոլետարիատը, գորբի հետ միացած, իր կամքն եր ցուցադրում պատերազմի և հակահեղափոխութեան դեմ կովելու անհրաժեշտութեան համար, բոլշևիկների կենտրոնական կոմիտեն Լենինի առաջնորդութեամբ ընդունում ե անմիջապես քաղաքացիական կռիւի դիմելու բա-նաձեռ:

Ձինված ապստամբութիւնը վերջացավ պրոլետարիատի հաղթութեամբ և մի քանի տարի տեղը քաղաքացիական կռիւ-ներով: Պրոլետարիատը և աղքատ գյուղացիութիւնը քաց տրին միջազգային պրոլետարիատի դասակարգային կռիւի պատմութեան փառահեղ մի նոր եջը:

Առաջին պրոլետարական հեղափոխութիւնը առաջ յեկավ Յեվրոպայի ամենայնտաճնաց յերկրներից մեկում. և ռուսական ու միջազգային մենշևիզմը իր առարկութիւնը հիմնավորում ե այդ յետաճնացութեամբ և, հետեապես, չի ընդունում հեղափո-խութեան սոցիալիստական բնույթը: Բավական ե դիտել Հոկ-տեմբերյան Հեղափոխութեան խոշոր ազդեցութիւնը միջադ-գային պրոլետարիատի հեղափոխականացման գործում, վոր-պեսզի համոզվել թե վորքան անհեթեթ են մենշևիկների յեդ-րակացութիւնները: Կարմիր Մոսկվայում այժմ միջազգային պրո-լետարիատի և աղքատ գյուղացիութեան կողմնակի սիրտն ե, վոր բաբախում ե Հանձինս Խորհրդային Միութեան պրոլետարիատի դիկտատուրայի նրա հսկա նվաճումների, նրա անսկսող ուժի և կորովի, միջազգային պրոլետարիատն իր թիկունքով: Ռուսի մի աջակից վորպիսին իր դասակարգային պատմութեան ընթաց-քում նա առաջին անգամն ե տեսնում:

Հեղափոխ-
շարժումն. նույն հեղափոխական շարժումները:

Յեկոպա-
յում:

1918 թ. ևրոպական մի շարք յիշկրներում տեղի յին ունե-
ցան հեղափոխական շարժումները:

Գերմանական պրոլետարիատը պատերազմի արհավիրքների
հետևանքով գտնվում էր տնտեսական սարսափելի պայմաններում.
անգործություն, լազր, հիվանդություն... Յեկ անխուսափելիորեն
պետք է ընկեր հեղափոխության ուղին:

Գերմանիայում տեղի յն ունենում բուրժուական դեմոկրա-
տական հեղափոխություն, վորը կոչվում է Նոյեմբերյան: Բայց
բուրժուական կարգերը անկարող էին բավարարելու ծայր տված
կարիքները: Պարտված Գերմանիան իր թշնամիների հետ կնքած
դժոխային պայմանագրով տնտեսական վատթար դրության մեջ
է ընկնում. դրա հետևանքով մասսաների հեղափոխության ըն-
թացքը ուղղվում է դեպի դասակարգային կռիվը:

Գերմանիայի պրոլետարիատի ավանգարդը հանդիսանում
էր 1918 թ. հունվարին հիմնված «Սպարտակյան Միությունը»:
Այս նոր կազմակերպության գլուխ էին անցած Ցիմմերվալդի
ձախ թեկ ականավոր անդամներ՝ Կարլ Լիբքնեխտ և Ռոզա Լյուք-
սեմբուրգը, վորոնք իրենց անսպառ յեռանդով խոշոր դեր խաղա-
ցին պրոլետարիատի կռիվ գործում: Սպարտակյանները, վորպես
նոր հոսանք, սկզբնական շրջանում խոշոր մասսայականություն
չէին վայելում: Անկախ-սոց-դեմոկրատ կուսակցությունը (Կարլ
Կաուցկու կողմնակից) խոշոր ազդեցություն ուներ բանվորների
վրա: Գերման սոցիալ-դեմոկրատ աջ թեկ, իր հինավուրց սովո-
րությունամբ, շարունակում էր իր քայքայիչ աշխատանքը, վորից
հիասթափված մասսան անցնում էր «անկախների» և Սպարտակ-
յանների կողմը: Աջ սոց-դեմոկրատների ազդեցությունը նույն-
պես ուժեղ էր, և նրանց դեկավար Շեյդեմանը, Նոսկեն, Երերտը
քաղաքական խոշոր դեմքեր էին համարվում ամբողջ Գերմանիա-
յում: Այս յերեք հոսանքները ունեյին իրենց ուրույն գործելա-
կերպը: Նոյեմբերյան հեղափոխությամբ՝ իշխանությունը անցնում
է սոց-դեմոկրատներին և աջ «անկախներին», վորի հետևանքով
ավելի էր ամրապնդվում բուրժուազիայի տնտեսական հզորու-
թյունը. այդպիսով «հեղափոխական» կառավարությունից հիաս-
թափված պրոլետարիատը ավելի յեր հեղափոխականանում:

1919 թ. հունվարին, հարյուր հազարավոր բանվորներ Բեռ-
լինի փողոցներում բողոքի հակայական ցույց են կազմակերպում
սոցիալ-դեմոկրատ կառավարության դեմ: Սպարտակյանները,
նկատելով մասսայի տրամադրությունը, ցույցը վեր են ածում

սպասամբություն, վորին մասնակցում էին նոյնիսկ սոցիալ-դեմո-
կրատական կառավարության ուժեղ ազդեցություն տակ գտնվող
բանվորական շարքերից: Շեյդեմանյաններին հարկավոր էր նման
մի պատճառ, վորը առիթ ծառայեր բացարձակ կռիվ միջոցով
վերջ տալու կոմունիստական ավանգարդին: Կառավարությունը
իր կողմն է գրավում կռիվ սոցիալ-դեմոկրատ բանվորներին,
և հակահեղափոխական տարրերից (սպաներից, մոնարխիստնե-
րից) կազմելով կամավոր բանակ, դիմում է ապստամբության
ճնշման: Մոնարխիստների և զինվորների ձեռքով գազանաբար
սպանվում են Կարլ Լիբքնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը՝ հար-
յուրավոր կոմունիստների հետ միասին: Բայց դրանով դրու-
թյունը չի փրկվում և նույն թվի մարտին նորից առաջ է գալիս
մասսայական գործադուլային շարժում, վորն ընդունում է հա-
մագերմանական բնույթ: Մասսաները պահանջում էին արդյու-
նաբերության սոցիալիզացիա և բանվորական կոնտրոլի սահմա-
նում: Սոցիալ-դեմոկրատ կառավարությունը նոր ուժերի մատ-
նակցությամբ կրկին անագին զոհեր խլելով, ճնշում է ապստամբ-
ներին: Այս անգամ տմարդի կերպով սպանվում է Գերմանիայի
պաղանդավոր կոմունիստ, կուսակցական գործիչ Լեո Թոգիխես
(Տիչկա):

Ավստրիայի սոց-դեմ. կառավարության ազդեցությունը դեռ
մեծ էր մասսաների վրա: Իսկ 1918 թ. վերջերին կազմակերպ-
ված Կոմկուսը դեռ շատ էր թույլ (փոքրաթիվ էր): Վեներիա-
յում, չնորհիվ Բեկա-Կունի ջանքերին, Կոմկուսի ազդեցությունը
այնքան մեծ էր, վոր հնարավորություն էր ունենում մասսայա-
կան ցույցեր կազմակերպելու: Սոց-դեմ. մեջ առաջ էր յեկել
ձախ թեկ, վոր համակրություն էր վերաբերվում դեպի կոմու-
նիստները:

Ֆրանսիական բանվորների դրությունը քանի զնում վատ-
թարանում էր: Գործադուլային կյանքը միանգամայն դադարել
էր և թագմական ճակատից վերադարձած հազարավոր բանվոր-
ներ մատնվել էին անգործության: Չնայած վոր Ֆրանսիան
վերսալի պայմանագրով ստանալիքներ ուներ Գերմանիայից
բայց վորոշված կոնտրիբուցիայի հաշվին դեռ վոչինչ չէր ստա-
ցել և պետք է Գերմանիայից գրավված հողամասերում պահեր
զորք, վորը ծախսեր էր պահանջում: Զորքի դանդաղ արձա-
կումն ևս գրգռում էր մասսաներին: Այդ դժգոհությունը արտա-
նայովից մի շարք գործադուլներով, ցույցերով, վոր տարածվում

և ամբողջ Ֆրանսիայում: Վերջապես, ֆրանսիական ծովագնաց Մարտիի գլխավորությամբ կազմակերպվեց այն նշանակալից ցույցը, վորով հրաժարվեցին խորհրդային յերկրների դեմ ծովային ուժեր փոխադրելու: Ֆրանսիայում ռեֆորմատորների ազդեցութունը դեռ շատ ուժեղ էր: Այլ պարագլուխներ՝ Գետը, Ռենոդելը, Ալ. Տոմը, Սամբան իրենց յետեից քաշում էին բանվորության մեծամասնությանը: Հանձինս մի փոքրիկ խումբ սոցիալիստների և սինդիկալիստների, վորոնց ղեկավարներն են՝ Լորիո, Գիլբո, Մոնատ, Բաուեր, պատերազմի ընթացքում հավատարիմ մնացին Ինտերնացիոնալի սկզբունքներին, և կազմելով «Միջազգային կապերի վերականգման կոմիտե», իրենց ներկայացուցիչներն ուղարկեցին Ցիմմերվալդի կոնֆերենցիային: Լորիոն և ընկերները սոցիալիստական կուսակցության մեջ ստեղծել էին կոմունիստական սաղմ: Այս հոսանքներից էլ 1920 թ. կազմակերպվեց Ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը, վորը յերկար պայքարեց ընդդեմ իր շարքերն անցած շատ ռեֆորմատորների, վորոնք դեռ իրենց հին սովորություններով մայր սոցիալիստական կուսակցությունից չէին կարողանում միանգամայն կտրվել:

Իտալիայում սոցիալիստական կուսակցությունը և սինդիկալիստները ամբողջ ժամանակ դեմ են յեղել պատերազմին: Շարունակ տեղի ունեցող գործադուլները, ցույցերը և ապստամբությունները ավելի ուժեղացան Հոկտեմբերյան Հեղափոխության ազդեցության տակ: Սոցիալիստական կուսակցությունը իր մեջ ուներ յերեք հոսանք: Սեռատիի գլխավորությամբ՝ «Կենտրոն», հակապարլամենտական մաքսիմալիստները և յերրորդ՝ ռեֆորմատորները, վորոնք պրոլետարիատի ղեկավարության չէին ընդունում: «Կենտրոնը» ավելի մեծ ազդեցություն ուներ մասսաների վրա, և պատերազմը վերջանալուց հետո ավելի ուժեղացավ այդ հոսանքը:

Անգլիան, վոր բանվորական արխատողատիայի կլասիկ հայրենիքն է համարվում, իր բանվորական հուզմունքներով յետ չմնաց: Չնայած Անգլիան ամենից քիչ էր տուժել պատերազմից, բայց և այնպես շնորհիվ արդյունաբերության միջոցները պատերազմական դրության հարմարեցնելուն, ահագին քանակությամբ անգործներ էին կուտակվել: Բանվորները պահանջում էին բարեփոխություններ: 1919 թ. հունվարը, փետրվարը և մարտը գործադուլային ամիսներ էին: Հանքափորները պահանջում էին աշխատավարձի ավելացում, վեց-ժամյա բանվորական օր, հան-

քերի և շախտաների ազգայնացում և այլն: Մասպան, տեսնելով իրենց պաշտոնական պարագլուխների ոպորտունիզմը, ավելի խստապահանջ և կտրուկ էր դառնում: Սրանց շարքերից կազմվեց ձախ թե, վորը հետագայում վերածվեց Անգլիական կոմունիստական կուսակցության:

Շնորհիվ ստեղծված համաշխարհային ճգնաժամին և Հոկտեմբերյան Հեղափոխության ազդատենչ նշանաբաններին, մի շարք յերկրների սոցիալիստական կուսակցությունների մեջ պառակտում առաջ գալով՝ կազմվեցին կոմունիստական կուսակցություններ—Ֆինլանդիայում, Լեհաստանում, Լիտվայում, Լատվիայում, Եստոնիայում, Շվեդիայում, Բուլղարիայում, Նորվեգիայում: Միացյալ Նահանգներում, Ջոն Բիդի, Ռուստենբերգի և Ջիմ Լատկինի գլխավորությամբ 1919 թ. ձախ հոսանքը, անջատվելով սոցիալիստական և սինդիկալիստական «Միջազգային ինդուստրիալ բանվորներ» կուսակցությունից, առաջ բերեց կոմունիստական կուսակցություն, վորը կոչվում է Ուեբերի Պարտի:

Նախորդ գլուխներից գիտենք, վոր իմպերիալիզմը, մուտք գործելով գաղութային յերկրները (Արևելք) XX դարի սկիզբներից, ավարտել էր նրա բաժանումը իմպերիալիստական պետությունների միջև:

Արևելք տեսելով, հասկանում ենք գաղութային և կիսագաղութային՝ Մերձասի (Թյուրքիա, Սիրիա, Պաղեստին, Յեզդիստան), Միջին (Պարսկաստան, Ավղանստան, Տիբեթ, Հնդկաստան) և Հեռավոր (Հնդկաստան, Ինդոնեզիա, Չինաստան, Կորեյա, Յապոնիա) Արևելք: Առաջներում, յերբ ասում էին «արևելյան հարց», «արևելյան պրոբլեմ», հառկացվում էր այն, թե ինչպես Թյուրքիան բաժանել յեվրոպական խոշոր պետությունների միջև: Մեզ համար այդ հարցը կայանում է նրանում, թե ինչ միջոցներով այդ գաղութների ազգությունները քաղաքականապես և տնտեսապես ազատագրել իմպերիալիզմից: Կոմունիստական Ինտերնացիոնալի նպատակն է՝ իմպերիալիզմի դեմ ստեղծել միասնական հեղափոխական ֆրոնտ՝ գաղութային պրոլետարիատից, աղքատ գյուղացիությունից և ճնշված ազգություններից, վորոնք կազմում են մարդկության 3/4 մասը:

Արևելյան յերկրները իրենց տնտեսական զարգացմամբ կարելի չէ բաժանել յերեք իմբալորումների: Առաջինը՝ այն յերկրները, ուր կոչվում է միայն ոտար արդյունաբերական կապիտալ, այլ և ուր առաջ և յեկել նաև իր զուտ-տեղական կապիտալը,

ստեղծելով տեղական բուրժուազիա և տեղական պրոլետարիատ (Հնդկաստան)։ Յերկրորդ՝ այն յերկրները, ուր կապիտալիստական զարգացումը դեռ կանգնած է իր ստորին աստիճանի վրա և ուր դեռ ֆեոդալական ձևերը համարվում են հասարակական կյանքի հիմքը (Պարսկաստան, Յեգիպտոս), յերրորդ՝ այն, ուր դեռ թագավորում են պրիմիտիվ արտադրական ձևերը, ուր հասարակական կարգերը կառուցված են դեռ նահապետական-ֆեոդալիզմի սկզբունքներով (ոադիսային վոռոգման միջոցներով զարգացող տնտեսություն, նահապետական ցեղային խաշնարածություն և այլն.—Արաբիա, Տիբեթ, Ավղանիստան, Մոնղոլիա)։

Փակ տնտեսության բայքայումը, ապրանքային տնտեսության զարգացումը և իր սեփական բուրժուազիայի աճումը արեւելյան յերկրներում անխուսափելիորեն առաջ են բերում ազգային հեղափոխություն։ Իրենց սկզբնական զարգացման շրջանում նման հեղափոխական շարժումները անխուսափելիորեն պետք է կրեն կրոնական կամ ցեղային բնույթ։ «Բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունները վաղուց վերջացել են Յեվրոպայում, բայց Արեւելքում դրանք սկսվում են միայն XX դարից»։ (Լենին, XIX հ., յերես 98—107)։ Արեւելքի արթնացումը տեղի յե ունեցել 1905 թ. ռուսական հեղափոխության ազդեցության տակ. 1908 թ. Տաճկաստանի պետական հեղաշրջումը, 1905 թ. Պարսկաստանի և 1911 թ. Չինաստանի հեղափոխություններով առաջին հարվածներն են ստանում իմպերիալիզմը։

Իմպերիալիստական յերկրները, պատերազմի ավերածության շնորհիվ չկարողանալով գաղութներին հարկավոր քանակությամբ ապրանքներ մատակարարել, զարկ են տալիս տեղական արդյունաբերության զարգացման։ Հնդկաստանը, Հարավային Աֆրիկան, Հարավային Ամերիկան, Ավստրալիան ինդուստրացման յեն յենթարկվում, վորով ուժեղացվում են բուրժուազիայի և պրոլետարիատի շարքերը, վորոնց միջև տեղի յե ունեւում անդրանիկ կազմակերպված դասակարգային կռիվը։ Արեւելյան մի շարք գաղութների պրոլետարիատի կյանքում առաջ են գալիս կոմունիստական կազմակերպություններ, վորոնք աշխատավոր մասսաների կողմից ընդունվում են մեծ համակրությամբ։

Բայց միջազգային բանվորական կյանքում տեղի ունեցող շարժումները շունչ են առնում ռուսական մեծ հեղափոխությունից, վորի ղեկավար կուսակցությունը, բոյլշևիզմը, դեռ Յերկրորդ Խնտերնացիոնալի շրջանից ունեն իր հետեողական հե-

ղափոխական գործելակերպը։ Շնորհիվ Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքի առանձնահատուկ պայմանների, ռուսական բանվորական շարժումները տվել են հարուստ նյութ՝ հետագա ուղիները մշակելու համար։ Միջազգային պրոլետարական հեղափոխության մեծ ուսուցիչ Լենինի գաղափարական խոշոր նվաճումները պայմանավորվում են այն հարուստ փորձերով, վոր հանձինս ռուսական հեղափոխություններին, կատարվել են հենց իրեն՝ Լենինի որոք և նրա անմիջական ղեկավարությամբ։

Ռուսաստանը հանդիսացել է իմպերիալիզմի շահերի հակառակությունների գլխավոր կետերից մեկը։ Ընկ. Ստալինը իր «Լենինիզմի հիմունքների մասին» աշխատության մեջ ներկայացնում է այն պայմանները, վորոնց ծնունդն է լենինիզմը, և ցույց է տալիս, թե ինչ պատճառներից Լենինը հանդիսացավ միջազգային պրոլետարիատի ղեկավար։ Կանգ առնելով ցարիզմի կատարած միջազգային դերի վրա, ընկ. Ստալինը գտնում է, վոր «Ցարիզմը հանդիսացել է Արեւմտյան Յեվրոպայի իմպերիալիզմի ամենահարազատ դաշնակիցը՝ Տաճկաստանի, Պարսկաստանի և Չինաստանի բաժանման գործում։ Ցարական Ռուսաստանը Արեւմտյան Յեվրոպայի իմպերիալիստների համար ունեցել է վոչ միայն այն նշանակությունը, վոր անկաշկանդ թույլ է տվել արտասահմանյան կապիտալի ազատ մուտքը Ռուսաստան—չնայած վոր յերկրի ներսում մետաղի և վառելանյութերի անսպառ հարստություն կար,—այլ նաև այն, վոր նա հարկավոր ղեկավարել է արեւմտյան իմպերիալիստների տրամադրության տակ դնել միլիոնավոր զինվորներ»։ Ցարիզմը, լինելով միջնադարյան բռնակալության վերջին շրջանի հարազատ մարմնացումը, անխնայ յե յեղել դեպի իր հալածակ փոքրիկ ազգությունները, շահագործել է իր հարեան գաղութային յերկրներին, յուրացրել նրանց հողամասերը և հանդիսացել միջազգային իմպերիալիզմի ժանդարմը իր արեւելյան մասերում։ Ինչպիս նկատում է ընկ. Ստալինը, հենց ցարիզմի միջազգային բնույթը հարկադրում էր, վոր ռով ցանկանում էր հարվածել ցարիզմին, նա անխուսափելիորեն այդ հարվածը հասցնում էր նաև իմպերիալիզմին. ով տպատամբվում էր ցարիզմի դեմ, նա պետք է տպատամբեր նաև իմպերիալիզմի դեմ. ով տապալեր ցարիզմը, նա պետք է տապալեր նաև իմպերիալիզմը՝ յեթե նա իրոք նպատակ էր դրել վոչ միայն ջարդել ցարիզմը, այլ և հիմնովին բնաջինջ անել... Ռուսական հեղափոխությունը հենց իր սկզբի որերից չէր կարող չկրել միջ-

Գաղ ու ի. ր. յերկրներին
հնդկաստանը

Լենինիզմի
միջոցով

ազգային բնույթ. այդպիսով նա չէր կարող չցնցել միջազգային իմպերիալիզմի հիմքերը... Ռուսական կոմունիստները ուրիշ կեցող էլ չեն կարող գործել, վերոմհետև այդ միակ ուղիով էր վոր կաքել յեր հաղի առնել միջազգային դրության վորոշ փոփոխությունները, վորոնք կարող էյին Ռուսաստանը ապահովել բուրժուական կարգերի ռեստորացիայից: Ահա քե ինչու Ռուսաստանը դարձավ լենինիզմի ոգախը, իսկ ուրս կոմունիստների դեկավար Լենինը—դրա սեղծողը:

Այդ իսկ պատճառով է վոր (չնայած Արեմտյան Յեվրոպայի պրոլետարիատի հակայական հեղափոխական անցյալի, նրա դասակարգային պայքարի բավական հաջողատ ստաժի) չկարողացան ցնցել միջազգային իմպերիալիզմի հիմքերը այնպես, ինչպես այդ արեք Ռուսաստանի բանվորը և գյուղացին:

Ռուսական բոլշևիզմը, իր մեծ ուսուցիչ Լենինի հոյակապ մտքերի ղեկավարությամբ, նախապատրաստում կոմունիստական Լեոնինացիոնալիս անցնելու ուղիները: Լենինը դեռ 90-ական թվականներին վերջերից ուժեղ պայքարում էր Բիրնշտայնի թեորիաիկ ոպորայունիզմի դեմ և դեռ որթողորս մարքսիստներ Կառլեկուզ: Պեկանովից առաջ էր դրել ռեվոլյուցիոնների հետ կազմակերպչական կապերի խզման անհրաժեշտությունը:

Ռուսական սոց.-դեմ. կուսակցության կյանքում Լենինը յերկար պայքար է մղել «ոտղովիստների» և «եկոնոմիստների» դեմ: 1905 թ. հեղափոխությունից հետո, Լենինը լուրջ ուսումնասիրության առարկա չե դարձնում Արեմտյան պրոլետարիատի պայքարի, Պարիզի կոմունայի և I Լեոնինացիոնալի փորձերը, զբանք համեմատում ռուսական առաջին հեղափոխության հետ, հանում հարկավոր յեզրակացությունները հետագա հեղափոխություններին գործադրելու համար: Ահա թե ինքը Լենինը ինչպես և բացատրում բոլշևիզմի հաջողությունների պատճառները. «Մի կողմից—բոլշևիզմը 1903 թ. ձառեց մարքսիզմի ամենահաստատ հիմունքի վրա: Իսկ այդ և միայն այդ հեղափոխական թեորիայի ճշտությունը ապացուցվեց վոչ միայն ամբողջ 19-րդ դարի համաշխարհային փորձով, այլ մասնավորապես հեղափոխական մտքի, մոլորումների, սխալների, տատանումների և հիասթափումների փորձով Ռուսաստանում: Մոտ կես դար, անցյալ դարի մոտավորապես 40-ական թ.թ. մինչև 90-ականը, Ռուսաստանի առաջավոր միտքը՝ վայրենի և յեպաղեմ ցարիզմի ճնշման տակ ազահորեն փնտռում էր մի հեղափոխական ճիշտ թեորիա, զարմանալի տոկունությամբ և ամենա-

ուշիմ կերպով հետեւելով Յեվրոպայի և Ամերիկայի ամեն և յուրաքանչյուր «վերջին խոսքին» այդ ասպարիզում. մարքսիզմը, վորպես միակ անսխալ հեղափոխական թեորիա, Ռուսաստանը իսկապես վոր յերկնել և կեսդարյա պատմությամբ,—անասելի տանջանքների և ղոհների, չտեսնված հեղափոխական հերոսությունների, անյերեակայելի յեռանդի և անձնագոհ վորոնումների մեջ—ուսանելու, գործնական փորձերի, հիասթափումների, ստուգումների, Յեվրոպայի փորձի հակադրության մեջ» (Ձախության յերեթ. հիվանդ. կոմ. մեջ): Ահա բոլշևիզմի կատարած ուղիները, վորով նա բերեց հասցրեց մեծ Հոկտեմբերին:

Հանձնա Լենինի, բոլշևիզմը ունեցել է խոշոր ղեկավարը, վոր ամբողջ կես դար ունկնդրելով պատմության ձայնին, միշտ անթարթ կերպով հսկել և միջազգային պրոլետարիատի դատի հաջողության գործին, և վորպես Մարքսի տաղանդավոր աշակերտ, իր ուսուցչի գաղափարները մարմնացրել կյանքի մեջ: «Լենինը կապիտալիստական շրջանի վերլուծումը չտվեց,—դա Մարքսն արդեն կատարել էր. Լենինը միայն Մարքսի վերլուծման յենթարկած խնդիրները կիրառել և խորտակվող կապիտալիզմի և սոցիալական հեղափոխության նպխայում» (Ռադեկ): Մարքսը միայն մատնանշել և կապիտալիզմի այն շարժում ուժերը, վորոնք տանում են դեպի սոցիալիզմին հասնելու ոգտին մղվող կռիվը: Բայց Մարքսը չապրեց մինչև այդ կռիվը, գործնականը նա չտեսավ: Այստեղ ևս Լենինը վոչ միայն տվեց իր նորը, այլ նա անխուսափելիորեն ինքը ևս սովորեց հեղափոխության գործնական փորձերից:

Մարքսիզմը լենինիզմով հարստացել և հետևյալ հարցերի հիմնական մշակմամբ. 1) իմպերիալիզմի թեորիան և պրոլետարական հեղափոխությունը. 2) պրոլետարական դիկտատուրայի իրադրման պայմանները և պրակտիկան. 3) պրոլետարիատի և գյուղացիության փոխհարաբերությունը. 4) ազգային հարցի նշանակությունը ընդհանրապես. 5) առանձնապես գաղութային և կիսագաղութային յերկրների ազգային ազատագրական շարժումների նշանակությունը միջազգային պրոլետարական հեղափոխության համար. 6) կուսակցության դերը. 7) պրոլետարիատի տակալիզմի ինդերիալիստական պատերազմի շրջանում. 8) պրոլետարական ինխանության դերը անցման շրջանում. 9) խորհրդային հասարակակարգը, վորպես պրոլետարական ինխանության կոնկրետ տիպը. 10) պայքար կոմունիստական շարժերում գոյություն ունեցող աջ և ձախ թեորի դեմ:

Ինքն ինքն
անհրաժեշտ
սուբյուկտներ:

Ցիմմեր-
վալդ:

Ահա լինին իզմի այն հիմնական կետերը, վորոնք հանդիսա-
ցան կոմիտեների անշեղ ուղղությունը:

Յերրորդ Ինտերնացիոնալի մեջ մասնակցող յերկրների ազ-
գեցիկ կուսակցությունները, միմյանց դեմ պայքարի մեջ լինելով,
վոչ մի կերպ համաձայնություն չեյին գալիս՝ իրար հանդիպելու
և ստեղծված դրություն շուրջը խորհրդակցելու: Նախագահ Վան-
դերվելդեն, նա, վորը 1914 թ. ռուս բանվորներին կոչ արեց թող-
նել կռիվը ցարի դեմ և աջակցել պատերազմին, արդեն մինիստր
եր, իսկ մնացած ազգեցիկ անդամներն էլ այնքան էյին խրված
իրենց շովինիզմի մեջ, վոր չեյին ցանկանում իրենց բուրժուա-
զիայի դեմ պատերազմող յերկրների սոցիալիստներին հանդիպել:

Վերջապես, յերկար բանակցություններից հետո, Իտալական
կուսակցության կենտրոնական կոմիտեն (Իտալիան դեռ «չեզոք»
եր) վորոշում է 1915 թ. մայիսի 15-ին հրավերել կոնֆերենցիա,
առաջարկելով մասնակցելու նրանց, վորոնք չեզոք են և ընդու-
նում են նախնական բանաձևերի տեսակետները:

Մասնակցողները իրենց նախնական բանակցությունների
միջոցին համաձայնության են գալիս՝ նոր Ինտերնացիոնալ կազ-
մելու հարց չբարձրացնել, այլ սահմանափակվել նրանով, վոր կոչ
արվի պրոլետարիատին հաշտության համար միասնական գոր-
ծողությունների դիմել և ստեղծել ակտիվ կենտրոն՝ ղեկավարելու
նման մի շարժում: Կուսակցություններից շատերը պատասխանել
էյին, և 1915 թ. սեպտեմբերին, Շվեյցարիայի Յիմմերվալդ գյու-
ղում տեղի յե ունենում պատերազմը հայտարարելուց հետո առա-
ջին միջազգային խորհրդակցությունը, ուր հանդիպում են պատե-
րազմող և չեզոք յերկրների պատգամավորները: Պաշտոնապես
ներկա էյին հետևյալ կուսակցություններն ու կազմակերպու-
թյունները—Իտալական, Ռուսաստանի (մենշևիկներ, բոլշևիկներ
և եսերներ), Լեհական, Լատիշական, Ռումինական և Բուլղարա-
կան (տեսնյականներ), Հոլլանդական (ինտերնացիոնալ խմբակը),
Շվեյցարական և Նորվեգիական (սոց. դեմոկրատական յերիտա-
սարդական միությունը): Գերմանիայից և Ֆրանսիայից ներ-
կա էյին ձախ թեի պատգամավորները, իսկ Անգլիայի պատ-
գամավորները ներկա չեյին (իրենց կառավարությունը անցագիր
չեի տվել): Մասնակցողների մեջ հայտնաբերվեց ծայրահեղ ձախ
հոսանք, վորի գլուխն եր անցած ընկ. Լենինը՝ իր հետ ունենա-
լով Ռուսաստանի բոլշևիկները, լեհական ուղղիցիան, Լատիշա-
կան կուսակցությունը և Ականդինավիայի կազմակերպությունը:

այդ հոսանքը բաց է թողնում մի մանիֆեստ, պարզելով իր
վերաբերմունքը դեպի ստեղծված դրությունը: այդ մանիֆեստում
պարզում են պատերազմի իմպերիալիստական նպատակները,
բացատրում են, վոր բուրժուազիան, հագնելով «մանր ազգերի
ինքնորոշման» սկզբունքի դիմակը, խաբում է պրոլետարիատին,
և իրականության մեջ տեսնում ենք, վոր բուրժուազիայի միակ
նպատակն է՝ վորքան կարելի յե շատ գրավել ուրիշ յերկրներ,
գաղութներ:

Այսպես կոչված «Ձախ Յիմմերվալդցիները», հրապարակ նե-
տելով քաղաքացիական կռիվի լուղուղը, իրենց մանիֆեստի մեջ
ասում են. «Պրոլետարիատի կռիվը պետք է լինի համաշխարհային
պատերազմի դեմ, պետք է ուժեղ կերպով պայքարել՝ շուտափույթ
վերջ դնելու այդ մարդկային սպանդանոցին: Պայքարի հիմք
պետք է ծառայի—դեմ լինել պատերազմական վարկերին, պա-
հանջել, վոր սոցիալիստ միևիտրոները դուրս գան մինիստրական
կազմերից, պարլամենտի ամբիոնից պայքարել պատերազմի դեմ,
լեզալ և անլեզալ մամուլի միջոցով անողը պայքար մղել սոցիալ-
ազգայինների դեմ, մասնակցել տնտեսական գործադուլներին և
պատեհ ըոպելին աշխատել, վոր դրանք վերածվեն քաղաքա-
կանի»:

Այս ձևի մոտեցումը կոնֆերանսի կենտրոնի կողմից մերժ-
վում է և ընդունվում է նորը, վորով դիմում են միջազգային
պրոլետարիատին՝ վերահաստատել Ինտերնացիոնալի խախտված
կապերը և հաշտության ոգտին պայքարել: Այդ պայքարը—պայ-
քար է ազատության, հեղափոխության և սոցիալիզմի համար:

Պատերազմի համար վորոշում են—առաջարկել իսկույն դա-
դարեցնել և կնքել հաշտություն՝ առանց անեկսիայի և կոնտրի-
բուցիայի, հաշտություն՝ մանր ժողովուրդների ինքնորոշման սկզբ-
բունքով: Փոխադարձ կապ պահպանելու համար կոնֆերենցիան
ընտրում է միջազգային սոցիալիստական կոմիտե և մշտական
կենտրոն ընտրում չեզոք Շվեյցարիայի Բեռն քաղաքը:

Յերկրորդ կոնֆերենցիան տեղի յե ունենում Շվեյցարիայի Կիմսալ:
Կինտալ գյուղում (1916 թ. ապրիլին): Իրենց կազմով ավելի շատ
էյին, քան Յիմմերվալդի կոնֆերենցիային: Լենինի գլխավորու-
թյամբ աշխատող «ձախ թեի» ջանքերը իդուր չեյին անցել, չորս
հոգով ավելի էյին, քան թե մյուս խմբակի պատգամավորները:
Պետք է շեշտել, վոր դեռ մի քանի ձախ պատգամավորներ չեյին
յեկել՝ վիզա չստանալու պատճառով: Անգլիան այս անգամ էս

իր պատգամավորներին չե՛ր տվել անցադիր, իսկ Ֆրանսիան և Գերմանիան ուղարկել եյին իրենց անաշտոն ներկայացուցիչները: Կինտալի մանիֆեստն ևս վերջանում էր հաշտության առաջարկով: Երբեք միջուկ իմաստով՝ «Հաշտություն՝ առանց անեկսիտյի և կոնտրիբյուցիայի» լուղունդներով: Ծայրահեղ ձախերի մանիֆեստը Յիմմերվալդի պատգամավորների կողմից դարձյալ համարվեց ծայրահեղ, մանավանդ՝ ոպորտյունիստների դեմ ուղղված մասում: Կինտալում ընդունվեց նրանց տեսակետներին հակադիր բանաձև, ուր չե՛ր խնայվում նույնիսկ Խնտերնացիոնալի կենտրոնի դատապարտելի գործելակերպը պրոլետարական գործի հանդեպ: «Յիմմերվալդյան ձախերը» գտնում էյին, վոր միջադեպին սոցիալիստական բյուրոյի գործնելությունը ամեն մի քննադատությունից ցածր է. հավատալ հին բյուրոյին այդ միջնույն է թե յետ նայել և չազատագրվել ոպորտյունիզմի աղդեցությունից: Ենդալի խորհրդակցությունը, խիստ քննադատության յենթարկելով Միջ. Սոց. Բյուրոյին, հանձնարարում է իր անդամներին «ուշադրությամբ հետեւել» Բյուրոյի հետագա գործնելությանը: Բացի այդ վորոշվում է—յեթե Բյուրոն իր նշատաշրջանը հրավիրի, այն դեպքում «Յիմմերվալդյան վորոշումների տեսակետների վրա կանգնած անդամները պետք է նախորոք խորհրդակցություն կայացնեն և ապա միայն վորոշեն» ինչ դիրք թռնել դեպի նստաշրջանը:

Հոսանքներ:

Ճեղքը բացված էր: «Յիմմերվալդյան ձախերը» գտնում էյին, վոր առանց ուշադրության պետք է խոսքից անցնել գործի և հիմնել մի վստահելի միջադեպին մարմին, իսկ մյուս մասը դեռ հույս ունեն, վոր կարող կլինի Յերկրորդ Խնտերնացիոնալի գրությունը փրկել:

1919 թ. Բերնում տեղի յե ունենում առաջին անգամ յետպատերազմյան խորհրդակցությունը, վորից բացակա էյին կոմունիստները, Շվեյցարիայի, Սերբիայի, Ռումինիայի սոցիալիստական կուսակցությունները, վորոնք արդեն հայտարարել էյին Յերկրորդ Խնտերնացիոնալից դուրս գալու մասին:

Խնտերնացիոնալիստական հոսանքներ են առաջ գալիս նաև ուրիշ յերկրների սոց.-կուսակցությունների մեջ: Վերջապես, բոլշևիկների դեկավարությունը տեղի ունեցած Հոկտեմբերյան Հեղափոխությունը գալիս էր գործնականում իրականացնելու այն բանը, ինչ վոր պահանջել էյին Յիմմերվալդյան ձախերը. իրենց մանիֆեստում Բոլշևիկները, վորպեսզի տարբերվեն ոպորտյունի-

տական կուսակցություններից, հիմնում են «Ռուսաստանի Կոմունիստական կուսակցությունը», վորը այժմ կոչվում է «Համամիութենական Կոմունիստական կուսակցություն (բոլշևիկներ)»:

Մի նոր Խնտերնացիոնալի կազմակերպումը ավելի քան անհրաժեշտ էր դառնում, մանավանդ, յերբ միջադեպին մենշևիզմը, բորժուալիայի հետ ընկերացած, ակտիվ գործողությունների էր դիմում, հեղափոխական շարժումները խեղդելու համար: Գերմանական բանվորական շարժումները լինողելը և Կ. Լիբքնեխտին ու Ռոզա Լյուքսեմբուրգին սպանել տալը դալիս էյին ասելու, վոր Յերկրորդ Խնտերնացիոնալի անկումը վերջնական է և նրա տեղը պետք է թռնի նորը, Յերրորդ Խնտերնացիոնալը, այս անգամ՝ ըստ Ենգելսի պատգամի՝ «Կոմունիստական Խնտերնացիոնալը», վորպես առաջին «Միջադեպին Բանվորական Միութեյան» հարադատ ժառանգը:

1919 թ. հունվարի 25-ին, Ռուս. Կոմ. կուսակցության կենտկոմը, Լեհական, Վենգրիական և Գերմանա-Ավստրիական Կոմկուսների Արտասահմանյան Բյուրոն, Լատվիական և Ֆիննական Կոմկուսի կենտկոմը, Բալկանյան Ֆեդերացիայի սոց.-դեմ. և Ամերիկայի սոց.-քանվորական կուսակցությունները լույս են ընծայում մի դիմում՝ համագումար հրավիրելու անհրաժեշտության մասին:

1919 թ. մարտի 2-ին, Մոսկվայում կայանում է առաջին միջադեպին Կոմունիստական համագումարը: Յերկու որվա դեպումունքից հետո համագումարը վորոշում է՝ «վերածվել III Խնտերնացիոնալի, և ընդունել Կոմունիստական Խնտերնացիոնալ անունը»: Համագումարին ներկա էյին 19 կուսակցությունների 33 պատգամավորներ՝ վճռական ձայնի, իսկ 16 կուսակցությունների 19 ներկայացուցիչներ—խորհրդակցական ձայնի իրավունքով: Որակարգն էր. 1) բորժուական դեմոկրատիա և պրոլետարական դիկտատուրա (Լենին). 2) Կոմիստերնի արառաքարմի մասին (Բուխարին և Ալբերտ). 3) վերաբերմունք դեմի սոցիալիստական հոսանքները (Զինովյե և Պլատոն). 4) Ռուսկոմկուսը և կարմիր բանակը (Տրոյսկի). 5) սպիտակ տեռորի մասին:

Եստ յերկրներում ծայր տված տարերային շարժումները կրում էյին անձե կերպարանք, առանց վորևե դեկավարության: Բացառյալում էր հետևողական ուղղությունը և, ինչպես Ախմովյեն և Եկարտում՝ «Կոմունիստական շարժումը» յեռ գալով, Թափվում էր չորս թաղուր, փնտռելով ուժեղ կազմակերպչական ըն-

I-ից կոնգրեսը:

Բուրժ. դե-
մոկրատի-
այի և պրո-
լիսարևու-
մասին:

թացք»։ Մովեստական յերկրները ներքին և արտաքին թշնամիներ-
ըով դեռ պաշարված, հնարավորություն չունեցին ավելի վաղ
միջոցներ ձեռք առնելու՝ մի միջազգային ղեկավար կենտրոն
ստեղծելու համար։ Ահա թե ինչու, նորաստեղծ Կոմիտեներն մի-
ջոցով է, վոր բոլոր ցրված մարտական ուժերին պետք եր է մի
հավաքել և տալ նրանց հարկավոր ուղղությունը։ Ռուսաստանի
հեղափոխությունների բովում մարզված պրոլետարիատին եր վի-
ճակված միջազգային պրոլետարական հեղափոխության պիտները
հանդիսանալու։

Այդ իսկ պատճառով, Լենինի «բուրժուական դեմոկրատիայի
և պրոլետարական ղեկատուության» մասին գրած և առաջին
կոնգրեսում կարդացած թեզիսները կոմունիստական եպիսայի
ամենախոշորագույն դոկտրինաներից մեկն են, ճիշտ այնպես,
ինչպես «Կոմունիստական Մանիֆեստն» և՛ Առաջին Ինտերնա-
ցիոնալի հիմնման շրջանում «Միջազգային պրոլետարիատի հեղա-
փոխական շարժումների աճումը»,—այսպես են սկսվում թեզիս-
ները,—առաջ ե բերել բուրժուազիայի ու բանվորական կազմակեր-
պությունների շարքերում գործող բուրժուական գործակալների
տեղիում աշխատանք՝ դադարական-քաղաքական առարկություն-
ներ գտնել հարստահարիչների տիրապետությունը յերկարացնելու
համար։ Այդ առարկությունների մեջ առանձնապես դատապարտ-
վում է ղեկատուության և պաշտպանվում դեմոկրատիան։ Բուր-
ժուական դեմոկրատիայի կեղծիքը յերկան հանելու համար, թեզիս-
ներում բերվում են առարկություններ այն իմաստով, վոր՝

1) Անկարելի յե ասել «դեմոկրատիա՝ ընդհանրապես» և
«ղեկատուութա, ընդհանրապես», կարելի յե ասել դեմոկրատիա կամ
ղեկատուութա՝ դասակարգի, այնպես վոր վոչ մի կապիտալիստա-
կան յերկրում չկա դեմոկրատիա ընդհանրապես, այլ կա լոկ
բուրժուական դեմոկրատիա և խոսքը վերաբերվում է վոչ թե
ղեկատուութայի մասին ընդհանրապես, այլ պրոլետարիատի ղիկ-
սարևայի մասին։

2) Նույնիսկ ամենադեմոկրատական բուրժուական կառա-
վարությունը մի մեքենա յե՝ բանվոր դասակարգին ճնշելու և
շահագործելու համար։ Ամենադեմոկրատ բուրժուական յերկրե-
րում թագավորում է տեռորը և բուրժուազիայի ղեկատուության.
խոսքի ազատություն, մամուլի ազատություն—գրանք դատարկ
խոսքեր են բուրժուական դեմոկրատիայի բուրաստանում. ժողո-
վատեղիները, տպարանը, թուղթը, տառերը և այլն գտնվում են

բուրժուազիայի իրավունքի տակ։ Բուրժուական դեմոկրատիայի
«ազատությունը» կայանում է նրանում, վոր ազատ կերպով շա-
հագործում են բանվորներին, իսկ վերջիններս ազատություն են
ստանում ազատ մեռնելու։

3) Պատմությունից դիտենք, վոր նախկին շահագործվող
դասակարգը չեր կարող անցնել տիրապետություն՝ առանց ղեկ-
ատուության շրջանի։ Պրոլետարիատի ղեկատուության մնացած դա-
սակարգերի ղեկատուության համանման և նրանով, վոր նա (ղեկ-
ատուության), վորպես անհրաժեշտություն, պետք է գործադրվի՝ յետ
մղելու դեմագրությունն ա՛յն դասակարգի, վորը կորցնում է իր
նախկին իշխանությունը։ Պրոլետարիատի ղեկատուության ուրիշ
դասակարգերի ղեկատուությանց (միջին դարերի ազնվականները,
բուրժուազիան մեր որերում) տարբերվում է նրանով, վոր մի
խումբ հողատերեր և բուրժուազիա ճնշել են հսկա քիվ կազմող
աշխատավորության, իսկ վերջիններս իրենց ղեկատուությամբ
խեղդում են միայն այդ փոքրաթիվ պարագիտ խմբակին։

4) Պրոլետարական ղեկատուության բերում է իր հետ նաև
այն բարիքը, վոր աշխատավորական հսկա դանգավածները իսկական
դեմոկրատական սկզբունքներով մասնակցում են պետական հսկա-
յական կառուցվածքի աշխատանքներին, ոգտվելով քաղաքական
մաքսիմում իրավունքներով, մի բան, վոր բուրժուական դեմո-
կրատական տիրապետության մեջ անհնար է։

5) Իսկական դեմոկրատիզմը կապահովվի այն ժամանակ,
յերբ կվոչնչանա բուրժուական պետական կազմը, իսկ դրան ձգ-
տում է միայն խորհրդային կամ պրոլետարական դեմոկրատիան,
վորը իր նոր վարչաձևով անմիջապես վերացնում է հին պետա-
կան կարգերը։ Պրոլետարական ղեկատուության միջոց և՛ անցնե-
լու կոմունիստական հեղափոխության, սոցիալիստական արդյու-
նաբերություն կազմակերպման։

Լենինի այս թեզիսները հիմնական կետերը ծառայել են Պլասմո r-
հիմք Կոմիտեներն գործելակերպի մասին Բուխարինի և Ալբերտի մանկակ-
արած զեկուցումներին։

Պրոլետարիատի կովի ձևերի մեջ առաջին տեղն են բըռ-
նում մասսայական զինված ապստամբությունները. այս հիմնական
նպատակին պետք է յինթարկվեն հետեյալ միջոցները—ոգտա-
գործել բուրժուական պարլամենտարիզմը, ակտիվ մասնակցու-
թյուն ցույց տալ Պրոֆմիտության և այլ մասսայական բանվորական
կազմակերպություններին, աջակցել դադուլների ազգային-հեղա-

փոխական շարժումներին: Կոմիտեերնի գործելակերպը սահմանված է այնպիսի հիմունքներով, վոր տնտեսական և քաղաքական գործառնության զանազան աստիճաններին վրա կանգնած յերկրների համար ունենա իր հատուկ նշանակությունը: Թեպետները իրենց մեջ բովանդակում են նաև ուսումնական և միջազգային հեղափոխությունների փորձերը և ցուցադրում ներկա կապիտալիզմի որհաղակա՞ն վիճակը: Կոմունիստական Խոտերնացիոնալը հենվում է Մարքսի ուսմունքի վրա, վորը այնչափ վտարված և խաղաղափած է II Խոտերնացիոնալի կողմից:

Մեկել և նոր սլատմական շրջան — կոմունիստական շարժման շրջան:

Քաղաքացիական կռվի միջոցով դեպի պրոլետարիատի դիկտատուրա — ահա Կոմիտեերնի գործնականը: Այստեղից առաջ և հալիս այն, վոր անհրաժեշտ է միանգամայն անջատվել աջ սոցիալիստականներից, վորոնք բացասում են Կոմիտեերնի սկզբունքները: Կոմիտեերնի սեկցիաներին թույլ է տրվում համաձայնություն մեջ մտնել սինդիկալիստ այն տարրերի հետ, վորոնք կրնան հրահանգներ և դիկտատուրան խորհրդների ձևով:

Կոմիտեերնը իր նպատակներից մեկն է դարձնում՝ ողնել արևելյան շահագործվող ազգությունների ազատադրական շարժումներին:

Կոնգրեսը, միջազգային դրոթյան մասին ընդունելով համապատասխան բանաձև, գտնում է, վոր նորակազմ ազգերի լիզան իմպերիալիստների հակահեղափոխություն միջազգային մի ողնին է, և վոր սպիտակ տեւորը ազգանշան է նրան, վոր բուրժուազիան դիմում է հակահարձակման՝ պրոլետարական հեղափոխության դեմ:

Մանիֆեստ
և ուրիշ
բովանդակներ:

Կոնգրեսն ընդունում միջազգային պրոլետարիատին ուղղած մի մանիֆեստ, ուր կոչ է անում Վրոյր յերկրների պրոլետարիատին միանալ և դիմել զենքի՝ ընդդեմ բուրժուազիայի: Վրանվորական Խորհուրդների, պրոլետարիատի դիկտատուրայի, Յերրորդ Խոտերնացիոնալի դրոշի տակ — պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք ու անցե՛ք քաղաքացիական կռիվ:

Ընդունվում է բանաձև՝ աշխատել նաև բանգորուհիներին մասնակից անել սոցիալիզմի համար մղվող կռվում: Վրանանց մասնակցություն միայն կոմիտեան պրոլետարիատի դիկտատուրան:

Բոլոր կուսակցություններին ու կազմակերպություններին

վերապահվում է իրավունք՝ մինչև 8 ամիս վերջնականապես հայտնել իրենց մուտքը Կոմունիստական Խոտերնացիոնալի մեջ: Կանոնադրության կազմակերպումը թողնվում է հաջորդ կոնգրեսին, իսկ անմիջական աշխատանքների համար կազմվում է Գործադիր Կոմիտե, վորի մեջ մտնում են ամեն կուսակցությունից մի-մի ներկայացուցիչ: Գործադիր Կոմիտեն ընտրում է 5 հոգուց բյուրո:

Լենինը Կոմիտեերնի առաջին կոնգրեսի փակման որերին գրած իր մի հոդվածում (Завоеванное и захваченное) տալում է. — «Աստուծոցը պղծվեց»:

Վեկ դրա համար էլ այնքան հեշտություն, այնքան հաբթ կերպով, այնքան հանգիստ և ամուր վճարականությամբ ընթացան կոմունիստների միջազգային կոնֆերենցիայի (Մոսկվայի) աշխատանքները, վոր հիմք դրեց III Խոտերնացիոնալին:

Վեր շարժումը գնում է դեպի պրոլետարիատի դիկտատուրան, չնայած այն բոլոր տատանումներին, չնայած անողոր պարություններին, չտեսված ու չլսված «ուսական» բառի (յեթե դեպքը առերևույթ դրսից), գնում է դեպի Խորհրդային Խնդանությունը՝ իր ուղիները վողողելով միլիոնների և տասնյակ միլիոնների հասնող պրոլետարներով:

Վերն այդ արձանագրել ենք: Մեր բանաձևերում, զեկուցումներում և ճառերում արդեն հաստատված են ձևեր քերված նվաճումները:

ՎIII Խոտերնացիոնալի հիմունքը նախադուռն է Խոտերնացիոնալիստական հանրապետությունների խորհուրդների, միջազգային կոմունիզմի հաղթանակին:

Կոմիտեերնի առաջին կոնգրեսի նպատակն էր լայն կերպով պարզել կոմունիզմի դրոշակը: Կոնգրեսին այդ միանգամայն հուշովեց, յերբ ինկատի ունենանք, վոր առաջին և յերկրորդ կոնգրեսի տեղություն ընթացքում զանազան յերկրներում տեղի ունեցած շարժումները գնում էին տեղական այն կազմակերպությունների ղեկավարությամբ, վորոնք կամ Խոտերնացիոնալի մեջ էին մտնում, և կամ մեծ համակրություն էին վերաբերվում նրա հիմնական սկզբունքներին:

Յեվրոպական յերկրների անտեպական հզնաժամերի շնորհիվ նորագանում է անգործությունը և մի շարք յերկրներում ծայր են տալիս գործադուլային և հեղափոխական շարժումները:

1919 թ. ապրիլին Պարիզում տեղի յե ունենում մի հսկա

Կոնգրեսի
արդյունքներ:

Կոմիտեերնի
ազդեցությունը
միջազգային
բանվորակ.
տարմ. վրա:

բողոքի ցույց՝ ժողովին սպանողին արդարացիորեն առթիվ, և մայիսի 1-ը տոնվում է, առանց բացառությունների, ամբողջ բանվորական Ֆրանսիայի կողմից:

Անգլիայի հանքափորների, յերկաթուղայինների, մետաղագործների, կապի բանվորների մասսայական գործադուլները մի պահ անգլիական լորդերին դրել էին կարմիր սարսափի տակ:

Գերմանիայում 1919 թ. սեպտեմբերի և 1920 թ. հունվարի լայն բանվորական գործադուլները արագացնում էին գերման սոց. դեմոկրատների միջև գոյություն ունեցող պառակտումը:

Բացի թվածու բանվորական շարժումներից, Վենգրիայի հեղափոխությունը նշանակալից է նրանով, վոր յերկրում հայտարարեց խորհրդային ԽՍՀՄ-ին: Մի քանի ամիսներից հետո բուլղարիայի և սոց. դեմոկրատների միացած ուժերով տապալվում են թե խորհրդային Վենգրիան և թե խորհրդային Բալարիան:

Դենիկինի և Կոլչակի դեմ կազմակերպված բանվոր-գյուղացիական մասսաների դիմադրությունը, դրսի պաշարումը, յերկրի ծայրահեղ քայքայումը և դրա հետ կապված տնտեսական ճգնաժամը, Ռուսաստանի խորհրդային ԽՍՀՄ-ին խանգարում էին լայն կերպով աջակցելու միջազգային շարժումներին: Գործկոմը միջազգային հրատապ խնդիրներում իր սեկցիաներին դեկավարել է ժողովուրդների, բուլղարների և թուրքիկների միջոցով:

Կոմիտեների ամենակատարի հակառակորդներն էին միջազգային սոցիալ-դեմոկրատիան՝ հանձինս նրա կենտրոն Յերկրորդ Խնտերնացիոնալի: Շնորհիվ Կոմիտեների Գործկոմի յեռանդուն գործնեյություն, մինչև Յերկրորդ Կոնգրեսի հրավիրումն, խոշոր աշխատանք եր տարվել, և Կոմիտեները դարձել եր ազատություն սիմվոլ, դեպի վորը ձգտում էին միջազգային պրոլետարիատը և իրավազուրկ ազգությունները: Ուրիշ շատ խնդիրների հետ, Կոմիտեները, Գործկոմի սերտ մասնակցությամբ, 1919 թ. Բերլինում հրավիրում է Առաջին Կոմունիստական Յերիտասարդություն Միջազգային Կոնգրեսը (ԿԻՄ): Դրա մեջ մտնում է նախկին սոցիալիստական միությունների ուժեղ և ակտիվ մասը: Հենց վոր ԿԻՄ-ը կազմակերպվեց, նրա ներկայացուցիչն ընդունվեց, Գործկոմի կազմի մեջ վճռական ձայնի իրավունքով:

Նույն ժամանակին և պատկանում նաև Կլարա Յետկինի դեկավարությունը կազմած՝ Գործկոմին կից Կանանց Քարտուղարությունը: 1919 թ. լույս է տեսնում Կոմիտեների սրգան «Կոմունիստական Խնտերնացիոնալ»-ը, վորը միաժամանակ տպվում

և մի քանի լեզուներով: Վորպեսզի Յերկրորդ Խնտերնացիոնալի ամենախոշոր հենակետը թուլացնի, Գործկոմը հրահանգում է բոլոր յերկրների կոմունիստական կազմակերպություններին՝ ձեռք ձգել արհեստակցական շարժումների դեկավարությունը և արգելք հանդիսանալ Յերկրորդ Խնտերնացիոնալի գործնեյության, նպատակ է դնում նաև միջազգային հեղափոխական արհեստակցական ընդհանուր միություն կազմակերպելու: Գործկոմի նախաձեռնությամբ 1920 թվի հունիսի 16-ին, ճիշտ II Կոնգրեսի նախորդակին հրավիրվում է արհեստակցական միություն գործիչների խորհրդակցություն, ուր վորոշվում է կազմել Միջազգային Կարմիր Արհեստակցական Միությունների առաջին բժիշկը:

Յերկրորդ Կոնգրեսի որակազդի համար բավական կարեոր հարցեր են մատակարարել միջազգային բանվորական միտարվա շարժումները և Կոմիտեները այս անգամ լուկ պրոպագանդից անցնում է գործնական քայլերի: Յերկրորդ Կոնգրեսի նախորդին Լենինը գրում է. «Առաջին Կոնգրեսին ըստ եյություն մենք յեղել ենք պրոպագանդիստներ, մենք միջազգային պրոլետարիատին տվել ենք ընդհանուր գաղափարներ, մենք միայն կովի ենք կոչել, մենք հարցրել ենք՝ ո՞ւր են այն մարդիկ, վորոնք կարող կլինեն գնալ այդ ուղիով... Այժմ Յերկրորդ Կոնգրեսի գլխավոր նպատակն է.—այն, ինչ վոր հարյուրավոր միլիոն մարդկանց մեջ անց է կացված անկազմակերպ, այժմ պետք է տանել կազմակերպված, միացած, միատեսակ»:

1920 թ. հուլիսի 21-ին Մոսկվայում բացվում է Յերկրորդ Կոնգրեսի նիստը, ուր ներկա էին 39 յերկրների 169 պատգամավոր վճռական, իսկ 49-ը խորհրդակցական ձայնի իրավունքով: Այս թվից 152 պատգամավոր կոմունիստներ էին, իսկ մնացածը՝ համակրող կազմակերպությունների և խմբակցությունների կողմից: Որակազդի զլխավոր հարցերն էին.—Կոմունիստական կուսակցություն դերը և կազմակերպչական ձեերը, արհեստակցական միությունները, պարլամենտարիզմի մասին, ազգային և գաղութային հարցեր, հողային հարց, Կոմիտեների մեջ մտնելու պայմանները, Կոմիտեների կանոնադրությունը, կազմակերպչական հարցեր: Կոմիտեների կազմակերպչական ձեը խիստ կենտրոնական-դեմոկրատական է: Նկատի յե ունեցվել միջազգային դրությունը, դանադան յերկրների բանվորական շարժումների ընույթը և նրանցից բղխող խնդիրները: Կոմունիստական կուսակցություններից դատ Կոմիտեների մեջ էին մտնում նաև սինդիկալիստները և

Պրոպագանդիստների I-ին բժիշկը:

II Կոնգրեսի:

ԿԻՄ-ի միջազգ. կոնգրեսը:

Կոմկոմ ս ի
դերքի նրա
կ ա զ մ ա-
կ երպչա կ.
մեք:

զանազան օրոգիալիստական հոսանքներին պատկանող խմբակներ
Վոչ-կոմունիստները անկեղծորեն ընդունում են Սովետական Իշ-
խանության սկզբունքները, պատրաստ են կռվելու պրոլետարա-
կան հեղափոխության համար, բայց շատերը ժխտում են կուսակ-
ցության ղեկավար դերի կարևորությունը: Ուրեմն, անհրաժեշտ
էր ճշտել կոմունիստական կուսակցության ղեկավարի դերը, ստեղծել
յերկաթյա դիսցիպլինա և բոլոր հոսանքներին բերել մի հայտա-
րարի:

«Կոմիստները պետք է լինի այն մազնիւր, վորը քաշում
է դեպի իրեն ամեն մի բանվորի» (Զինովյի): Բայց այդ դեռ
չէր նշանակում, վոր անխոր բոլորին էլ պետք է ընդունել Կո-
միստերնի շաբբերը: Անարխիստական տրամադրությանը ոտնակա
սինդիկալիստների կողմից, վորոնք Կոմիստերնի ձախ թեւ էլին
կազմում, կանգնած էյին ֆրանսիական սոց. կուսակց. և գերմա-
նական Անկախների ներկայացուցիչները, վորպես աջ թեւ: «Կոմու-
նիստական Ինտերնացիոնալը յերբեք թույլ չի տալ վորեւէ իդե-
յական կեղծիք, վոչ մի դեպքում չի գնա սկզբունքային գիշում-
ների» (Զինովյի): Այս բոլորից հասկանալի չէ, թե ընդունված
բանաձևը ինչու պնդան խիստ հետևողական վերաբերմունք ցույց
տվեց դեպի կոմունիստական կուսակցության պրոբլեմը և նրա
անեկեքները՝ պրոլետարական հեղափոխության մեջ:

Կուսակցությունը հանդիսանում է ամենաառաջավոր, գե-
տակից, հետևապես նաև ամենահեղափոխական մասը բանվոր դա-
սակարգի: «Պրոլետարական դիկտատուրան պրոլետարիատի և
բուրժուազիայի դասակարգային կռվի ամենավճռական և ամենա-
հեղափոխական ձևն է: Նման կռվի հաջողությունը կապահովվի
այն ժամանակ, յերբ պրոլետարիատի ավանգարդը իր յետևից
կտանի նրա մեծամասնությանը: Պրոլետարիատի դիկտատուրայի
նախապատրաստական շրջանում անհրաժեշտ է կոմունիստի մաս-
նակցությանը բոլոր պրոլետարական և վոչ-պրոլետարական կազ-
մակերպություններում, ուր պրոլետարական աշխատավորական
մասսայի շահագործում և տեղի ունենում (քաղաքական, արհես-
տակցական, գինավորական, կոոպերատիվ, ինքնադրագուման, մար-
զական և այլն, և այլն): Պետք է կազմակերպել կոմունիստ-
ների բջիջներ, նաև գաղտնի, այն սեղերում, ուր այդ պա-
հանջվում էր:

Գեղմանեայի և Վենգրիայի հեղափոխականների անհաջողու-
թյունների փորձը ցույց է տալիս, վոր անհրաժեշտ է ուժեղ կու-

սակցական ղեկավարություն: Վենգրիայի ակտիվ գործիչ Ռակո-
շինը, Վենգրիայի հեղափոխության դառն փորձից հետո, ասում է.
«Յեկանք այն համոզման, վոր Վենգրիայի դժբախտությունը նրա-
նում էր, վոր դիկտատուրայի ժամանակ չունեցանք ուժեղ և
դիսցիպլինայի յենթարկված Կոմունիստական Կուսակցություն»:

Բանաձևը պահանջում է, վոր «ամեն յերկրում պետք է դո-
կտրինա ունենա մի միացյալ Կոմունիստական կուսակցություն»:

«Կոմունիստական կուսակցությունը պետք է խիստ կենտ-
րոնական սկզբունքով ղեկավարվի և քաղաքացիական կռվի ժա-
մանակ սահմանի ղինվորական դիսցիպլինա»:

Նախկին հնացած բանվորական շարժման յերեք ձևը, այն
է՝ կուսակցություն, արհեստակցական միություններ, կոոպերա-
ցիա—հնացած են, այժմ կյանքը պահանջում է նոր ձևեր—կու-
սակցություն, խորհուրդներ, արտադրական միություններ:

Կոմունիստական կուսակցությունը պետք է լինի ղեկավարը
բանվորական շարժումների և կուսակցությունը գոյություն կու-
նենա մինչև դասակարգերի վերացումը, մինչև պրոլետարիատի
ամբողջովին կոմունիզմին անցնելը:

Այդպիսով Կոնգրեսը ընդունում է 21 կետից պայմաններ 21 պայ-
այն կուսակցությունների համար, վորոնք կցանկանային մտնել մանկեր:
Կոմիստերնի շաբբերը:

Այդ պայմաններից գլխավորները սրանք են՝ 1) Կոմիստերնի
ամեն մի կուսակցություն պարտավոր է տարածել պրոլետա-
րիատի դիկտատուրայի գաղափարը: 2) իրենց շաբբերից բխել ռե-
ֆորմիստներին: 3) ստեղծել անլեզալ կազմակերպություններ: 4)
գործի մեջ տանել պրոպագանդ: 5) գյուղերում կանոնավորել պրո-
պագանդի գործը: 6) յերևան հանել սոցիալ-ազգայնականների
և պացիֆիստների խորդախ դեմքերը: 7) յերևան հանել իմպե-
րիալիստների գաղութային քաղաքականությունը և աջակցել դա-
դութային ամեն տեսակի ազատագրական հեղափոխական շար-
ժումներին: 8) ամեն կերպ պաշտպանել խորհրդային հանրապե-
տությունները: 9) պայքարել Ամստերդամի Դեղին Պրոֆմիու-
թյունների Ինտերնացիոնալի դեմ: 10) կուսակցությունները պետք
է կառուցված լինեն դեմոկրատական-կենտրոնացման ձևով: 11)
կուսակցության ծրագրերը պետք է փոփոխության յենթարկվեն
Կոմիստերնի վոգով:

Թվելով նաև մի շարք կազմակերպչական պարտականու-
թյուններ 21-րդ կետում, կոնգրեսը հայտնում է, վոր «կուսակ-

ցության այն անդամները, վորոնք սկզբունքորեն կմերժեն Կոմիտեներն. առաջարկած պարտականությունները և թեզիսները, պետք է հեռացվեն կուսակցությունից»:

Արհեստակցական միությունների մեջ անհրաժեշտ է կազմել կոմունիստական ֆրակցիա:

Տնտեսական քայքայման շրջանում բանվորները շատ լավ հասկանում են, վոր անհրաժեշտ է իրենց հսկողությունը արդյունաբերության բարձրացման գործում. այդպիսի կազմակերպություններ հանդիսացան— ֆաբրիկ - գործարանային կոմիտեները: Ցերկրորդ Կոնգրեսը առաջարկում է կոմունիստներին՝ ազդել և ակտիվ մասնակցություն ցույց տալ՝ վոչ միայն կոմունիստական տեսակետների վրա կանգնող բանվորներին կազմակերպելու, այլև գործարանի ամբողջ բանվորության:

Բանաձևը վերջում կոչ է անում Ամստերդամի Խնտերնացիոնալից դուրս մնացած արհեստակցական միություններին միանալու և կազմելու մի միջազգային ուժեղ ճակատ՝ Կոմունիստական Խնտերնացիոնալի դրոշի տակ: Վոչ պակաս կարևոր խնդիր էր նաև կապիտալիստական յերկրների կոմկուսակցությունների մասնակցությունը պարլամենտներում: Կոնգրեսում յերեք հոսանք կային, վորոնք այդ խնդրի շուրջը տարբեր տեսակետներ էին ցուցադրում: Մինդիկալիստները առհասարակ բացառում էին քաղաքական գործնեյությունը, մասնավորապես պարլամենտականը: «Ձախ» կոմունիստները պարլամենտից ողտվելու հանգամանքը չէին ժխտում, բայց գտնում էին, վոր դա «խաղաղ» ժամանակի գործ է, հեղափոխական տրամադրության շրջանում դա գտնում էին վոչ ոգտակար: Այս յերկու հոսանքներին հակադրվում է Գործադիր Կոմիտեյի տեսակետը (Լենին, Բուխարին): Վերջին տեսակետի վրա կանգնածները խիստ կարևոր և անհրաժեշտ էին գտնում ոգտագործել պարլամենտարիզմը, վորպես ամբիոն, վորպես պրոպագանդի ամենահաջող վայր:

Թե ինչու պետք է մասնակցել ընկ. Լենինը իր «Ձախության յերեխայական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքում գերման «ձախերին» պատառնալով և՛ այսպես. «Յեթե արդյունաբերական բանվորության վոչ միայն «միլիոններն» ու «լեգիոններն», այլ նույնիսկ բավական խոշոր մեծամասնությունը գտնում է կաթոլիկ տերտերների յետևից, իսկ գյուղական բանվորությունը՝ հողատերերի և կուլակների յետևից, — ապա այստեղից անկասկածելիորեն հետևում է, վոր պարլամենտարիզմը Գեր-

մանիայում իր նշանակութունը դեռ չի կորցրել քաղաքականապես և վոր պարլամենտական ընտրություններին և պարլամենտական ամբիոնի պայքարին մասնակցելը պարտադիր է հեղափոխական պրոլետարիատի կուսակցության համար՝ հասկալիս իր դասակարգի յետաճանց խավերը կրթելու և լուսավորելու համար, և մոռացված, մոռթ, անգարգացած գյուղական մասնաները սթափեցնելու ու լուսավորելու համար: Քանի վոր ուժ չունենք ցրելու բուրժուական պարլամենտը կամ այլ յետադեմ տիպի հաստատություն, պարտավոր ենք աշխատել նրանց ներսում հատկապես այն պատճառով, վոր այնտեղ նստած են տերտերների և գյուղական մոլթ ուժերի հիմարացրած բանվորներ, հակառակ դեպքում դուք սոսկ դատարկախոսներ կլինեք»:

Այս իմաստով էլ ընդունվում է Կոնգրեսի բանաձևը, պարտադիր դարձնելով պարլամենտի կոմունիստ պատգամավորներին՝ պարլամենտի ամբիոնից կռվելու վոչ միայն բուրժուազիայի խաղախությունների դեմ, այլ նաև սոցիալ-շովինիստների, տարածելով Կոմիտեների գաղափարները լայն մասսաների շարքերում:

Միջազգային ցավոտ խնդիրներից մեկն է նաև ազգային և գաղութային հարցերը: Լենինը, իր թեզիսներում առաջնակարգ տեղ տալով ազգային և գաղութային խնդիրներին, ցույց է տալիս Կոմիտեների կատարելիք դերը: Անհրաժեշտ է վոր բոլոր ագգությունների շահագործվող մասսաները իրենց միացյալ ուժերով տապալեն իրենց հողատերերին և բուրժուազիային: Այդ իմաստով Խորհրդային Խշխանությունը իր շուրջը պետք է համախմբի, մի կողմից՝ առաջավոր յերկրների պրոլետարիատին, իսկ մյուս կողմից՝ գաղութների ազգային-ազատագրական հեղափոխություն կատարող ճնշված ազգություններին: Խորհրդային Ֆեդերացիան և, վոր պետք է լուծի ազգային հարցը, հավասարմակարգակի վրա դնելով բոլոր ազգությունների իրավունքները: Արեմոյան պրոլետարիատը պետք է աջակցի ճնշված ժողովուրդների ազատագրական գործին:

Կոնգրեսն ընդունեց նաև հնդկական կոմունիստ Ռոյի հավելյալ թեզիսները, ուր անհրաժեշտ է համարվում այդ յերկրներում կազմակերպել կոմունիստական կուսակցություններ՝ ուժ տալով Արևելքի զարգացող բանվորական շարժումներին: Կոմկուսակցությունները պետք է սերտ կապ ունենան գոյություն ունեցող մանր-բուրժուական կուսակցությունների հետ: Վորոնք կընվում են իմպերիալիզմի տիրապետության դեմ: Գյուղացիական

Ա. գ. գալիս
և գաղութային
հարցեր:

Գյուղացիական
հարց:

հարցի մասին—Կոնգրեսն ընդունում է Լենինի բանաձևը և այդ բանաձևը միջազգային կոմունիստական շարժման զարգացման տեսակետից ունենում է խոշոր նշանակություն: Բանաձևում ստված է. «Պրոլետարիատը, վորպես իսկական սոցիալիստորեն շարժվող դասակարգ, հանդես է գալիս վորպես առաջապահը բոլոր աշխատավորների և շահագործվողների, վորպես նրանց ղեկավարը՝ շահագործողներին տապալելու գործում. իսկ այդ անկարելի չէ՝ առանց գյուղի աշխատավոր մասսայի համախմբման՝ Կոմունիստական կուսակցության շուրջը: Գաղաքի պրոլետարիատը պետք է իր կողմը գրավի և իր յետևից տանի գյուղատնտեսական պրոլետարիատին (վարձու բանվորներին), կիսապրոլետարներին (այն գյուղացիներին, վորոնք ապրում են որավարձով), մանր գյուղացիներին (ուրիշ աշխատանքը չշահագործողներին)՝ անհրաժեշտ է միջին գյուղացիությանը (վորը իր տնտեսությունից ունի ավելցուկ և շատ անգամ դիմում է վարձու բանվորական ուժի ուղևորության)՝ չեզոքացնել այն չափով, վոր նա չանցնի գյուղի ռեակցիոն տարրերի կողմը: Չնայած վոր միջին գյուղացին շահվում է պրոլետարական հեղափոխությունից, սակայն նրա մանր սեփականատիրական հոգեբանությունը Կոմկուսը պետք է հաշվի առնի:

Սոցիալ հոգատերերի և ազնվականների հողերը անհրաժեշտ է գրավել:

Առաջավոր կապիտալիստական յերկրներում, շնորհիվ այդտեղ զարգացած կուլտուրայի, հարկավոր է խոշոր գյուղատնտեսական հիմնարկները պահպանել և դրանք վարել վորպես սովխոզներ. իսկ ֆեոդալ ղեկավարում—հողերը գրավել և հանձնել գյուղացիության:

Կոնգրեսը ըննություն առավ նաև այն, թե խորհուրդները յերբ և ինչպիսի պայմաններում պետք է կազմել: Բանաձևում այդ առթիվ ցույց է տրվում յերեք մոմենտ. յերբ մասսաների մեջ հեղափոխական թափը ուժեղ է, յերբ իշխանությունը բուրժուազիայի ձեռքից ընկնելու վրա չէ, յերբ բանվոր դասակարգի մեջ՝ գլխավորապես նրա ավանգարդ կոմունիստական կուսակցության մեջ՝ գոյություն ունի կովելու վճռականություն:

II Կոնգրեսից մինչև III-ը անցնելու շրջանում, Կոմինտերնի գործկոմը, համաձայն Կոնգրեսի դիրեկտիվների, 1920 թ. սեպտեմբերի 1-ին Բագվում հրավիրեց «Արևելքի Ժողովուրդների» համագումար, ուր ներկա էին 32 ճնշված ժողովուրդների 1.891 պատգամավորներ, վորոնց թվում նաև պատմության մեջ առա-

ջին անգամ հրապարակ յեկող 50 հոգի արևելահայեր: Որակարգի մեջ մտնում էին՝ քաղաքական դրությունը, ազգային և զաղութային խնդիրներ, հողային հարց, խորհուրդները Արևելքում և կազմակերպչական հարցեր: Համագումարն ընտրեց 45 հոգուց բաղկացած՝ «Արևելյան Ժողովուրդների Պրոպագանդի և Գործողությունների Խորհուրդ»:

II Կոնգրեսի զբաղմունքների որերում Ռուսաստանի, Իտալիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Հարավ-Սլավիայի և Վրաստանի արհեստակցական միությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը իր մի կոչով հրապարակ է դնում Կարմիր Պրոֆինտերնացիոնալի անհրաժեշտությունը: Խորհրդակցությունն ընտրում է մի մարմին, վորը պետք է զբաղվի կազմակերպչական աշխատանքներով և հասունացնի միջազգային նման մի կազմակերպության գաղափարը:

Կ. Կուսակցու գլխավորությամբ աշխատող «Ցենտրիստները», Կոմինտերնի հետ ունեցած մի շարք անհաջող բանակցություններից հետո, վորոշում են ունենալ իրենց Խնտերնացիոնալը: Վեննա քաղաքում տեղի յե ունենում հիմնադիր ժողովը, ուր մասնակցում էին գերմանական «Ցենտրիստները», ֆրանսիական սոցիալիստները, շվեյցարական, ռուսական մենշևիկները, և վորոշում են ունենալ «Սոցիալիստական Կուսակցությունների Միջազգային Միություն», ուրիշ խոսքով՝ 2¹/₂ Խնտերնացիոնալ:

1920—1921 թ. թ. միջազգային պրոլետարիատի անհաջող տարիներից էին... տնտեսական ծանր պայմաններ, բուրժուազիայի նախահարձակ... Հետագայում բանվորների հեղափոխական տրամադրությունը սկսում էր բարձրանալ և մի կարճ ժամանակ նույնիսկ ունեյին վորոշ հաջողություններ: Իտալիայում ռեֆորմիստները դավաճանում են բանվորական շարժման, վորի հետևանքով տեղի յե ունենում ուժեղ պառակտում՝ սոցիալիստական կուսակցության շարքերում: Նույն տարին էլ կազմակերպվում է «Իտալական կոմունիստական կուսակցությունը»: Միջին Գերմանիայի բանվորական շարժումներն ևս ճնշվում են. մասսայական ձերբակալություններ, կոմունիստական կազմակերպությունների դեմ հալածանք, ներքին կուսակցական ճգնաժամ:

Չեխո-Սլովակիայում բանվորները պարտություն են կրում «ձախ մարքսիստների» կազմակերպած ցույցին: Կազմվում է Կոմունիստական կուսակցություն:

Անգլիայում կապիտալը կրճատում է բանվորների աշխա-

Պրոֆինտերնացիոնալի հիմնումը:

2¹/₂ Խնտերնացիոնալի հիմնումը:

Միջազգային կապիտալի հարձակոցի արդյունք:

Խորհուրդները յե՞րբ կազմվել:

տավարձը, յերկարացնում աշխատանքի ժամերը. պրոլետարիատը կորցնում է նախորդ տարիներում ձեռք բերած հաղթությունները:

Լավ պայմաններում չկը նաև Խորհրդային Ռուսաստանը: Զիշտ է, արտաքին ֆրոնտները արդեն վերացված էյին, բայց տնտեսական սուր ճգնաժամը դեռ շարունակվում էր: Պարեն-տուրբը գյուղացիների մեջ մեռցրել էր վորեւ ցանկություն՝ հողային մշակույթը զարգացնելու: Կրոնշտադտի ապստամբությունը, նեպին անցնելու շրջանը՝ վորը դեռ անորոշ հեռանկար էր, և 1921 թ. սովի սարսափելի հետևանքները բանվորներին և գյուղացիներին ջղայնացնում էյին: Նույնը կարելի չէ ասել նաև Ռուսաստանի միջազգային դրության մասին. Լեհաստանի պատերազմը, վորը հուսադրում էր երոպական մի շարք յերկրներում հեղափոխություն առաջ բերելու, անհաջող անցավ:

Մի շարք յերկրների բանվորական շարժումների ճգնաժամերն ուժեղացրել էյին նաև սոցիալիստական աջ թևերին և Լյնխկ մի շարք կոմունիստական կուսակցությունների մեջ ստեղծել վորոշ տարաձայնություններ:

Ահա այդ շրջանի մասին ինչ է ասում ընկ. Զինովյեը. «III Միջազգային Կոնգրեսը գումարվում է միայնպիսի ժամանակ, յերբ ռեակցիոն ամպերը բռնել էյին ամբողջ Յեվրոպայի հորիզոնը: Միջազգային կապիտալը ամենուրեք դիմում է հարձակման, միլիոնավոր անգործներ սովամահ են լինում, տասնյակ հազար կոմունիստներ նստած են բանտերում: Համարյա բոլոր «առաջավոր» կապիտալիստական յերկրներում կազմակերպվում են գլուխ թոցնողների բանդաներ (ֆաշիստները Իտալիայում, որգելը՝ Գերմանիայում, ամեն տեսակի լեգիոններ՝ Ֆրանսիայում, վարձու բանդիտներ՝ Ամերիկայում), վորոնք հատուկ նպատակ ունեն՝ վորքան կարելի չէ շատ կոմունիստների գլխատել: Ընդհանուր դրությունը կարելի չէ անվանել միջազգային ռեակցիայի խրախճանք»:

Ահա այսպիսի պայմաններումն է, վոր 1921 թ. հունիսի 22-ին գումարվում է Կոմինտերնի Միջազգային Կոնգրեսը, ուր մասնակցում էյին 58 յերկրների 603 պատգամավորները: Որակարգն էր. 1) Գործկոմի գեկուցումը, 2) Միջազգային տնտեսական ճգնաժամը և Կոմինտերնի անելիքները, 3) Կոմինտերնի տակտիկական հեղափոխության ժամանակ, 4) Անցողական շրջան, 5) Ամստերդամի Ինտերնացիոնալի դեմ կռվելու միջոցների մասին,

6) Միջազգային պրոֆմիությունների Կոնգրեսը և Կոմինտերնը, 7) Կոմունիստական կուսակցությունների կազմակերպչական խնդիրներ, 8) Արևելյան հարց և 9) Ընթացիկ խնդիրներ:

Դեպի պրոլետարական և կիսապրոլետարական լայն մասսաները. մասնակցել պրոլետարիատի առողյա պայքարին, ստեղծել ուժեղ, ինքնուրույն, ոպորտյունիստական տարրերից մաքրված կոմունիստական կուսակցություններ, գրավել պրոֆեսիոնալ միությունները... — Ահա այն լողունգները վորոնց տակ տարավ իր աշխատանքները III Կոնգրեսը: Կապիտալը դիմել է հարձակման, անհրաժեշտ է բանվորական ուժերի նոր թափ, նոր գործելակերպ, նոր ղեկավարություն: Իսկ դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել թե արդյո՞ք բուրժուազիան կարող է պատերազմի հետևանքով առաջացած իր տնտեսական հավասարակշռությունը վերականգնել: Կոնգրեսը այդ հարցին պատասխանում է բացառական իմաստով. չկա վոչ մի հիմք կարծելու, վոր Յեվրոպան կարող է կայուն հավասարակշռություն ունենալ: Յեվրոպան շարունակում է տնտեսապես քայքայվել, միջազգային շուկան անդամալուծվում է, Յեվրոպան տառապում է արյան պակասությունից, իսկ Ամերիկան՝ արյան շատությունից: Վոսկի դրամի արժեքը խախտված է և, բացի այս բոլորից, բուրժուական յերկրների սոցիալական փոխադարձությունները որեցոր սրվում են: Կոնգրեսը միաժամանակ գտնում է, վոր հեղափոխական տարերային շարժումների ընթացքն ուշանում է, վոր բանվորների մեջ ստեղծվում է տրամադրություն՝ հիմնավորապես և մասսայորեն պատրաստվելու հեղափոխության համար, II Ինտերնացիոնալը և հին պրոֆմիությունները թևավորել են բուրժուազիային, ուստի պետք է ընդունել «դեպի մասսաները» լողունգը, դեպի բանվորական միասնական ճակատ ստեղծելու անհրաժեշտությունը:

«Դեպի մասսաները» լողունգը Կոնգրեսին հարկադրում է մի անգամ ևս վերադառնալու պրոֆմիություններին տիրելու կարևոր անհրաժեշտությանը: Կոմինտերնի Կոնգրեսի հետ միաժամանակ տեղի չէ ունենում Կարմիր Պրոֆմիությունների առաջին կոնգրեսը (3—19 հուլիս 1921 թ.), վորը մշակեց միացյալ գործողությունների ծրագիրը, սահմանեց հիմնական գործելակերպը և կազմակերպչորեն միացրեց միջազգային պրոֆշարժմանը մասնակցող ձախ, հեղափոխական թևը: Վորպես գործնական ծրագիր առաջարկվում է հիմնել ֆարրիկ-գործարանային կոմիտեներ և

Լողունգներ:

Համա-խառնյին հոգևածամիկ ունեցողներ:

Դեպի մասսաներ:

Պրոֆմիությունների կազմակերպչական:

Խորհուրդների ժամանակավոր հզնաժամը:

III կոնգրեսը:

վերահսկել հանձնաժողովներ, միջազգային ցույցերի կազմակերպումը և քաղաքացիական պաշտպանության արտադրության բանվորական կոնտրոլի մասնաշաղկապներ, սերտ կապել պրոֆմիթյան աշխատանքները կոմկուսի հետ, խիստ հաշվի առնել միջազգային դրությունը հարմար ընդհանրացնել հարձակողական քայլեր անելու համար:

Կա նոն ա-
դրությունը: Կոնգրեսը ձևակերպեց կոմ. կուսակցության ներքին կառուցվածքը և վորոշեց աշխատանքի ձևերը: II Կոնգրեսի կողմից վորոշ փոփոխություններով ընդունված Կոմինտերնի կանոնադրությունը այս անգամ վերջնականապես հաստատվեց:

Առաջադեմ
կա նոն ա-
դրությունը: Կոնգրեսը իր վորոշումներում ցույց եր տալիս կանանց մեջ աշխատելու յեղանակը՝ ղեկավարվելով հետևյալ սկզբունքներով. կին պրոլետարներին հանել իրենց անհատական աշխարհայեցողությունից. նրանց քաշել դեպի ընդհանուր դասակարգային պայքարը, ոգտագործել կանանց այն քաղաքական իրավունքները, վորպիսիք առանձնապես ստացել են զանազան յերկրներում. բոլոր կոմկուսներին կից կազմել կանանց մեջ աշխատանք տանելու բաժիններ. բանվորուհիներին և գեղջկուհիներին ակտիվ մասնակից անել կապիտալիզմի դեմ մղվող կռիվին:

Այսպիսով III Կոնգրեսը իր աշխատանքները տանում է չորս գլխավոր հարցերի ուղղությամբ. տակտիքական, կազմակերպչական, պրոֆշարժման և կանանց մեջ աշխատանքի:

Առաջին կոնգրեսը հաստատեց Կոմինտերնի հիմնական սկզբունքները, յերկրորդ կոնգրեսը դրեց իսկական կազմակերպության հիմքը, իսկ յերրորդ կոնգրեսը տվեց տակտիկայի հիմնական ուղղությունը:

Թե իր սեկցիաների համար վորքան մեծ նշանակություն պետք է ունենային միջազգային գերագույն շտաբի հրամանները, բավական է հիշել, վոր աշխարհի բոլոր անկյուններում նա ցըրված ուներ 3 միլ. անդամներ, 646 որաթերթեր և 351 շաբաթաթերթեր և ամսագրեր:

III և IV Կոնգրեսների լոնցոնական շրջանում կապիտալ շարունակում է ուժեղանալ. բանվորների դրությունը, մանավանդ Անգլիայում, Ամերիկայում, Շվեյցարիայում, Նորվեգիայում, Իտալիայում քանի գնում վատթարանում եր: Բուրժուազիան դիմում է ակտիվ հարձակման: Բանվորների մեջ միասնական ճակատ ստեղծելու պահանջը սաստկանում է: 1922 թ. փետրվարին տեղի ունեցած Գործկոմի նստաշրջանը, կրկին անգամ այս կարևոր խնդիրը քննելով, վորոշում է դնել IV կոնգրեսին: Նույն իմաստով

քայլեր է արվում գոյություն ունեցող յերեք Ինտերնացիոնալների միջև ստեղծելու միացյալ ճակատ, քայց դարձյալ, շնորհիվ միջազգային մենշևիզմի խարդախությունների՝ միությունը չի կայանում:

Բանվորական շարժումների պատմության համար աննպաստ այդ շրջանում Գերմանիայի ֆաբրիկ-գործարանային կոմիտեները մեծ արժեք է հեղինակություն են ստանում իրենց կողմը գրավելով բանվորական լայն մասսաները. ղեկավարներն էյին կոմունիստները, վորոնք աշխատում էյին կոմիտեներին կազմակերպել ռադիկալ միություն և նրանց միացնել համագերմանական մասշտաբով: Այսպիսով, մի նորատիպ բանվորական շարժման՝ ազդեցության տակ է, վոր առաջ է գալիս «Բանվորական կառավարություն» նշանաբանը, վորը դարձյալ դրվեց IV Կոնգրեսի ընտելության:

Պրոֆինտերն իր շուրջը համախմբելով հեղափոխական միությունները, հետգհետե պառակտումներ եր առաջ բերում Ամստերդամի. Ինտերնացիոնալի շարքերում:

1921 թ. անբերրիությունից առաջ յեկած սովը դեռ են չամրացած ու վորքի չկանգնած հեղափոխական Ռուսաստանի համար շատ ծանր եր: Բայց բանվոր-գյուղացիական մասսաների տոկունության շնորհիվ, ճգնաժամից հետո սկսվեց տնտեսական վերաշինության մի ուժեղ թափ, վորին ոգնության յեկավ նաև 1922 թ. առատ բերքը:

IV Կոնգրեսը 1922 թ. նոյեմբերի 15-ին, Խորհրդային Իշխանության հնգամյակին, բացվում է Լենինգրադում, իսկ հետո իր աշխատանքները շարունակում Մոսկվայում: Կոնգրեսին ներկա էյին 401 պատգամավորներ՝ 62 կուսակցություններից: Որակարգի մեջ մտնում էյին՝ 1) Գործկոմի ղեկուցումը, 2) Ռուսական հեղափոխության հինգ տարին և միջազգային հեղափոխության հեռանկարները, 3) նոր տնտեսական քաղաքականություն (նեպ), 4) կապիտալի արշավանքը, 5) ծրագրային հարցեր, 6) Պրոֆմիությունը և կոմունիստները, 7) Արևելյան հարց, 8) ագրարային հարց, 9) Յերիտմիություն, 10) աշխատանքը կանանց մեջ, և մի շարք հերթական խնդիրներ:

Այս անգամ էս Լենինն է ղեկավարում կոնգրեսը, և աշխատանքներին տալիս հարկավոր ուղղությունը: Լենինը իր «Ռուսական հեղափ. հինգ տարին և միջազգ. հեղափոխ. հեռանկարները» ղեկուցման մեջ հանգամանորեն կանգ է առնում նեպի վրա և բացատրում, վոր այն դրությունը, վորը հիմք է ծառայել նե-

Միացյալ
ճակատ:

Բանվոր.
շարժում-
ների նոր
քայլը:

IV կոնգ-
րեսը:

Նեպ:

պին, նկատվել է դեռ 1918 թ.: Ռուսաստանում գոյություն ունեն դանազան ձևի տնտեսություններ՝ 1) նահանգատական, այսինքն՝ ավելի պրիմիտիվ գյուղատնտեսական ձև, 2) մանր ագրանքային արդյունաբերություն, 3) մասնավոր կապիտալիզմ, 4) պետական կապիտալիզմ և 5) սոցիալիզմ: Մենք դեռ 1918 թ. — ստում է Լենինը — վորոշ չափով գիտակցել էինք, վոր լավ կլինի, յեթե մենք նախ և առաջ գայինք պետական կապիտալիզմին, իսկ հետո միայն սոցիալիզմին: Քաղաքացիական կռիվները վերջանալուց հետո, յերբ մասնաները անցնում էին լրագրող վերաշինական աշխատանքների, մի տեսակ դժգոհություն եր զգացվում գլխավորապես գյուղացիական շրջաններում. դրա պատճառները բացատրվում էին նրանով, վոր «մենք մեր տնտեսական առաջխաղացման ժամանակ չափազանց առաջ էինք դնացել, առանց պահովելու մեզ հարկավոր բազան: Այն ժամանակ ել վորոշված է յեղել անցնել նոր տնտեսական քաղաքականություն: Այդ ժամանակից անցել է տարի ու կես և արդյունքները արդեն իրական են» (Լենին):

Միջազգային հեղափոխության հեռանկարների մասին ընկեր Լենինը II և III Կոնգրեսներում արած հայտարարություններից ավելի ուժեղ կերպով դնում է մի հիմնական պահանջ, վորը, անշուշտ, կարագացնի միջազգային հեղափոխությունը. դա — սովորելու, անվերջ սովորելու անհրաժեշտությունն է: Գլխավորապես արտասահմանյան ընկերները ռուսական հեղափոխությունից պետք է շատ բան սովորեն:

Կոմիտեների միասնական ծրագիր ունենալու խնդիրը զուտ տեխնիքական հանգամանքներով ձգձգվել եր մինչև IV Կոնգրեսը: Ծրագրի հիմնական շատ կետեր (բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարական հեղափոխության, կուսակցության դերի մասին, պրոֆմիությունների և խորհուրդների, հողային հարցի մասին և այլն) արդեն նախորդ կոնգրեսներից ընդունված էին և գործադրության մեջ էին. բայց անհրաժեշտ եր ընդգրկել նաև մի շարք այլ խնդիրներ, վորոնք առաջադրվել էին վերջին 5 տարվա փորձերից: Ընկ. Բուխարինի ղեկուցման հիման վրա ծրագրի հիմնական սկզբունքները մատնանշվում են. ծրագիրը մշակելիս անհրաժեշտ է համարվում նկատի ունենալ կոմիտեների մեջ մշտնոդ կուսակցությունների յերկրների տնտեսական և քաղաքական առանձնահատուկ պայմանները: Կոնգրեսը իր բոլոր սեկցիաներին հրահանգում է V Կոնգրեսի բացումից յերեք ամիս առաջ

ներկայացնել իրենց նախագիծը հատուկ ծրագրային կոմիտեային:

Հողային հարցը կրկին ծառանում է Կոնգրեսի առաջ նրա համար, վոր տրվի մի շարք գործնական նոր ցուցմունքներ: II Կոնգրեսում ընդունված վորոշումներին առթիվ: Աղքատ գյուղացիությանը պետք է հասկացնել, վոր Կոմկուսն է, վոր հանդիսանում է միակ ղեկավարը բոլոր աշխատավորների և ճնշվածների, Կոմկուսը պետք է խորացնի գյուղի պրոլետարիատի կռիվը, Կոմկուսը պետք է սպեկուլյանտներից և վաշխառուներից պաշտպանի մանր ու միջակ գյուղացիության շահերը, մինչև պրոլետարական հեղափոխության վերջնական հաղթանակը Կոմկուսը պետք է ոգնի հողագուրկ գյուղացիների կռիվ հաջողությանը:

Բանվորական կառավարության լոգունքի մասին Կոնգրեսը հանում է հետեյալ վորոշումը. «Հայտնի դեպքերում կոմունիստները պետք է հայտնեն իրենց ցանկությունը կազմելու բանվորական կառավարություն՝ վոչ-կոմունիստ բանվորական կուսակցությունների և բանվորական կազմակերպությունների հետ կանգնած լինելով հեղեյալ տեսակետների վրա. 1) նման կառավարության մեջ մասնակցող կոմունիստները գտնվում են իրենց կոմկուսի խիստ հսկողության տակ, 2) կառավարության կոմունիստ անդամը գտնվում է հեղափոխական կազմակերպությունների հետ սերտ կապակցության մեջ, 3) կոմունիստական կուսակցությունը պահպանում է իր իսկական դեմքը և ինքնուրույն է իր ազդեցություն աշխատանքի մեջ»:

Ընկ. Լազոսկու ղեկուցումից պարզվում է, վոր Ամստերդամի Ինտերնացիոնալը ամենուրեք ղեմել է ուժեղ հարձակման Պրոֆինտերնի անդամ-միությունների դեմ, աշխատում է առաջ բերել պառուկալուսներ և այլն: Կոնգրեսը կրկին հաստատելով II Կոնգրեսի բանաձևը, առաջարկում է իր բոլոր սեկցիաներին աշխատել միասնական ֆրոնտի միջոցով ստեղծել ամուր կապ բանվորների հետ, արագացնել Պրոֆինտերնին անցնելու գործողությունները. գործի հաջողության համար տեղական կոմունիստները կարող են գործել հեղափոխական սինդիկալիստների հետ՝ նախորդ համաձայնեցնելով միասնական գործողությունների մեթոդը:

Ջարգացող ֆաշիզմի դեմ կռվելու համար Կոնգրեսը կոմունիստական կուսակցություններին առաջարկում է ցույց տալ լակտիվ դիմադրություն: Ֆաշիզմի դեմ, վորպես միջազգային յերեվոլյութի դեմ, պետք է ստեղծել միասնական ֆրոնտ, առաջ բերե-

Հողային հարցը:

Բանվորական կառավարություններ:

Իստալ Պրոֆինտերնի անդամներին:

Ֆաշիզմի դեմ:

Միջազգ. հեղափոխ. հեռանկարներ:

Կոմիտեների ծրագիր:

Գաղութա-
յին ժողո-
վուրդների
մասին:

լով ինքնապաշտպանության կազմակերպություններ (պրոլետարական դրոժինաներ, գործարանային հարյուրակներ և այլն):

Նկատի ունենալով, վոր II կոնգրեսից մինչև X-ը գաղութային կյանքում խոշոր փոփոխություններ են տեղի ունեցել և վոր Արևելքի հեղափոխական շարժումների ուժեղացումը խոշոր հարված է իմպերիալիզմին, կոնգրեսը տալիս է հետևյալ ցուցմունքները, — կազմակերպել հակաիմպերիալիստական ֆրոնտ՝ զորահավաքի յենթարկելով բոլոր հեղափոխական ուժերին, յերևան հանել ազգային բուրժուազիայի տատանումները, իմպերիալիզմի դեմ մղվող կռիվում աջակցել ազգային հեղափոխական շարժումներին. անհրաժեշտ է, վոր գաղութների կոմկուսները վերածվին մասսայական կուսակցության, վոր կղեկավարի բանվորների և աղքատ գյուղացիների ամենորոյա կռիվը: Կոնգրեսը կանգ է առնում նաև կոոպերացիայի, կանանց հարցի, կոմյերիտների խնդիրների վրա և տալիս մի շարք այժմեյական նշանակություն ունեցող հրահանգներ:

IV կոնգրեսի
արդյունքներ:

Ընկ. Զինովյե, փակելով կոնգրեսը, իր յեզրափակիչ խոսքում տալիս է հետևյալ գնահատությունը. «Կարելի չէ ասել, վոր մեր կոնգրեսը մոտիկից շոշափել է, ընկել է ամեն մի կուսակցության խնդիրները, նրանց մեջ յեղած շերտավորումները, բոլոր վիճելի հարցերը նույն ուշադրությամբ, ինչպես վոր ամեն մի լուրջ բժիշկ կըննի իր հիվանդին: Մեր կոլլեկտիվ աշխատանքի փորձառության հիման վրա յեն ընդունված մեր վորոշումները, վորոնք համապատասխանում են մեր միջազգային կազմակերպությունների կոլլեկտիվ վոգունս:

Պրոլետար.
հեղափոխո-
ւթյունների
սափ
երջանք:

IV կոնգրեսից մինչև V-րդը տեեց մեկ ու կես տարի: այդ ժամանակամիջոցում տեղի ունեցած անցքերը բավականին նշանակալից եյին:

1923—1924 թ.թ. միջազգային բանվորական շարժումները պատմության մեջ իրենց պատվավոր տեղն են բռնում. Գերմանիայում և Բուլղարիայում պրոլետարիատը փորձում է գրավել իշխանությունը, Անգլիայում՝ բանվորական կուսակցության լիդեր Մակդոնալդի գլխավորությամբ՝ հայտարարվում է բանվորական կառավարություն:

Գերմանիայի և Բուլղարիայի Կոմունիստական կուսակցությունները իրենց ներքին կազմակերպչական թուլությամբ անկարող յեղան իշխանությանը տիրանալու՝ թույլ տալով մի շարք աններելի սխալներ, վորոնց հետևանքով բուրժուազիան կազմա-

կերպվեց և ցույց տվեց վճռական դիմադրություն: Կոմիստերնի սեկցիաներում տեղի ունեցած վիճաբանություններից պարզվում է, վոր կոմունիստական կուսակցությունների շարքերից դեռ իսպառ չեն մաքրված մանր-բուրժուական հոսանքները: Ահա այս բոլորը գալիս եյին ասելու, վոր V կոնգրեսը պետք է ըննության առարկա դարձնի կոմկուսների բոլորեկանացման հարցը, վորը, անշուշտ, գրավականը կլինի ապագա հաջողությունների:

Բայց չնայած այդ անհաջողություններին, մի շարք յերկրներում կոմունիստական կուսակցությունները հետզհետե զարգանում են և խտացնում իրենց շարքերը: 1924 թ. Գերմանիայի ռալսատագի ընտրություններին Կոմկուսը ստանում է 3.700.000 ձայն, մինչդեռ 1920 թ. ստացել էր միայն կես միլիոն:

Անգլիայում Բանվորական կուսակցության և Ֆրանսիայում Պացիֆիզմի «ձախ բլրկի» իշխանության գլուխ անցնելը, մասսաներին համոզում էր, վոր խաղաղ միջոցներով կարելի չէ անցնել սոցիալիզմին, և հնարավոր է՝ պարլամենտական ճանապարհով անցնել պրոլետարական դեկտատուրային: Այս հանգամանքը բացասական ազդեցություն էր ունենում բանվորական շարժման վրա: Այս շրջանը կոչվում է պացիֆիստական, վորի դեմ Կոմիստերնը ուժեղ կռիվ է մղում:

Միլիթարական կողմերից է նաև Խորհրդային Միության տնտեսական կյանքի բարձրացումը, իշխանության ամրացումը, ֆինանսական դրության բարեկարգումը, գյուղացիության հետ ունեցած կապի ամրացումը, Անգլիայի և Իտալիայի կողմից ճանաչումը. այս բոլորը գալիս եյին ուժեղ խթան հանդիսանալու միջազգային պրոլետարիատի հեղափոխական շարժումներին:

1924 թ. հունիսի 17-ին, Մոսկվայում V կոնգրեսը բացվում է և առանց Լենինի: Աշխարհի ամեն ծայրերից ժողովված 287 պատգամավորները իրենց աշխատանքները տանում են Լենինի պատգամներին, հրահանգներին, մեծ ուսուցչի թողած ավանդներին համաձայն:

Կոնգրեսի որակարգն է. 1) միջազգային դրությունը և հեղափոխության հեռանկարները, 2) կոմկուսների բոլորեկանացումը, 3) ծրագրի հաստատումը, 4) կանոնադրությունը, 5) միասնական ֆրոնտ և 6) ընթացիկ հարցեր:

Ընկ. Զինովյեի զեկուցումի հիման վրա, կոնգրեսը գտնում է, վոր միջազգային բուրժուազիան վերջնականապես չհաղթվեց գլխավորապես այն պատճառով, վոր վճռական նշանակու-

Կոմկուսի
նվաճում-
ներ:

Խորհուրդ-
ների նվա-
ճումներ:

Կոմկուսի
բոլորեկան-
ացումը:

թյունն ունեցող յերկրներում դեռ չկային մասնայական կոմունիստական կուսակցություններ, վորոնք ընդունակ լինեյին մասսաներին մղելու դեպի կոիվ, դեպի վերջնական հաղթանակը: III և IV հոնգրեաների բանվորական շարքերի գրավման մասին կայացրած գործնական վորոշումները շատ յերկրների կոմունիստների ղեկավարները սխալ եյին ըմբռնել:

Աջ թեք կարծում եր թե կարեորն այն ե, վոր բանվորների 99% հակվի դեպի կոմկուսը, և մինչ այդ վոչ մի լուրջ հեղափոխական քայլ ափելորդ ե նախաձեռնել, իսկ ձախ թեք այն համոզման եր, վոր կոմունիստական կուսակցությունը պետք ե հանդիսանա պրոլետարիատի ճշմարտական փոքրամասնությունը կազմող կազմակերպություն և չնայած վոչ-մասսայական, բայց և այնպես հարկավոր դեպքում կարող կլինի մասսային մոգական գավազանով տանելու դեպի ընդհանուր կոիվ ճակատը: Կոմունիստական կուսակցության, շարքերում գործող շատ ակտիվիստներ կարծում եյին, թե միասնական Ֆրոնտը պետք ե հասկացվի սոց-դեմ: հետ սերտ միություն, նրանց հետ համերաշխ գործակցությունն ունենալը, առանց պարզ գիտակցելու Կոմինտերնի՝ «դեպի մասսաները» արձակած լոզունգի՝ «շանակությունը»: Այդ առթիվ կոնգրեսը իր թեզիսներում ասում ե. «Կոմունիստական կուսակցությունները սոց-դեմ: հետ ունեցած բանակցությունների ժամանակ պետք ե պահպանեն իրենց ինքնուրույնությունը, իրենց իսկական կոմունիստական ռեմբը»: Դրան համար ել բանակցությունների ամբողջ ընթացքում կոմունիստները պետք ե աշխատեն բանվորների լայն մասսաների ուշադրությունը դարձնել այդ բանակցությունների վրա, վոր նրանք իրագեկ լինեն բոլոր մանրամասնություններին: Կոմինտերնի՝ միասնական ֆրոնտի տակտիկան պահանջում ե միասնականությունն ստեղծել միայն վաղի շերտերի հետ, ուր կան շարքային բանվորներ: Վերի շերտերի հետ (բանվոր - բյուրոկրատների) կազմած ամեն մի «վողջագուրանք» Կոմինտերնը դատապարտելի յե համարում:

Իսկ ինչ վերաբերում ե «բանվորա-գյուղացիական կառավարության լողունգին», Կոմինտերնը հասկանում ե այնպես, ինչ յեզրակացության վոր հանգել ե «միացյալ ֆրոնտի» խնդրում: Վորպեսզի ստեղծել իսկական բանվորական կամ բանվորա-գյուղացիական իշխանություն, անհրաժեշտ ե նախ և առաջ տապալել բուրժուազիային - ահա Կոմինտերնի տեսակետը:

Նույն մասսաներին մոտենալու միջոցը գյուղացներու հա-

մար կոնգրեսը վորոշում ե կազմել ֆարրիկա - գործադանային, բջիջներ, կոմունիստական ուժեղ աշխատանք տանել պրոֆմիտություններում (կոմֆրակցիաներ), ակտիվ մասնակցություն ցույց տալ գյուղացիական և ագգային հարցերում:

Կոմինտերնի բոլոր սեկցիաների ջանքերը պետք ե լինին այն, վոր իրենց կուսակցությունները յենթարկեն բոյլշիկացման: Կոմինտերնը վոչ թե խոսքով, այլ իր գործնելությունամբ պետք ե հանդիսանա մի միջադպային հսկա բոյլշիկյան լենինյան կուսակցություն:

Նոր ծրագիր ունենալու համար կոնգրեսը, լսելով հանձնաժողովի ղեկուցումը, կայացնում ե հետևյալ վորոշումները. 1) հանձնաժողովի կազմած ծրագիրն ընդունել հիմք և դա դնել սեկցիաների ըննության, 2) այդ ծրագիրը վերջնականապես խմբագրել՝ համաձայն հանձնաժողովի յեզրակացություններին, 3) կազմել մշտական ծրագրային հանձնաժողով ու 4) ծրագրի վերջնական հաստատումը թողնել առաջիկա կոնգրեսին: Ծրագիրը իր հիմնական չորս մասերում՝ 1) ցուցադրում ե կապիտալիզմի հասակավորումների հիմքը և նրա եյությունը, վերլուծում ե իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի վերջին մի ետապը՝ վորը առաջացրեց պատերազմը, և նշում ե սոցիալիստական հեղափոխության եպրիսայի սկիզբը. 2) պարզում ե եյությունը կոմունիստական հասարակության, վորտեղ այլևս չեն լինելու կապիտալիզմի շրջանի հակասությունները. 3) ցուցադրում ե անցողական շրջանը, վորի բովանդակությունը պետք ե լինի՝ բուրժուազիայի տապալումը և պրոլետարիատի տիրապետությունը. 4) վերջում մատնացույց ե անում «գիկտատուրային հասնելու ճանապարհը», կուսակցության և նրա դերի մասին, կոմունիզմի մոտեցումը և տակտիկական գանազան պայմաններում...

Բուլղարիայի և Լեհաստանի գյուղացիական շարժումների անհաջողությունները գալիս են տանում վոր գյուղացիների մեջ աշխատանքը թույլ ե տարվում, չնայած վոր II և IV հոնգրեաները այդ առթիվ տվել են մի շարք ցուցմունքներ:

Շնորհիվ գյուղատնտեսության ճգնաժամին, հարկերի ու կապալագների բարձրացման, մանր ագգությունների վրա գործ դրվող ճնշումների ուժեղացման, ամենուրեք գյուղացիությունը ցույց ե տալիս հեղափոխական արամադրություններ և համախմբվում ե դանադան հասարակական կազմակերպությունների շուրջը: Վորպեսզի բուրժուազիան չոգտագործի գյուղական տար-

Կոմինտերնի ծրագիրը:

Գյուղիկներն:

Բանվորա-գյուղ. կառավարության լողունգներին:

րերին, անհրաժեշտ է վոր կոմունիստական կուսակցությունները սերտ մոտենան այդ մասսաներին, ցույց տալով հատուկ ղեկավարություն, շարժումների ժամանակ նրանց աջակցելով:

Դեռ 1923 թ. մարտ ամսին Միջազգային Գյուղացիական համախորհրդակցությունը՝ մի ղեկավար կենտրոնական օրգանի անհրաժեշտությունը զգալով՝ վորոշում է Մոսկվայում հիմնել «Գյուղացիական Ինտերնացիոնալ»:

V կոնգրեսի ուրիշ վորոշումներից հիշենք ազգային խնդրի մասին հիշված բանաձևը, վորը վերաբերում է միջին Յեկ-բուպայի և Բալկանյան Թերակղզու ժողովուրդներին. բանաձևը, մի կողմից՝ դատապարտում է այն կոմունիստներին, վորոնք մանր ազգերին տիրանալու տենչով ելին վարակված, իսկ մյուս կողմից՝ դատապարտում է գլխավորապես զաղութային կոմունիստներին՝ իրենց սեփական «ազգային յուրահատուկ բոլշևիզմի» թեքումների համար: Լենինյան ուղղությամբ՝ կոնգրեսը ընթացք է տալիս Մակեդոնիայի, Թրակիայի, Ուկրաինայի, Հարավ-Սլավիայի, չեխերի, բելոռուսների, լիտվիցիների, մադյարների, տրանսիլվացիների, Դոբրուջայի և Ալբանիայի մի շարք խճճված ազգային հարցերին:

Կոնգրեսը, գտնելով վոր կոմյուներտ Ինտերնացիոնալը խոշոր նվաճումներ է կատարել, առաջարկում է ուժեղացնել լենինյան ուսմունքի տարածումը մասսաների մեջ, լուրջ ուշադրություն դարձնել շարքերի բոլշևիկացման գործին և կամուսնուր վերակազմել գործարանային բջիջների հիմունքներով:

1925 թ. մարտ ամսին հրավիրված կոմիտեների Գործկոմի լայնացրած նստաշրջանում, ուր ներկա էին 34 սեկցիաների 244 պատգամավորներ, քննության առնվեցին մի շարք խնդիրներ, վորոնց կենտրոնական տեղը բռնում էր «միջազգային կապիտալի ստաբիլիզացիան և բանվորական շարժման բնույթը» խնդիրը:

V կոնգրեսը նշել էր միջազգային բուրժուազիայի տնտեսական կյանքի կայունությունը. մինչև նստաշրջանի գումարումը՝ այդ հանգամանքը ավելի ակնհայտնի դարձավ:

1924 թ. դարնանից, գյուղատնտեսության կյանքում տիրող ճգնաժամը արդեն վերացած էր Ամերիկայում, Անգլիայում, Գերմանիայում. նկատվում էր նաև ընդհանրապես տնտեսական կյանքի բարելավումը և ապրանքային փոխանակության զարգացումը: Ամրանում էր բուրժուազիայի ուժը, բանվորների մեջ թուլանում էր հեղափոխության հաղթանակի հավատը, ուժեղանում

էին դեպի պացիֆիստական յերազներն ունեցած տրամադրությունները: Հարց է ծագում, բուրժուազիայի այդ դրությունը յերկարատե՞ պետք է լինի արդյոք: Սոց.-դեմոկրատիան այս հարցին պատասխանում է զրական, իսկ կոմիտեների Գործկոմինըստաշրջանը կրկին անգամ գտնում է, վոր նկատվող ստաբիլիզացիան տեական չէ, դա ժամանակավոր յերևույթ է:

Նստաշրջանը շոշափված հարցերի վերաբերմամբ հանում է վորոշումներ, վորոնք պարտադիր են սեկցիաների համար և պետք է հանդիսանան նրանց հերթական անելիքները. 1) կապիտալիզմի տնտեսական ստաբիլիզացիայի խնդիրը բանի դեռ չէ վերամշակված, կոմիտեների սեկցիաները պետք է կանոնավոր և համառ կերպով ուսումնասիրեն իրենց յերկրների տնտեսական կյանքը, այն պրոցեսները, վորոնցով անցնում է նա, վորպեսզի հարկավոր նյութերը պատրաստ լինին ապագա կոնգրեսին՝ հետագա զարգացման ուղիները վորոշելու համար: Սեկցիաները պետք է ուսումնասիրեն մեր հակառակորդների տնտեսական հարցերին վերաբերող գրականությունը, հետեին տնտեսական կյանքի զարգացման ընթացքին, ուշադիր կերպով հաշվի առնեն բոլոր այն մոմենտները, վորոնք հետաձգում են կապիտալիզմի առողջացման ընթացքը. 2) կոմիտեների V կոնգրեսի կողմից ընդունված գործկալերպը և ստրատեգիան կիրառել կյանքի մեջ ամուր բոլշևիզմի կյանքի բազուկով և վճռականությամբ, հաշվի առնել առանձին յերկրների կոնկրետ պայմանները և բանվորական շարժումների դրության ընդհանուր աստիճանները. 3) ամենուրեք առաջ քաշել բանվոր դասակարգի մասնավոր պահանջները՝ դրանք կապելով մեր շարժումների նպատակների հետ, այն է՝ պրոլետարական դիկտատուրայի իրականացման հետ. 4) պայքարել միասնական պրոֆմիտության սցյուն միջազգային մասշտաբով՝ առանց առիթը ձեռքից տալու և այն իրականացնելու բոլոր յերկրներում, 5) բանվոր դասակարգին ադիտացիոն միջոցներով դաստիարակել բոլշևիկյան վոգով և ուժեղ կերպով կովել կոմկուսների ներսում գոյություն ունեցող թեքումների դեմ, վոր այժմ կոմիտեների գլխավոր հոգսերից մեկն է:

Աննշան բջիջներից՝ դեպի մասսայական կազմակերպություններ, թեթև գործադուլներից՝ դեպի պրոլետարիատի դիկտատուրան—ահա բոլշևիզմի անցած ուղիները, կոմիտեների կատարած հսկա աշխատանքները:

Պրոբետարիատի նորանոր նվաճումների ճամբին Կոմիտեներն էլ
զեկավարում է յանը խոշոր դեր է մեծապահանջ:

Լեւեհեհ ԳԱՏԳԱՄԵՆԵՐԸ ԶԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ	15 Կ.
Լեւեհեհ ԳԱՏԳԱՄԵՆԵՐԸ ԺՈՂ.ԼՈՒՍ.ՄԱՍԻՆ. Կալիցի Կ.ԻճԵՆԱՎԱԿԱՅԱ	20 Կ.
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒԴԻՆ և ԲԱՆ. - ԳՅՈՒՂ. ԴԱՇԻՆՔԸ, — Ն.ԲՈՒԽԱՐԻՆ 1Բ. 25 Կ.	
ՀԱՄ. ԿՈՄ. ԿՈՒՍ. ԳԱՏԳՈՒԹՅՈՒՆԸ, Վ. ՎՈՐԱԿԻԶԻ	1 Բ. 50 Կ.
ԳՅՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ ՀԱՐՑ, Ի. ՍՈՒԼԻՆ	50 Կ.
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ, Ի. ՍՈՒԼԻՆ (272 էջ)	1 Բ. 60 Կ.
1905 թ. ՄԵՐ I ԲԱՆ. - ԳՅՈՒՂ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, Ի.ՅԼԵՐՈՎՍԿԻՅ	70 Կ.
ԻՆՁ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XIX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Ն. ԵԼԻՊԱՐՈՎ	30 Կ.
ԻՆՁ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XV ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ, — Գ. ՌԵԼԼԻՆ	20 Կ.
ԱՆԴԴԻՈՎԱՍԸ 1905-ԻՆ, — Ա. ԿԱՐԵՆՅԱՆԻ	70 Կ.
ԻՆՁՊԵՍ ԱՇԽՈՒԺԱՅԵՆԻ ԳՅՈՒՂԱՆՐՀՈՒՐԴՆԵՐԸ, — Զ. ԼԱՎՐԵՆՏԻ	30 Կ.
ԵՒ. ՍՏԱԼԻՆ» (Համառ. Կենսագր.)	7 Կ.
ԿԼԱՐԱ ՑԵՏԻՆ (Կենսագր.), Զ. ԲՈՅԱՐԱԿԱՅԱ	15 Կ.
ԽՍՀՆ և ԱՐԵՎԵԼԻՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ, Ա. ԱՐԶԱՐՈՆԻ	30 Կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (Կոմս. հմբ.), ԲԱՆՎԻՐԳԱՆԻԿԱՆ, ՎՐԱԿ I,	50 Կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " " ՎՐԱԿ II,	50 Կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " " ՎՐԱԿ III,	50 Կ.
ՊԱՏԵՐԱԶՄ ԶԵՆԲ ՈՒԶՈՒՄ, ԲԱՅՑ ԴԻՄԱՆԴ. ՊԱՏՐԱՍ ԵՆՔ	10 Կ.
ԻՆՁՈՎ Ե ՈՒՃԵՂ ԿԱՐԱՄԵՐ ԲԱՆԱԿԸ	15 Կ.
ՄԱՐԴՈՒ և ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ, — Գ. ԱՂՈՒ	35 Կ.
ԻՆՁՊԵՍ Ե ԱՌԱՋ. և ԶԱՐԳ. ԿՑԱՆՔԸ ՑԵՐԿԻՐ ՎՐԱ, Մ.ԳՐԵՄՅԱԳԼԻՅ	50 Կ.
ԻՆՁՊԵՍ Ե ՍԱՐՔՂԱՍ ՏԻՑԵԶԵՐՔԸ, ԱԿԱԳԵԼԻԿՈՍ Դ. ԴՐԱՎԵ	50 Կ.
ՎՈՐՈՏ, ԿԱՅՄԱԿ և ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Մ. ԳՐԵՄՅԱԳԼԻՅ	40 Կ.
ԱՐԵՎԸ, ՆՐԱ ՎՈՐԴՆԵՐԸ և ԹՈՌՆԵՐԸ, — Բ. ՍԵՆԵԼԻՆ	40 Կ.
ՄԱՐԴՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹՇՆԱՄԵՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄԵՆԵՐԸ.	15 Կ.
ՄԱՐԴԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳԱՏԳՈՒԹՅՈՒՆԸ, — Վ. ՅԱՎԼԵԳԼԻՅ	15 Կ.
ԹԵ ԻՆՁՊԵՍ ԿԱՐԵԼԻՅ ԶԵ ԳՅՈՒՂ. ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹ. ԱՆՑԿԱՅԵՆԻ	20 Կ.
ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ և ՄԱՆՀԱՎՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ, — Վ. ԴԱՄԵՐԵԽԻՎԱ	15 Կ.
ԳԵՂ ԿԱՆԳԵՆ — ԳԵՐԱՆ ԿԿՈՐԻ (Կոնպերացիան գյուղում), Լ. Ի.	30 Կ.
ԱՍՏՄՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, — Ի. Պ.	20 Կ.
ԳՅՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹ. ԱՅՔՈՒԲԵՆԸ	30 Կ.
ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԶԵՐԱՇԵՐ ԺԱՄԱՆԱԿ, — Պ. ՎԼԱՍՈՎ,	40 Կ.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ, — Մ. ԼԻՎԻՆՍԿԻՅ	20 Կ.
ԱՌԱՋԻՆ ՈՂԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԻ ԿԵՆԴԱՆՈՒՆ, — Ա. ՍԼՈՒՄԵՐԵՆՈՎ	17 Կ.
ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՆ Զ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	17 Կ.

Ինքնագիր ԸՆՏՐԵԼ ԿԱԹՆԱՌԱՏ ԿՈՎ, — Բ. Սկոմբուրով	12 կ.
ԽՈՉԸ ԳՅՈՒՂԱՑՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե, — Լիխաչև	18 կ.
ՄՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ, — Գ. Սպեբանսկի	16 կ.
ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, — Բ. Գինարով	30 կ.
ԳՅՈՒՂԱՑ. ՊԱՆԱՆՆԵՐԸ և ԽՈՐՀՐԴ. ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐՆԵՐԸ	12 կ.
ԳԵՂՋԿՈՒՀԻՆ և ՅԵՐԵԽԱՆԵՐԸ	25 կ.
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ I ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՑՈՒՄ, Բ. Ժավորոսկով	65 կ.
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ (ռուսացիներին համար)	70 կ.
ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐ (ժողովածու)	60 կ.
ՊԻՈՆԵՐ, ՊԱՆԱՆԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԴ, — Յե. Ռադկն	10 կ.
ՊԻՈՆԵՐ, ՀԵՏԵՎԻՐ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՆ	15 կ.
ԼԻՆԻՆԻ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ, Ն. Ֆայլկեր. մաս I,	40 կ.
ԼԻՆԻՆԻ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ " մաս II,	45 կ.
ԲՈՍ, ԻՆԶՊԵՍ ԿՈՎԵԼ ՆՐԱ ԴԵՄ, — Բ. Նադեյժին	20 կ.
ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, — Վ. Բրոնսեր	25 կ.
ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ և ԴՊՐՈՑԸ	40 կ.
ՄԵՐ ԱՎԱԳ ՅԵՂԱՅԵՐՆԵՐԸ — ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ	20 կ.
ԹԵ ԻՆԶՊԵՍ ՍԱԲՈՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՐՁԱՎ — Կրավչենկո	35 կ.
ԿԱՐՄԻՐԱՌՈՐԹՆԵՐԸ, — Պ. Խլիբնիկով	45 կ.
ՅԵՐԿԻՐ ԽՈՐԲԵՐՈՒՄ, — Ա. Կուլարին	18 կ.
ԲԻՄԻԿՈՍ ԿՈՒՋԿԱՆ, — Պ. Ուլովսկի	28 կ.
ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՂԱՆՈՎ, — Պ. Ուլովսկի	22 կ.
ՄՈՐԱԿԻ և ԱՐՋԻ ՄԱՍԻՆ (հեքիաթ) — Գ. Մամին-Սիբիրյակ	15 կ.
ԻՆԶՊ. ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿԱՆՆԵՐԸ և ԻՆԶ ԱՐԵՑ ԱՐՃԻՃԵ ՋԻՆՎՈՐԸ	16 կ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ, — Յե. Ֆոկս	18 կ.
ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ, — Եղմանդո Դամիչև	12 կ.
ՓՈԲՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ, — Ուլյա	12 կ.
ԹԻՉՈՒՆՆԵՐ (գուհարիկ ալբոմ յերեխաների համար)	25 կ.
Ն. ՊԱՐՈՆՅԱՆ (ընտիր յերկեր), Կրակ առաջին	40 կ.
» » » » » յերկրորդ	35 կ.
» » » » » յերկրորդ	35 կ.
ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԴՐՈՂԸ, ՄԱՐԴԸ, — Մաքսիմ Գորկի	15 կ.
ՊԱՄՎԱԾՔՆԵՐ, — Ա. Սիբիրյակով	45 կ.
ՄՐԿԱՀԱՎԸ ՅԵՎ ՈՒՐԻՇ ՊԱՄՎԱԾՔՆԵՐ, — Մաքսիմ Գորկի	15 կ.
ԱՐՏԱՍՈՎՈՐԸ, Մաքսիմ Գորկի	40 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐ. ՀԱՄԱՐ
 ՊԱՄՎԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՉՄ (բրիտանական, 15 մամուլ)
 ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ
 ԲԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՌԴԻՐԲ (15 մամուլ)
 ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ
 ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՄՎԱԾՔՆԵՐ (նկարազարդ), 15 գրքույկ.
 ՊԱՄՎԱԾՔՆԵՐ ՌՈՒՍ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐՈՂՆԵՐԻՑ, 15 գրքույկ.
 ՅԵՎ ՈՒՐԻՇ ԴՐՔԵՐ (պահանջեցեք մեր գրացուցակը):

<< Ազգային գրադարան



NL0189098



СЕРО МАНУЦЯН
Т Р И
ИНТЕРНАЦИОНАЛА.

На армянском яз.

Центральное Изда
Москва,

Народов Союза С. С. Р.
Никольская, 10.